United Nations
Educational, Scientific and
Cultural Organization

ISBN 978-99941-831-1-1

*Այս ձեռնարկը պատրաստվել է*
*«Հայ ժողովրդական երաժշտության պահպանման» ՀԿ-ի կողմից*

*աջակցությամբ`*
*ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության*

*ՅՈՒՆԵՍԿՕ-յի և* ***Japanese Funds-in-Trust****-ի*

*ի նպաստ մարդկության ոչ նյութական մշակութային արժեքների*
*պահպանման և տարածման գործին*

**Produced by the “SSAFM” and the Ministry of Culture and Youth affaires of RA**

Produced with the support of UNESCO and the Japanese Funds-in-Trust for the Preservation and Promotion of Intangible Cultural Heritage

The authors are responsible for the choice and the presentation of the facts contained in this publication and for the opinions expressed therein, which are not necessarily those of UNESCO and do not commit theOrganization.

դուդուկն այսօր
5

պատմական ակնարկ
10

դուդուկահարներ
24

կառուցվածքը
60

պատրաստող վարպետներ
62

վարպետության խորհուրդներ
էջ 72

երաժշտական նմուշներ
78

summary
101

# դուդուկը



ակտուալ արվեստ երևան 2007

Հայ ժողովրդական երաժշտության պահպանման կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել և օգնել են այս գրքի ստեղծմանը

«ՀԺԵՊ»-ն առանձնահատուկ շնորհակալություն է հայտնում
ՀՀ Ազգային հեռուստատեսության տնօրինությանը՝ արխիվային տեսանյութեր տրամադրելու համար

Այս ձեռնարկում տեղ են գտել
կոմպոզիտոր՝ Վաչե Շարաֆյանի,
երաժշտագետ՝ Անահիտ Կիրակոսյանի,
արվեստագետ՝ Հռիփսիմե Պիկիչյանի,
դուդուկահար՝ Գևորգ Դաբաղյանի
աշխատությունները





դուդուկի ձայնը արդեն շատ խորհրդավոր է և հոգու մեջ կմխրճվի: Կարիք էլ չկա դուդուկին ավելի ողբերգական հնչերանգ տալ՝ դուդուկը դրա համար չի...դուդուկի նման պարեցնող չկա:

ԼԵՎՈՆ ՄԱԴՈՅԱՆ

# դուդուկն այսօր





Ժամանակը, ձևավորելով նորը, հաճախ միաժամանակ հերքում է հին պատկերացումները, հայացքները: Դուդուկն՝ ինչպիսին մենք գիտենք այն այսօր, ձևավորվել է հազարամյակների ընթացքում: Անընդմեջ ձևափոխվելով, այն ընդունել է այն տեսքն ու հնչողությունը, որոնք անհրաժեշտ էին, որպեսզի դուդուկը ստեղծող ժողովուրդը կարողանար նրա օգնությամբ արտահայտել դարերով կուտակված իր զգացմունքները, իմաստությունը: Խոսելով դուդուկի մասին, պետք է հաշվի առնել ոչ միայն գործիքի, այլ նաև կատարողական արվեստի ձևավորվելը:

Դուդուկն ունի մի շարք նմանատիպ գործիքներ, որոնք ձևավորվեցին այլ ժողովուրդների մոտ: Այդպիսիք են՝ պարսկական բալաբան-ը, թուրքական մեյ-ը, վրացական դուդուկի-ն: Վերջիններս ստեղծվեցին ուրիշ ժողովուրդների կողմից՝ համապատասխանեցվելով նրանց պահանջներին, և իհարկե, տարբերություններն ակնհայտ են. ինչպես արտաքին՝ գործիքի պատրաստման, այնպես էլ կատարողական արվեստի, հնչողության առումով:

Հայկական դուդուկի հնչողությունն է առավել գերում ունկնդիրների հոգիները: Այն փոխանցում է լսողներին համամարդկային բարձր արժեքներ և դրանով համաշխարհային նշանակություն է ստանում: Հնարավոր է, որ դուդուկն ունի համամարդկային ինքնաճանաչողության համար մի շատ կարևոր առաքելություն: Նրանում, կարծես թե մեր նախնիների խոսքը կա՝ ուղղված մեզ բոլորիս: Հայ ժողովրդի համար դուդուկը հանդիսանում է մեր մի քանի հազարամյա պատմության իսկական մարմնացում: Մարմնացում, որի մեջ թաքնված է հայոց դարավոր հոգին: Մեր դուդուկի ազգային արժեքը համեմատելի է վրացական բազմաձայնության, ադրբեջանական մուղամի հետ: Դուդուկի մեջ թաքնված է մեր ժողովրդի պատմական հիշողությունը, այն հզոր ուժն ու կամքը, որոնք ամենաբարդ, դժվարին պահերին օգնել են դիմակայել: Զարմանալիորեն դուդուկն ուեկցում է ժողովրդին ինչպես հարսանիքների ժամանակ, այնպես էլ ամենատխուր պահերին:

Դուդուկի ձայնածավալն ու հնչողությունը շատ մոտ են մարդկային ձայնին, ինչը շատ հարմար է դարձնում ժողովրդական երգերի մեղեդիներ նվագելը դուդուկով: Շատ դեպքերում դուդուկահարները ոչ միայն նվագում են, այլ նաև երգում իրենց ելույթների ժամանակ, ինչպես, օրինակ, Ջիվան Գասպարյանը, իսկ Վաչե Հովսեփյանը մի քանի երգերի հեղինակ էր նաև: Դուդուկի կապը ձայնի հետ էլ ավելի է ամրապնդում կապը հայերեն լեզվի հետ: Այսպիսով, դուդուկի երաժշտությունը ժառանգում է հայերեն լեզվին բնորոշ մի հարուստ ինտոնացիոն հնչյունային աշխարհ, որն ընդգրկում է հայերենի գրեթե բոլոր բարբառները, ինչպես նաև գուսանական, աշուղական երաժշտությունը: Այն ընդգրկում է Սայաթ-Նովայի բազում երգերի կատարումը: Մեծ է նրա կապը նաև հայ դասական պոեզիայի հետ, հատկապես, Ավետիք Իսահակյանի պոեզիայի հետ:

Դուդուկին նմանատիպ գործիքներ կան տարբեր ազգերի մոտ՝ կան, օրինակ, վրացական, եգիպտական, աղվանական, թուրքական, պարսկական տարատեսակներ: Սակայն հայկական դուդուկն է, որ ստացավ համաշխարհային ճանաչում:

Այսօր Վաչե Հովսեփյանի, Ջիվան Գասպարյանի, Գևորգ Դաբաղյանի նվագը հնչում է բազմաթիվ հանրահայտ արտասահմանյան ֆիլմերում, ինչպիսին են՝ «Քրիստոսի վերջին փորձությունը», «Գլադիատոր», «Եվգենի Օնեգին», «Արարատ», «Սոխակների բույնը» և բազում այլ ֆիլմեր:

Դուդուկն՝ ինչպիսին մենք գիտենք այն այսօր, ձևավորվել է ոչ շատ հնում, սակայն, միաժամանակ, այն կարող է համարվել շատ այլ ձևավորված եվրոպական գործիքների պահպանված նախահայր: Պարզապես այս գործիքի զարգացումը գնացել է ոչ թե տեխնիկական զարգացման, այլ մի լրիվ ուրիշ ճանապարհով: Իրապես՝ մեր քաղաքակրթությունը հիմնականում ընթանում է տեխնիկական, նյութական զարգացման ճանապարհով: Արևմտյան երաժշտական գործիքները կատարելագործված են, նրանց ձայնածավալը հնարավորին չափով ընդլայնված է: Փականների օգնությամբ մշակվել է մատների հստակ ապլիկատուրա, ինչը հնարավորություն է տալիս հմուտ կատարողին փայլուն կերպով ցույց տալ իր վիրտուոզ արվեստը: Դուդուկն իր սահմանափակ հնչյունաշարով երբեք չի կարող մրցակցել կլարնետի կամ հոբոյի վիրտուոզ հնարավորությունների հետ: Սակայն դրա կարիքը երբեք չի զգացվում, երբ դուդուկն է հնչում: Այս գործիքը զարգացել է հոգևոր խտացման ճանապարհով: Այն ստեղծող ժողովուրդը նրա միջոցով արտահայտել է ինքն իրեն, իր պատմական հիշողությունը, դարերով կուտակված զգացմունքները, ձևավորված իմաստությունը: Դուդուկը մեր ժողովրդի հոգու ճիչն է:

Դուդուկը հատկապես գեղեցիկ է հնչում իր բնական շրջապատում, այսինքն՝ դուդուկի զուգերգում՝ մենակատար դուդուկ և դամը պահող դուդուկ, կամ էլ դուդուկի եռյակում՝



մենակատար դուդուկ, դամ տահող դուդուկ և դհոլ: Վերջինս ավելի բնորոշ է տարային երաժշտությանը: Հատկանշական է դամի դերը՝ այն ստեղծում է մի վիճակ լսողի մոտ, որը դուրս է ժամանակի սահմաններից, մոտեցնելով անսահմանին, անվերջին:

Ժողգործիքների մեծ նվագախմբերը, որոնք ի հայտ եկան խորհրդային շրջանում, անպայման իրենց կազմում ունեին դուդուկներ: Սակայն նման մեծ կազմերում նվագելը մեծ կորուստներ էր առաջ բերում դուդուկի և ոչ միայն դուդուկի համար, քանի որ բոլոր գործիքները ստիպված էին լինում նվագել եվրոպական տեմպերացիայի շրջանակներում, որպեսզի մաքուր հնչողություն ստացվեր: Իսկ նման նվագը անխուսափելիորեն ծնում էր անդեմ և կեղծ հնչողություն:

Այսօր մեր դուդուկը դուրս է եկել Հայաստանի սահմաններից: Այն հնչում է աշխարհով մեկ: Սա հիանալի է, բայց և ունի իր վտանգավոր կողմերը: Նման պայմաններում վտանգ է առաջանում, որ դուդուկը կարող է դառնալ այլ ազգերի պահանջարկները բավարարող մի գործիք: Շատ կարևոր է, որ ստեղծված պայմաններում պահպանվի ավանդական դուդուկի ինքնությունը՝ միևնույն ժամանակ չփակելով դռները անխուսափելի նորանոր ճանապարհների առաջ: Առաջին կայացած տարբերակը դուդուկի օգտագործման դասական ժամանակակից երաժշտության մեջ արեց կոմպոզիտոր Ավետ Տերտերյանը իր 3-րդ սիմֆոնիայում: Նա հիմքերը դրեց նոր գեղագիտական մոտեցումի, որում դուդուկը ձցվեց սիմֆոնիկ նվագախումբ՝ լիովին պահելով իր ավանդական հնչողությունը, իմաստը: Միայն նման պարագայում դուդուկի օգտագործումը կարող էր արդարացված լինել, քանի որ այն, հնչելով լրիվ այլ աշխարհի գործիքների հետ, միաժամանակ, չէր կորցնում իր բնությունը:

Կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանը գրեց ստեղծագործությունների մի ամբողջ շարք, որոնցում դուդուկը հնչեց ինչպես դասական նվագախմբի, այնպես էլ բազմաթիվ այլ կամերային կազմերի հետ: Նրա «Արև, գինի և ժամանակի քամի», «Ակացիաների երգի առավոտյան բուրմունքը» ստեղծագործությունները ընտրվեցին աշխարհահռչակ թավջութակահար Յո-Յո Մա-յի կողմից ստեղծված «Մետաքսի ճանապարհ» ծրագրի նվագացանկի մեջ, որի դուդուկահարը դարձավ Գևորգ Դաբաղյանը: Վերոհիշյալ ստեղծագործությունները Դաբաղյանը մեծ հաջողությամբ նվագեց Յո-Յո Մա-յի և «Մետաքսի ճանապարհ» անսամբլի հետ՝ Եվրոպայի, ԱՄՆ-ի բազմաթիվ հանրահայտ բեմերում: Վաչե Շարաֆյանի «Իմ բարձրագնայ լուսին» ստեղծագործության մեջ կոմպոզիտորը, եվրոպական գործիքների հետ միասին, օգտագործեց դուդուկը, զուռնան, նաև ճապոնական շո-ն, չինական շենգ-ը, արաբական քանոնը: Այս գործը փայլուն կերպով Գևորգ Դաբաղյանը նվագեց «Ատլաս» անսամբլի՝ հետ Ամստերդամի «Մյուզիկղեբաու» դահլիճում:

Այս ստեղծագործությունների հիմքում ձևավորվել է մի նոր գեղագիտական մոտեցում, ուր ավանդական գործիքները չեն խառնվում իրար, այլ մնում են իրենց բնության մեջ, ներկայացնելով իրենց ազգային անհատականությունը, բայց և՝ գտնելով ընդհանուր եզրեր: Այս էսթետիկան մեր աշխարհի յուրատիպ «երաժշտական մոդելն» է, ուր տարբեր, նույնիսկ, երբեմն, իրար հերքող աշխարհայացք ունեցող ազգեր, ապրում են՝ գտնելով կամ չգտնելով ընդհանուր եզրեր:











# պատմական ակնարկ

*Դուդուկն ունի իր ներքին էությունը: Այսօր այն խորախորհուրդ բացվում է աշխարհին՝ որպես մեր ազգի կանչ, մեր ժողովրդի ոգի: Այդ փոքրիկ, փոքրիկ նվագարանը մեծագործության հրաշքներ է անում:*

*Էդվարդ Միրզոյան*

## ԴՈՒԴՈՒԿ. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՌԻՓՍԻՄԵ ՊԻԿԻՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ

Դուդուկի ընտանիքի նվագարանների տարածման արեալը խիստ ընդգրկուն է. Ասորեստան, Փռյուգիա, Հունաստան, Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան, Արաբական աշխարհ, Միջին Ասիայի ու Կովկասի երկրներ:

21-րդ դարում դրանց ցանկն ավելի ու ավելի է ընդարձակվում: Տարբեր ժողովրդական մշակույթներում նվագարանի անվանումներն են՝ դուդուկ, փող, գլանափող, նայ, նեյ, դավալ, ծիրանափող (հայեր), ավլոս (հույներ), դուդուկի (վրացիներ), դուդուկ, բալաման, յաստի բալաման (ադրբեջանցիներ), յաստի բալաբան /դաղստանցիներ), դուդուկ (կաբարդինո-բալկարներ), գուան (չինացիներ), նայա (քրդեր) :

Պատկանում է մունդշտուկավոր, երկլեզվակ, փայտե փողայինների շարքին՝ գլանաձև հոբոյների ընտանիքին: Դուդուկի նախատիպերը հայտնաբերվել են եգիպտական դամբարաններում, և ըստ գիտնականների՝ շուրջ 4000 տարվա վաղեմություն ունեն:

Ներկա ուսումնասիրության մեջ չենք անդրադառնալու նվագարանի ծագման խնդրին, քանզի այն դեռևս վերջնական լուծում չի ստացել համեմատական երաժշտագիտության ծիրում: Կարող ենք սոսկ փաստել մեր դիրքորոշումն այն մասնագետների օգտին, ըստ որոնց, ծագումնաբանությունից պակաս կարևոր չէ որևէ ժողովրդի ներդրումը տվյալ նվագարանի զարգացման ու կատարելագործման ասպարեզում: Հույժ կարևոր է, թե ի՞նչ տարածքային շառավիղ է ընդգրկում նվագարանը հիշյալ երկրի ներսում, կամ կենցաղավարման ու ժամանակային ի՞նչ մակարդակներով է սերտաճել տվյալ ժողովրդի առտնին և տոնական-ծիսական կյանքին: Այս դիտանկյունով քննության պարագային՝ դուդուկն, իրոք, կարելի է անվանել հայկական նվագարան:

Կովկասի տարբեր ժողովուրդների շրջանում տարածված ու սիրված դուդուկները մինչև 20-րդ դ. սկիզբը համանման կառուցվածք ու չափսեր են ունեցել, իսկ կատարման կերպը եղել է նույնը, ինչ հոբոյների ընտանիքի մյուս նվագարաններինը :

Արդ, անդրադառնանք դուդուկի հակիրճ նկարագրությանը. նվագարանը բաղկացած է իրանից և կրկնակի լեզվակավոր մունդշտուկից: Իրանը գլանաձև բաց փող է, որը Հայաստանում առավելապես ծիրանենու փայտից է պատրաստվում (այստեղից էլ՝ նրան երբեմն տրվող ծիրանափող անվանումը): Ավանդույթի համաձայն, ցանկալի հնչողություն ապահովելու նպատակով, դուդուկի փողը պատրաստում էին յոթ տարի չորացրած ծիրանենու փայտից: Նկատենք, որ հայոց կենցաղում հանդիպում են վայրի տանձենուց պատրաստված փողեր ևս: Օրինակ՝ համշենահայերի շրջանում և այն բնակավայրերում, որտեղ ծիրանենի չէր աճում, դուդուկի համար հումք էին ծառայում նաև վայրի խնձորենու, սալորենու, տանձենու և թթենու փայտատեսակները, թեև արհեստավարժ նվագարանագործները նախընտրությունը միշտ ծիրանենուն էին տալիս:

Իրանի գլխիկի ուռուցիկ մասում ամրացվում է եղեգնյա մունդշտուկը, որի լարվածքը կարգավորելու նպատակով, միջին մասում, խաղողի որթի «մատների» ճկվող մասից պատրաստված ձվածիր օղակ է հագցվում: Մունդշտուկի լեզվակները պահպանելու համար՝ նմանատիպ մի օղակ են դնում նաև բերանի մասին, որին պտկալ են անվանում: Փողի երեսին բացվում է յոթ կամ ութ ձայնավերարտադրման անցք, իսկ հակառակ կողմում՝ մեկ (1-ին և 2-րդ ձայնանցքերի միջին դիրքի ուղղությամբ): Ձայնանցքերի դասավորությունը հավասարաչափ է կամ՝ խմբերով: Հնչյունաշարը դիատոնիկ է: Ձայնանցքերը կիսով չափ բացել-փակելու շնորհիվ՝ վարպետ կատարողները կարող են հնչեցնել նաև խրոմատիկ հնչյունաշար: Ձայնաշարը՝ փոքր օկտավայի a - f 2: Թեև դուդուկն օբերտոններ չունի, այնուամենայնիվ, վարպետ երաժիշտները, ապլիկատուրային հնարքների շնորհիվ, կարողանում են վերին ռեգիստրում 2 հավելյալ ձայն ևս ստանալ: Տարածված են դուդուկի մեծ (40,5սմ X 1,6 սմ), միջին (33,5 սմ X 1սմ) և փոքր (25,5սմ X 0,6սմ) տեսակները:









Պատրաստման և կատարողական տեխնիկայի բարդությունների առումով, սրնգային ու սուլիչային ընտանիքի նվագարանների նման, դուդուկը հասու չէ յուրաքանչյուր օժտված մարդու, այսու, զուռնայի հետ միասին, ժողովրդաարոֆեսիոնալ նվագարանների դասին է պատկանում: Այսուհանդերձ, դժվար է հայկական միջավայրում գտնել որևէ ավանդական բնակավայր, որտեղ դուդուկահարների գոնե մեկ խումբ` դաստա չլինի: Հայ գիտնականներից ու երաժիշտներից շատերն են անդրադարձել դուդուկի պատրաստման, կատարողական ու կենցաղավարման ավանդույթներին (Կոմիտաս [4], Ա. Քոչարյան [5], Սրբ. Լիսիցյան [6], Կ. Մկրտչյան[7], Ա. Աճեմյան [8], Կ. Խուդաբաշյան [9], Ս. Հովհաննիսյան[10] և այլք):

Ա. Քոչարյանն իր ատենախոսության մեջ[11] համեմատում է հայկական, կովկասյան, եգիպտական ու ճապոնական դուդուկների հնչյունաշարերը` ներկայացնում դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Երաժշտագետը փաստում է, որ C, D, E, F, G, A, H հնչյունները նույնությամբ կրկնվում են նշված բոլոր ժողովուրդների նվագարանների հնչյունաշարերում (նկատելով, որ հայկականում f-ը փոքր-ինչ բարձր է հնչում): Երաժշտագետի կարծիքով, դրանց տարբերությունը դուդուկի ձայնաշարի 1-ին հնչյունի մեջ է. հայկականում` A-ն, իսկ մնացյալների մոտ` B-ն է փոքր-ինչ ցածր հնչում: Ըստ հեղինակի դիտարկումների, Հին եգիպտականում և ճապոնականում հանդիպող ES-ը հայկականում ու կովկասյանում բացակայում է, իսկ հայկականում, ի տարբերություն մյուս թվարկվածների, բացակայում է B-ն, թեև H-ը հանդես է գալիս իջեցման սլաքով: Հին եգիպտական դուդուկը մյուս բոլորից առանձնանում է նաև 2-րդ B-ով, որն այս անգամ արդեն փոքր-ինչ բարձր հնչողություն ունի: Իսկ հայկական դուդուկի հիմնական հնչյունաշարում հանդիպում են C և D ձայնաստիճանները, որոնք բացակայում են մյուս ժողովուրդների նվագարաններում: Չնայած այս տարբերություններին, նշում է Ա. Քոչարյանը, 9, 10, կամ 11 աստիճանանոց հնչյունաշարերի 7 ձայնաստիճանները բացարձակապես նույնն են: Ուշագրավ է, որ հին եգիպտական դուդուկն իր սույն հնչյունակազմը պահպանել է շուրջ 4000 տարի, գոյատևելով նաև Ճապոնիայում, Չինաստանում ու Կովկասում` նկատում է երաժշտագետը :

Նվագարանն ունի փափուկ, թավշյա տեմբր և լայն տեխնիկական հնարավորություններ, որոնք թույլ են տալիս բազմաբնույթ երգացանկ ունենալ` բարդ, հանպատրաստից հորինվող (հանկարծաբանություն, իմպրովիզացիա) ստեղծագործություններից (ինչպիսիք են` լայնաշունչ ու ծավալուն մուղամները), մինչև թախծոտ մեղեդիներ և ուրախ պարեր:

Դուդուկի կատարողական տեխնիկական հնարավորությունների և տեմպերացիայի խնդիրները մանրակրկիտ քննության է առել Ս. Հովհաննիսյանն իր «Հայկական ժողովրդական գործիք` դուդուկը» հոդվածում[13]:

Դուդուկն անսամբլային նվագարան է. ավանդական անսամբլը կազմվում է 2 դուդուկից. առաջինը մայր եղանակն է նվագում բերանի շնչառությամբ, իսկ երկրորդը նվագակցում է` դամքաշ. շղթայական կամ քթի շնչառությամբ: Մեղեդու ռիթմիկ պատկերն ընդգծելու համար խումբը համալրվում է ավանդական հարկանային նվագարաններով` դափ, դհոլ: Քաղաքային մշակույթում, հատկապես 20-21-րդ դդ., ավանդականին զուգահեռ, հանդիպում են նաև 3 կամ 4 դուդուկից և հարկանային նվագարանից կազմված նվագախմբեր: Քաղաքային համույթներում և սազանդարների խմբերում դուդուկին հաճախ ընկերակցել են լարային նվագարանները` քամանչան, քեմանին, ջութակը, թառը, երբեմն նաև` սազը:

Հայ երաժիշտներն ու նվագարանագործ վարպետները տարբերաբար փորձել են կատարելագործել նվագարանի տեխնիկական ու կատարողական հնարավորությունները: 1920-30 -ական թթ. «արևելյան սիմֆոնիկ նվագախմբի» համար Վարդան Բունին վերակառուցեց նվագարանը` ստեղծելով երեք նոր տարբերակ:

Արևելյան երաժշտախմբերի ավանդույթի փոխակերպումները դրսևորվեցին նաև բժիշկ Իոննիսյանի (Բաքու) և Ա. Պետրոսյանցի (Ուզբեկստան) ստեղծած նվագախմբերում: Մեր օրերում ևս, նվագարանը շարունակում է նպաստել երաժիշտների ու վարպետների մտքի թռիչքին, որի շնորհիվ ծնվում են թե՛ ավանդականի վերափոխված տարբերակներ, թե՛ արդի երաժշտական պատկերացումներին համահունչ ամբողջական ընտանիքներ (հիշենք Գ. Մինասովի և Ռ. Ռուշանյանի ստեղծած նվագարանները)[14]:







Փորձենք դիտարկել դուդուկի կենցաղավարումը` մեր ժողովրդի ավանդական կյանքում: Դուդուկը հնչել է ավանդական տոների ու հանդիսությունների (Բարեկենդան, Տրնդեզ, Զատիկ, Համբարձում, Վարթևոր, նախրաթող, մատաղ, ուխտագնացություններ, առաջնեկի ծնունդ, նշանադրություն, հարսանիք, թաղման ծես և այլն) ընթացքում: Շատ բնակավայրերում ընդունված էր դուդուկ նվագել նաև հիվանդի մոտ, որ նյարդերը խաղաղվեն և առողջանա (հոգևոր ներդաշնակ վիճակ ապահովելու ակնկալությամբ): Զուռնայի նման, այն ևս համարվում է տղամարդու նվագարան, քանզի ուղղաձիգ դիրք ունեցող երաժշտական փողի օգտագործումը կնոջ կողմից անպարկեշտություն էր ընկալվում: Այստեղ, անկասկած, չի կարելի անտեսել կատարման տեխնիկայի հետ կապված բարդությունը: Հիշենք նաև, որ զուռնաչի-դուդուկահար իրողությունները, մեծավ մասամբ, հավասարեցվում էին, քանզի հիշյալ նվագարանների կատարման տեխնիկան հիմնականում նույնն էր: Դրանով է բացատրվում այն փաստը, որ ավանդական հասարակությունում, յուրաքանչյուր զուռնաչի փակ տարածքներում կարող էր դուդուկ նվագել, իսկ բացօթյա հանդիսություններին` զուռնա, թեև արդեն 19-րդ դարից սկսած, նկատելի էր դուդուկ ու զուռնա նվագող վարպետների տարբերակումն ու առանձնացումը: Նվագարանի կիրառության գերադասելի վայրն ուղղակիորեն կապվում է նրա հնչողության ու տեմբրի հետ, ուստի դուդուկի ժողովրդական գործառույթն առավելապես աղերսվում է մտերմիկ, կամերային ընկալումներին, որը դույզն ինչ չի սահմանափակում նրա երգացանկի ժանրա-թեմատիկ հնարավորությունները: Օրինակ, հարսանեկան ծիսակարգում այն հնչում է խնջույքի սեղանի շուրջ. թե՛ խոհափիլիսոփայական մեղեդիների ու մուղամների, թե՛ տարաբնույթ երգերի ու պարային նվագների ժամանակ: Ուշագրավ է, որ նվագարանին համահունչ, ավանդական հասարակությունում տարբերակվել է նաև երաժիշտ վարպետի կերպարի ընկալումն ու նրա հանդեպ եղած վերաբերմունքը. օրինակ, եթե զուռնաչին պտղաբերության ու նոր կյանքի սկիզբ ակնկալող արարողակարգերում ծիսական առաջնորդի դերն էր ստանձնում, կամ գործուն մասնակցություն ու առաջնային դերակատարում ուներ համայնքի կյանքում[15], ապա դուդուկահարն ավելի ներդաշնակ էր դիտվում մտերմիկ, խոհական, զգայական ու խաղաղ իրավիճակներում, ուր նրա հնչյուններն անսահմանափակ իշխանություն և ազդեցություն էին ստանում ունկնդրի հոգեվիճակների ու մտքի ծիրում: Մեզ հանդիպած բանասացների հիմնական մասը դուդուկի հնչողությունը` տեմբրը, համարում է «հայի հոգու ձայն» և, անկախ նվագարանի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, փորձում է դրանով բացատրել նրա ծագումնաբանությունը:

Թե´ գեղջկական, թե´ քաղաքային մշակույթներում, խնջույքների ու մտերմիկ հավաքույթների ընթացքում, դուդուկն ամենասիրելի ու տարածված նվագարաններից է, իսկ դուդուկահարը` ցանկալի հյուր ու մասնակից, երբ տոնակատարության բուռն ու հանդիսավոր մասից, որ հիմնականում զուռնայի մենաշնորհն էր, անցում էր կատարվում ավելի զգայական, խոհական իրավիճակներին, անցյալի հիշողություններին կամ հնչում էր երգը: Համայնքային բազմամարդ տոներից զատ, դուդուկը հնչում էր փոքրաթիվ, մտերմիկ հավաքույթների ժամանակ, ինչպես` երեկոյան հանգստի ու ժամանցի ընթացքում: Քաղաքային արհեստավորների միջավայրում` հատկապես Գյումրիում ու Թիֆլիսում, նվագարանի ու երաժշտի նկատմամբ առանձնահատուկ հարգալից վերաբերմունք է դրսևորվում, որը գյուղական շրջաններում համեմատելի է զուռնաչու կերպարին: Առանց դուդուկի հնչյունների չէին անցնում նաև տղամարդկանց առանձին հավաքներն ու խնջույքները: Երաժշտին տրվող հարգանքի տուրքի վառ արտահայտություն էր թանկարժեք մետաղների փորագրանախշ կամ ակնազարդ թիթեղիկների նվիրաբերումը վարպետին ու նվագարանին: Մեզ հայտնի լավագույն օրի-





նակը, որ պահվում է Հայաստանի ազգագրության թանգարանում, Լ. Մադոյանի դուդուկն է՝ ամբողջովին պատված ոսկյա թիթեղիկներով, որի հայերեն ու ռուսերեն ընծայագրերը վարպետի փառքի հավաստիքն են (հմմտ. հանրահայտ աշուղների նմանօրինակ նվագարանների հետ): Դուդուկ պատրաստող վարպետին երբեմն կոչում էին նաև «դուդուկ քաշող» (Մարտունի, գ. Վարդենիկ): Նվագարանի փայտյա  փողի վրա նախապես գծում էին նախշերը, ապա փորագրում կամ նախշում սադափով, ոսկրով, արծաթով, ոսկով, թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերով կամ գույնզգույն ուլունքներով: Տարածված էր նաև միայն փայտի փորագրման կամ այրման եղանակով զարդանախշումը: Նվագարանի ներքևի մասում փորագրում կամ դաջում էին երաժշտի անվանատառերը, իսկ հակառակ կողմում՝ վարպետի անվանատառերը կամ նշանը: Ամենատարածվածը սադափն ու կարմիր ուլունքներն էին, որ տեղադրվում էին ըստ վարպետի կամ պատվիրատուի ճաշակի: Զարդանախշերի տարածված ու սիրված կոմպոզիցիան կենաց ծառի, թռչնի, աստղածաղիկների պատկերներն էին, բուսանախշերը և հավերժության նշանները: Անվանի վարպետների նվագարանների վրա, ինչպես նկատեցինք, ընդունված էր ոսկե և արծաթե փորագրանախշ թիթեղիկներ փակցնելը, որ նվիրաբերում էին երկրպագուները և բոլորի ներկայությամբ ամրացնում նվագարանի փողին: Պահպանության նպատակով՝ նվագարանը ամփոփվում էր թավշից  կամ տնայնագործ կտորից կարված և ասեղնագործված պատյանում ու կախվում երաժշտի գոտուց կամ վզից (դրվում էր ծոցը): Տարբեր  շրջաններում կարելի էր հանդիպել նաև նվագարանի համար պատրաստված փայտյա, կաշվե, գորգահյուս ու կարպետագործ պատյանների:

Հայտնի է, որ 19-20-րդ դդ., հայազգի երաժիշտներից շատերը սպասված հյուրեր էին նաև հարևան ժողովուրդների տոների, ծիսական արարողությունների ու խնջույքների ժամանակ՝ առանց դավանաբանական ու մշակութային սահմանազատման: Ըստ այսմ՝ նրանց նվագացանկում հաստատուն տեղ ունեին արևելյան տարաբնույթ մեղեդիներն ու ծիսական նվագները, իսկ հարևան երկրներում տարածվում էին հայկական երգերն ու նվագները: Նրանցից շատերը հանրապատրաստից հորինման ճանաչված վարպետներ էին, և հավուր պատշաճի գնահատվում էին նաև այդ երկրներում: Այսինքն, նվագարանը և երաժշտությունը վեր էին ազգային ու կրոնական պատկերացումներից: Արդի պատկերացմամբ, այս երևույթը երաժշտության շնորհիվ ընթացող համաշխարհայնացման յուրատիպ գործընթաց էր: Հայոց ավանդական մշակույթում, հատկապես ուխտագնացությունների ու ժողովրդական տոների սեզոնին, կարելի էր հանդիպել նաև գյուղից գյուղ շրջող դուդուկահարների դաստաների, որոնց շնորհիվ շատ մեղեդիներ տարածվում էին տարբեր ազգագրական շրջաններում՝ դառնալով համահայկական:

Դուդուկի հոգեպարար, թավշյա հնչողությունն ուղղակիորեն աղերսվում է կյանքի ու մահվան հավերժական խնդրին: Զարմանալի չէ, որ նրա մելամաղձոտ ձայնն ու որոշարկված երգացանկը ներհայելու առիթ է տալիս հատկապես թաղման ծիսակարգում, այսու, շատերի մոտ ընկալվում է իբրև «լացի ու ողբի» նվագարան:

Նվագախմբերը  հիմնականում փողային և հարկանայիններից կազմված եռյակ կամ քառյակներ են. ա) դուդուկ (1-ին, 2-րդ), դափ (դհոլ)-երգիչ, բ) դուդուկ (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ), դհոլ (դափ), գ) դուդուկ, կլարնետ, դափ (դհոլ)-երգիչ: Առանց երգչի են հնչում դուդուկներից (բ տարբերակ) և զուռնաներից կազմված խմբերը: Բացի փողային-հարկանային երաժշտակազմից, տարածված է նաև դուդուկ (կլարնետ), ակորդեոն, դհոլ (դափ) երաժշտախումբը, որտեղ ակորդեոնահարը միաժամանակ կատարում է նաև երգչի պարտականությունները: Հիշյալ դաստաներում գլխավորը երգիչ-ողբասացն է, և նվագարանին գերազանցապես նվագակցող գործառույթ է վերապահված: Սակայն, առանձին կատարումների ընթացքում, նվագարանը կարող է դառնալ առաջատար՝ փոխարինելով մենակատար-երգչին. ա) ամբողջական նվագարանային մուղամների, բ) նվագարանային նախանվագի, գ) նվագարանային կրկներգի, դ) նվագարանային ամփոփում-վերջնամասի ինքնուրույն հատվածների ժամանակ:







Գյուղական միջավայրում հոգեհանգստի ծեսում եվրոպական լարային եռյակ-քառյակներին հիմնականում փոխարինում են ավանդական փողային-հարկանային դաստաները: Ուշագրավ է, որ քաղաքային կյանքում ևս, որոշակի խավերի շրջանում հաջորդաբար կարող են հնչել թե՛ եվրոպական, թե՛ ավանդական նվագախմբերը: Թաղման ծեսում այս երկու երաժշտախմբերի՝ լարային քառյակի և ավանդական փողային նվագախմբի զուգորդումը, մեր օրերում, շատերի պատկերացմամբ բարձր ճաշակի և նյութական ապահովվածության առհավատչյա է: Միայն դուդուկահարներից ու հարկանային նվագարանից կազմված դաստաները (դուդուկ, դամ, դափ կամ դհոլ եռյակից մինչև 5-7 կամ ավելի դուդուկահարներից ու դհոլչուց կազմված նվագախումբ) բարձր համարում ունեն հասարակության գրեթե բոլոր խավերի շրջանում: Դրանք ընկալվում են, միաժամանակ, իբրև ազգային խորհրդանիշ և արդի երաժշտական համաշխարհային չափանիշներին ու ճաշակին վայել կատարողական արվեստ: Հենց այս դիտանկյունով է մեկնաբանվում համազգային ճանաչում ունեցող անձանց (օրինակ՝ Արամ Խաչատրյանի, Զորավար Անդրանիկի և այլոց) հոգեհանգստյան արարողակարգում դուդուկահարների նվագախմբերի պարտադիր ներկայությունը, որը ստեղ-ստեղ զուգահեռվում է նաև սիմֆոնիկ նվագախմբի կամ երգչախմբի դասական ռեքվիեմային կամ հոգևոր շարականների կատարումներին:

20-րդ դ. երկրորդ կեսերին ի հայտ է գալիս Վաչե Հովսեփյանի դուդուկահարների հնգյակը՝ «Աշխարհումս ախ չիմ քաշի» նվագով, իսկ, հատկապես, Ջիվան Գասպարյանի ջանքերով, սկսում է փորձարկվել նաև տասնյակ դուդուկահարներից (մինչև 30) կազմված բազմաձայն նվագախումբը, որի կազմում հնչող տարբեր չափերի դուդուկների շնորհիվ, նվագախումբը համեմատելի է երգեհոնի հնչողությանը[16]: Այսպիսի երաժշտախմբերի երկացանկ են ներմուծվում միջնադարյան հոգևոր երգերի նվագարանային փոխադրումներն ու բազմաձայնումները, արևելյան նվագարանային մուղամի ու ավանդական երգերի ու նվագների տարբերակները:

Մեր գիտարշավային ուսումնասիրությունների ընթացքում փորձել ենք պարզաբանել, թե ինչ ազդեցություն է ունենում դուդուկի նվագն ունկնդիրների վրա: Բնականաբար, այն ավելի ամբողջական պատկեր է ստանում տարիքային միջին և բարձր խմբերի շրջանում: Եթե փորձենք, ըստ մեր հարցախույզի արդյունքների սխեմայի, վերածել դուդուկի նվագն ունկնդրողների ապրումներն ու հոգեվիճակներն, ապա հետևյալ պայմանական նկարագիրը կստացվի.

1. անհատի զգայական անմիջական ընկալում,
2. ներհայում սեփական հոգու խորքը,
3. անցում դեպի արմատները՝ նախնիներին (անդրաշխարհ)
4. մտովի վերադարձ դեպի աշխարհիկ կյանք՝ ներկա ժամանակ,
5. հանգրվան հավերժի ծիրում (բնություն-աստվածային սկիզբ):

Բանասացներից շատերի հավաստմամբ, դուդուկի ձայնն իրենց օգնում է բոլորի մեջ լինել առանձին՝ ներանձնային հայեցողական վիճակում, ու մտովի սավառնել դեպի վեր՝ հոգևոր թռիչքի պատրանք ու հոգևոր ազատություն ստանալ: Գուցե հենց այսպիսի զգայական դաշտի առաջացման շնորհիվ է, որ 20-րդ դարում բազմաթիվ երկրներում լայն ծավալում ստացած տրանսցենդենտալ մեդիտացիոն տեխնիկաների՝ մտավարժանքի ոլորտ ներմուծվեց նաև դուդուկի հնչողությունը՝ հատկապես լայնաշունչ նվագները՝ իբրև բնություն-աստվածային սկիզբ կապի հնչյունային արտահայտություն (հմմտ. դուդուկի ձայնն իբրև նախնու ձայն, արմատների ձայնային խորհրդանիշ ընկալումները): Հայկական դասական երաժշտության մեջ նվագարանի «ներկայությունն» հաստատագրվեց Ավետ Տերտերյանի շնորհիվ, որն, ինչպես իրավացիորեն նշում է երաժշտագետ Մ. Ռուխկյանը, դուդուկի հնչողությունն օգտագործում է որպես ազգային ավանդույթի խորհրդանիշ: 20-րդ դ. սիմֆոնիկ երաժշտության հոլովույթում Ա. Տերտերյանի երաժշտական աշխարհայացքը նվագարանի կիրառման, ծիսականացման, մեղեդու ծա-





վալման ու տեմբրի արքետիպային ընկալման չգերազանցված ինքնատիպ օրինակ է: Կոմպոզիտորը խոստովանում է, որ «Երրորդ սիմֆոնիայի» (1975թ.) կիզակետում հնչող տրոմբոնների «զրույցին» հաջորդող դուդուկի «մենախոսությունը» ունկնդրին հնարավորություն է տալիս մտորել կեցության իրական ճշմարտության, կյանքի ու մահվան գաղափարների շուրջ և վերաիմաստավորել դրանք: Դուդուկի մենանվագը մարդու երկխոսությունն է Արարչի հետ[17]:

Ավելի ուշ` 1980-ական թթ., դուդուկը ներմուծվեց նաև Յուրի Գևորգյանի («Կոնցերտ դուդուկի և նվագախմբի համար»), Ռուբեն Ալթունյանի («Թափուր անդաստան», 2001թ.), Վաչե Շարաֆյանի (մի շարք գործեր` 1998-2006թ.), Էդվարդ Հայրապետյանի, Արզաս Ոսկանյանի և այլոց ստեղծագործությունների ոլորտը, մեկ` իբրև կորուսյալ արմատների կանչ ու վերադարձ, մեկ` ազգային խորհրդանիշ, մեկ` ազգայինի ու համամարդկայինի ներհյուսման հղացք` կոնցեպտուալ արվեստ: Վ. Շարաֆյանի[18] ստեղծագործություններում, ինչպես «Արև, գինի և ժամանակի քամի», «Ակացիաների երգի առավոտյան բուրմունքը», «Իմ բարձրագնայ լուսին» երկերում, դուդուկը հնչում է հայկական ինտոնացիոն երանգներով, ազատ, բնական տեմբրով և ներհյուսվում եվրոպական դասական նվագարանների` թավջութակ, դաշնամուր, հնչյունային լեզվամտածողության ծիրում: Հոգևոր արժեքների խտացման ճանապարհով, կոմպոզիտորը փորձում է հիպերտեքստի օրենքներով ստեղծել մի տիեզերական հարացույց, որտեղ բոլորը կարող են մուտք ունենալ` պահպանելով սեփական ինքնությունը` միաժամանակ չխանգարելով ուրիշներին, չխաթարելով կառույցի ամբողջականությունը: Ժամանակակից հայ դասական երաժշտական մշակույթում, ավանդական նվագարանների ու երաժշտության այլևայլ կիրառությունների խնդրին իրենց աշխատանքներում անդրադարձել են երաժշտագետներ Մ. Ռուխկյանը[19], Ս. Սարգսյանը[20], Կ. Ջաղացպանյանը[21], Ժ. Զուրաբյանը և այլք:

Առաջին փորձը դուդուկի ներմուծման արտասահմանյան երաժշտության մեջ արեց Պիտեր Գաբրիելը «Հիսուսի վերջին փորձությունը» ֆիլմում: Նա օգտագործեց Վաչե Հովսեփյանի «Հովերն ընկան» փայլուն նվագը, որը մեծ համբավ ունեցավ և իրապես նպաստեց դուդուկի համաշխարհային ճանաչմանը: Մինչ այս, սոսկ հայոց միջավայրում ազգային խորհրդանիշ ընկալվող նվագարանը, 20-21-րդ դդ. համաշխարհայնացման պայմաններում, Ջիվան Գասպարյանի և Գևորգ Դաբաղյանի արտասահմանյան բազմաժանր համերգային ելույթների ու ձայնագրությունների շնորհիվ, վերածվեց համահայկական երաժշտական խորհրդանիշի: Դրան զուգահեռ, ներմուծվեց Արևմուտքի ջազային մշակույթի ոլորտ` վերաճելով էկոջազի բաղադրիչի` միաժամանակ վերահաստատագրվելով որպես հայկական նվագարան և հայի հնչյունային կերպ` տեմբր: Մերօրյա հայ տաղանդավոր դուդուկահարների` Ջիվան Գասպարյանի, Գևորգ Դաբաղյանի շնորհիվ դուդուկն ընդլայնեց իր ժանրային ու թեմատիկ ընդգրկումը` ջերմ ընդունելության արժանանալով աշխարհի տարբեր միջօրեականներում: Հայ կատարողների վկայությամբ` նրանց արտերկրում ուսանել է երկու տասնյակից ավելի օտարազգի երաժիշտ, որոնք դուդուկը համարում են նաև իրենց հոգու նվագարանը:

Մեր աչքի առջև, դուդուկն ավելի ու ավելի է ներգրավվում նաև համաշխարհային կինոարվեստում` բազմաթիսի դրսևորումներ ստանալով տարբեր մշակույթներում ու աշխարհընկալումներում :

Հայաստանում և  առավել ևս` Սփյուռքում, դուդուկի հնչողության ու տեմբրի ազգային ինքնության ընկալումն առարկայական կերպ է ստանում հենց իր` նվագարանի տեսքով:  Բնավ պատահական չէ, որ նույնիսկ չհնչող նվագարանը գնահատվում է իբրև ազգային խորհրդանիշ և հատուկ տեղ ստանում հուշանվերային համակարգում: Խորհրդանշային առումով, փոխակերպվում են նաև դուդուկի երգացանկն ու կատարման կերպը` իբրև տարածաշրջանի, ժողովրդի, խավի ու ժամանակի ցուցիչ: Այս մտածողությամբ էլ հաճախ երաժշտությունն ու նվագարաններն օգտագործվում են կինոնկարներում` հերոսի ու միջավայրի կերպավորման նպատակով կամ իբրև հնչյունային ֆոն ու տարրորոշիչ տեղ են գտնում թանգարանային ցուցադրություններում:







Իբրև ամփոփում փաստենք, որ «Մարդկության բանավոր և ոչ նյութական ժառանգության գլուխգործոցների 3-րդ հռչակում», UNESCO-ի ծրագրում 2005 թ. հավանության է արժանացել Հայաստանի ներկայացրած, Գևորգ Դաբաղյանի և Վաչե Շարաֆյանի պատրաստած «Դուդուկի երաժշտություն» նախագիծը, և նվագարանն ընդունվել է իբրև համաշխարհային ժառանգության աներկբայելի արժեք:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՈՒԴՈՒԿԱՀԱՐՆԵՐ ԵՎ ՆՎԱԳԱՐԱՆԱԳՈՐԾ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Ժողովուրդը մեծարել և  սերնդե-սերունդ փոխանցել է միայն լավագույն կատարողների անուններն ու կյանքի ուշագրավ մանրամասները: Ցավոք, 19-20-րդ դարերում առանձնապես ընդունված չէր համագյուղացիներին ազգանուններով տարբերելը, որի պատճառով վարպետների մի մասի միայն  անուններն ու մականուններն են հասել մեզ: Դաշտային ազգագրական նյութեր հավաքելու ընթացքում միշտ չէ, որ հաջողվել է ճշգրիտ տվյալներ գրանցել երաժիշտների ու վարպետների ծննդյան ու մահվան թվականների վերաբերյալ, ուստի, հաճախ միայն նրանց գործունեության մոտավոր ժամանակաշրջանն է հիշատակվում :



Արտաշես Հովհաննիսյանի դուդուկները

**ք. ԵՐԵՎԱՆ**
*Ուստա Կարո* - 20-րդ դ.սկիզբ, դուդուկ
*Վարպետ Սուրեն* - 20-րդ դ.սկիզբ, դուդուկ
*Կարլեն Մաթևոսյան - 1927թ..*
*Գևորգ Գեղամի Գևորգյան* - 20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ,
*Ռուբեն Նապոլեոնի Ռուշանյան* - 1936 թ., շվի, սրինգ, պարկապզուկ, դուդուկ, զուռնա
*Վարպետ Սուրեն* - 20-րդ դ., դուդուկ
*Վարպետ Հովսեփ և Արթուր (որդին)* - 20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ
*Սադոն Միշա*  20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ
*Վարպետ Աբել* - 1960 թ.
*Կարեն Մուքաելյան* - 1972 թ.

ԱՆԻԻ ՇՐՋԱՆ
*գ. Ջիթանքով*
*Գևորգ Զոհրապի Ալոյան* - 20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ, զուռնա, բլուլ

ք. Գյումրի
*ՈՒստա Մուկուչ* - 20-րդ դ. սկիզբ, դուդուկ, շվի:

ք. Վաղարշապատ
*Տիգրան Աբրահամի Մարգարյան* - 20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ
գ. Բյուրական
*Ուստա Ցոլակ* - 20-րդ դ. սկիզբ, դուդուկ, զուռնա, բլուլ
*Կոլյա Դանիելի Թորոսյան* - 20-րդ դ. 2-րդ կես, դուդուկ, զուռնա, բլուլ

ՎԱՅՔԻ ՇՐՋԱՆ
*գ. Ազատեկ*
*Գարեգին Լևոնի Սահակյան*- 20-րդ դ. 2-րդ կես, վարպետ, դուդուկ, զուռնա
*Լիպարիտ Կարապետի Նազարյան* - 20-րդ դ. 2-րդ կես, վարպետ, դուդուկ, զուռնա

ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ
*գ. Խաշթառակ*
*Սարգիս Սարիբեկյան*- զուռնա, դուդուկ

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆ
գ. Արծվաբերդ



*Ասիլբեկյան Բալասար Սահակի* - ծնվ. 1905թ., զուռնա, դուդուկ
*Ղալլաբյան Աստանազ* - ծնվ. 1929թ., զուռնա, դուդուկ
*Առաքելյան Նատոլեոն* (*Ղավալ Նատո*) - ծնվ. 1938թ., դուդուկ, զուռնա, կլարնետ, շվի

ԼՈՌՈՒ ՇՐՋԱՆ
գ. Ակներ
*Սաղաղյան Սերգեյ* - ծնվ. 1900 - ական թթ., զուռնա, դուդուկ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ
գ. Վարդենիկ
*Հովհաննիսյան Մաթևոս (Ղարսեցի Մաթևոս)* - ծնվ. 1800- ական թթ., զուռնա, դուդուկ, թութակ
*Մարտիրոսյան Սոլոմոն Արելի* - ծնվ. 1905թ., սովորել է ղարսեցի վարպետ
*Հովհաննիսյան Մաթևոս* - զուռնա, դուդուկ, թութակ
Մարտունի ավան
*Պողոսյան Քարիդոն Զալիբեկի* - ծնվ. 1920թ., զուռնա, դուդուկ, բլուլ, ծնտաղե սրինգ

ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ (Ադրբեջանի կազմում*)*
գ. Գետաշեն
*Խաչունց Ամիրխան* - Շիծշատ, դուդուկ (մեյ), մահացել է 1945թ.:
ք. Գանձակ
*Կիրովաբադցի Ստեփան* - զուռնա, դուդուկ, Ուստա Մակիի և շրջանում գործող մյուս բոլոր երաժիշտների նվագարանները նրա պատրաստածն են (10 ձանեթ):


Մարտիրոսյան Սոլոմոն

ՋԱՎԱԽՔ (Վրաստանի կազմում)
ք. Ախալցխա
*Եղիշե Չիֆթալարյան* - 1950 ական թթ., դուդուկ, զուռնա, բլուլ
ք. Ախալքալաք
*Սամսարցի Արութիկ* - ծնվ. գ. Սամսար, դուդուկ, զուռնա, սրինգ
*Թոքմաջյան Վահան* - ծնվ. 1906թ, գ. Դիլիսկա (Արութիկի աշակերտն է), դուդուկ, զուռնա, սալամուր:

ՍՊԻՏԱԿԻ ՇՐՋԱՆ
Դուդուկ նվագել են ավանդական տոների Բարեկենդան, Տրնդեզ, Զատիկ, Վարդևոր, Համբարձում, նախրաթող, ճատաղի, ուխտագնացություններ, առաջնեկի ծնունդ, հարսանիք, թաղման ծեսի ընթացքում:

գ. Ջրաշեն
*Ուստա Արտաշ* - 1950-60-ական թթ. լավագույն զուռնաչին և դուդուկահարը:
գ. Գեղասար
*Հարութ Պոտոյան* - զուռնաչի, դուդուկահար, ծնվ. 1920-ական թթ.
*Այվազ Ղուջուրյան* - դամբաշ, ծնվ. 1920-ական թթ.
*Սամվել Պոտոյան* (Հարութի որդին) - դհոլ - 1950- 60-ական թթ.:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ք. Լենինական
*Գեորգիենց Կարո* - 19-րդ դ. 2-րդ կես, դուդուկ
*Կարապետ Եղոյան* (Փանչո)- 19-րդ դ.վերջ 20-րդ դ. սկիզբ

ԻՋևԱՆԻ ՇՐՋԱՆ
գ. Այգեհովիտ
Ըստ մեր հավաքած դաշտային ազգագրական տվյալների՝ մինչև 1920թ. շրջանում մոտ 20 դաստա զուռնաչի - դուդուկչի կար (առանց դաստի գյուղ չկար):
*Ստեփան Ղոնդյան* (հայրը) - զուռնա, դուդուկ, - ծնվ. 1850- ական թթ.
*Հարություն Ղոնդյան* (որդին) - զուռնա, դուդուկ, - ծնվ. 1880- ական թթ.
*Եսայի Ղոնդյան* (եղբայրը) - զուռնա, դուդուկ, - ծնվ. 1880- ական թթ.
*Սարիբեկ Ղոնդյան* (եղբայրը) - զուռնա, դուդուկ, - ծնվ. 1880- ական թթ.
*Բեգլար Հարությունի Ղոնդյան* - ծնվ. 1902թ. - զուռնա, դուդուկ,
գ. Խաշթառակ
*Օհանյան Հայկազ,* ծնվ. 1930թ. - զուռնա, դուդուկ:
գ. Աչաջուր
*Աղամ (Հաթամ) Գրիգորի Վարդապետյան*, ծնվ. 1904թ. - զուռնա, դուդուկ
*Արշակ Սաֆարյան,* ծնվ. 1880-ական թթ.- զուռնա, դուդուկ, քյամանչա
*Օհանես Մելքումյան,* ծնվ. 1880-ական թթ. - զուռնա, դուդուկ, քյամանչա




ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆ
*Տարածված նվագախմբերը*
*Դուդուկ, դամ, դհոլ*
*Դուդուկ, սազ, դհոլ*
*Դուդուկ, դամ, սազ*
*Դուդուկ, շվի, (սրինգ), դհոլ*
*Դուդուկ, շվի (սրինգ), սազ*
գ. Արծվաբերդ
*Ասիլբեկյան Սահակ (Ղավալ Սահակ)* - ծնվ. 1880- ական թթ., զուռնա, դուդուկ
*Ասիլբեկյան Բալասար Սահակի* - ծնվ. 1905թ., զուռնա, դուդուկ
*Ղավալ Միդի* - ծնվ. 1900-ական թթ. զուռնա, դուդուկ, դամբաշ
*Բաբասյան Մակի* - ծնվ. 1900-ական թթ. զուռնա, դուդուկ
*Բաբասյան Սահակ Մակիի* - ծնվ. 1930-ական թթ. զուռնա, դուդուկ
*Աղաբաբյան Մարտիրոս* - ծնվ. 1930-ական թթ. զուռնա, դուդուկ, դամբաշ
*Ղալլաբյան Աստանազ (Ասքո)* - ծնվ. 1929թ., զուռնա, դուդուկ
*Դումանյան Ռաֆիկ* -ծնվ. 1920-ական թթ. զուռնա, դուդուկ, դամբաշ
*Ղալլաբյան Ռազմիկ* - ծնվ. 1940-ական թթ., զուռնա, դուդուկ
*Զանյան Շաճշադ* - ծնվ. 1932թ. , կլարնետ, դուդուկ, դամբաշ
*Առաքելյան Նատոլեոն* (*Ղավալ Նատո* )- ծնվ. 1938թ., դուդուկ, զուռնա, կլարնետ, շվի
*Ուզունյան Մելսիկ* - աշակերտել է Առաքելյան Նատոլեոնին 1950-ական թթ., դուդուկ, զուռնա, կլարնետ,
*Դավթյան Բորիս* - աշակերտել է Առաքելյան Նատոլեոնին, ծնվ. 1950- ական թթ., դուդուկ, զուռնա, կլարնետ

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆ
ք. Բերդ
*Հակոբ Հունանի Սայադյան* - ծնվ. 1909թ. զուռնա, դուդուկ
գ. Չորաթան
*Մարտիրոսյան Սանթուր* - ծնվ. 1880-ական թթ. զուռնա, դուդուկ

ՀՀ ԼՈՌՈՒ ՇՐՋԱՆ
գ, Սանահին
*Մոսինյան Սամբրե* - ծնվ. 1907թ., զուռնա, դուդուկ
գ. Ակներ
*Վարդան Շավինյան* -- ծնվ. 1880- ական թթ., զուռնա, դուդուկ
գ. Օձուն
*Օձունցի Հարություն* - ծնվ. 1900 -ական թթ. շրջանի անվանի զուռնաչին ու դուդուկահարն էր
գ. Հագվի
*Օհանյան Մեսրոպ Էլիզբարի* - ծնվ. 1930թ. զուռնա, դուդուկ, կլարնետ, աշակերտել է Օձունցի Հարությունին:
*Օհանյան Երվանդ* - ծնվ. 1929թ., դամբաշ, զուռնա, դուդուկ
գ. Աքորի
*Մարտիրոսյան Սարգիս* - մահացել է 1939թ., դուդուկ, շվի
*Ղալլաբյան Հարություն* - մահացել է 1950-ական թթ., դամբաշ, դուդուկ

ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆ
գ. Բռնակոթ
*Փողհար Զոհրատ* - Մահացել է 1874թ., դուդուկ, զուռնա
*Անտոնյան Հայկ* - ծնվ. 1920թ., դուդուկ, զուռնա, շվի

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
գ. Աղավնաձոր
*Մկրտչյան Շմավոն* - ծնվ. 1935թ., դուդուկ, շվի, զուռնա
Գ. Արենի
*Առաքելյան Խաչիկ Արգամի* - ծնվ. 1922թ., զուռնա, դուդուկ, շվի

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ
գ. Վարդենիկ - 20-րդ դ. սկզբին գյուղում 3 դաստա կար՝ դուդուկ (նայ)
*Նվագախմբեր*
1. Դուդուկ, դամ, դհոլ (դափ)
2. Զուռնա, դուդուկ (դամ), դհոլ
3. Թութակ, դուդուկ, դհոլ - պարերի ժամանակ
4. Թութակ, դուդուկ, դհոլ - պարերի ժամանակ


Օհանյան Մեսրոպ, գ. Հագվի


Մկրտչյան Շմավոն, գ.Աղավնաձոր


Առաքելյան Խաչիկ, գ. Արենի



***Մարտիրոսյան Սարգիս -*** Սոլոմոնի հորեղբայրն է, ծնվ. 1800-ական թթ., զուռնա, դուդուկ, թութակ
***Հովհաննիսյան Մաթևոս (Ղարսեցի Մաթևոս) -***ծնվ. 1800- ական թթ.,
զուռնա, դուդուկ, թութակ
***Մարտիրոսյան Սոլոմոն Աբելի*** -ծնվ. 1905թ., սովորել է ղարսեցի
վարդպետ ***Հովհաննիսյան Մաթևոսից,*** զուռնա, դուդուկ, թութակ
***Մուրադյան Անդրանիկ -*** ծնվ. 1909թ., զուռնա, դուդուկ,

**Գ. Չոլաքար**

***Ուստա Միսե -*** ծնվ. 1880 -ական թթ., զուռնա, դուդուկ
***Ուստա Ջահանգիր -*** ծնվ. 1900 -ական թթ., զուռնա, դուդուկ

**գ. Լիճք**

***Ուստա Գևո -*** ծնվ. 1900- ական թթ., զուռնա, դուդուկ

**գ. Զորագյուղ**

***Աղամխանցի Յախշիբեգ -*** ծնվ.1880-ական թթ. զուռնա, դուդուկ
***Գորոյի Հագո -*** ծնվ.1880-90-ական թթ., զուռնա, դուդուկ
***Հակոբյան Սահակ -*** ծնվ.1880-90-ական թթ., զուռնա, դուդուկ
***Արզման Լավանդի -*** ծնվ.1880-ական թթ., զուռնա, դուդուկ
***Արտյան Կիրակոս -*** ծնվ.1890-ական թթ., զուռնա, դուդուկ

**Գավառի շրջան**

**ը. Հացառատ**

***Բախտիկյան Հայրիկ Սարիբեկի*** - 1909-1982թթ., դուդուկ, զուռնա, սուֆարա (եղեգնե սրինգ), կլարնետ:

**ք. Գավառ**

***Սուչյան Ռուբեն*** (Կուլալեցի Ռուբիկ) - 1890-ական թթ., դուդուկ, զուռնա, սուֆարա
***Գաստարյան Գուրգեն Հովհաննեսի*** (Չարչոնց Գորգի) - ծնվ. 1912թ.,
(Գյումրեցի հայտնի դուդուկահար Կարո Չարչօղլյանի ազգականը),
դուդուկ, զուռնա, սուֆարա, աշակերտել է Սուչյան Ռուբենին
***Տալոյան Ենոք*** -ծնվ. 1900-ական թթ., դուդուկ (դամքաշ)
***Գափոյան Գարի*** (Կուլալեցի Գարի) - ծնվ. 1900-ական թթ., դուդուկ (դամքաշ):

**գ. Նորադուզ**

***Խոսրովյան Խաչատուր -***1850- ական թթ., դուդուկ, զուռնա, սուֆարա

**Հայրապետյանների գերդաստան**

***Հայրապետյան Անդրի*** - ծնվ. 1880-ական թթ., դուդուկ, զուռնա, սուֆարա,
աշակերտել է Խաչատուր Խոսրովյանին
***Հայրապետյան Եղիշ*** - ծնվ. 1890-ական թթ., դուդուկ, զուռնա (հայտնի էր
որպես միաժամանակ զույգ զուռնա փչող վարպետ)
***Հայրապետյան Նիկոլ-*** ծնվ. 1900-ական թթ., դուդուկ, զուռնա
***Հայրապետյան Մեխակ*** - ծնվ. 1900-ական թթ., դուդուկ, զուռնա
***Հայրապետյան Հայկարամ*** - ծնվ. 1900-ական թթ., դուդուկ, զուռնա
***Հայրապետյան Ավաը Լևոնի*** - ծնվ. 1909թ., դուդուկ, զուռնա, աշակերտել է
հորեղբոր որդուն՝ Հայրապետյան Անդրիին:

**Մարտունի ավան** - 20-րդ դ. 2-րդ կեսին գործում է 4 դաստա (2 հարսանիքի, 2 թաղման ծեսի)
***Մարտունեցի Գրաս -*** ծնվ. 1900-ական թթ., զուռնա, դուդուկ
***Պողոսյան Քարիդոն Չալիբեկի*** - ծնվ. 1920թ., զուռնա, դուդուկ, բլուլ, մետաղե սրինգ
***Օհանյան Վանիկ -*** ծնվ. 1920- ական թթ., դամքաշ
***Մովսիսյան Ավետիք -*** ծնվ. 1930թ., դուդուկ, դհոլ, դափ, երգիչ (թաղման ծեսի դաստա)

**ԽԱՆԼԱՐԻ ՇՐՋԱՆ** (Ադրբեջանի կազմում*)*

**գ. Գետաշեն**

***Խաչունց Ամիրխան -*** մահացել է 1945թ., շիմշատ, դուդուկ (մեյ)
***Չիչանց Սերգի*** - զուռնա, դուդուկ
***Խաթունց Մակի -*** զուռնաչի
***Ուստա Գրիգոր -*** զուռնաչի
***Թամամյան Հարություն Համբարձումի*** (հայրը) - զուռնա, դուդուկ, դհոլ
***Թամամյան Արշակ Հարությունի*** (որդին) - զուռնա, դուդուկ, դհոլ
***Թամամյան Սարգիս Հարությունի*** (մյուս որդին) - դուդուկ, զուռնա, դհոլ
***Թամամյան Վոլոդյա Արշակի*** (թոռը) - կլարնետ, զուռնա, դուդուկ, ծնվ. 1936թ.
***Քարհատի շրջան -*** (Ադրբեջանի կազմում՝ ***Դաշքեսան)***

**գ. Չագլիկ**

19-րդ դ. վերջերին գյուղում 3 դաստա կար (ուստա - զուռնա, դուդուկ, դամքաշ,





դհոլչի), որոնք համքարություն էին ստեղծել
***Անտոնյան Մակի Սահակի -*** ծնվ. 1880-ական թթ., զուռնա, դուդուկ վարպետ
կատարող, համքարության ղեկավար՝ ուստաբաշի
***Ազարյան Արմենակ Վարազդատի -*** ծնվ. 1906թ., զուռնա, դուդուկ (Մակիի աշակերտը)
***Բալբաբյան Հայկազ -*** զուռնա, դուդուկ, մահացել է 1970- ական թթ.
***Ալավերդյան Միքայել -*** ծնվ.1930թ., զուռնա, դուդուկ, սրինգ
***Ազարյան Երվանդ Նիկոլայի -*** ծնվ. 1933թ., զուռնա, դուդուկ

**գ. Բանանց -** դուդուկ, մեյ

***Ավագ Վարդապետյան (Ղավալ Ավագ) -*** զուռնա, դուդուկ - 19-րդ դ. վերջերին- 20-րդ դ. սկզբներին եղել է զուռնաչիների ու դուդուկահարների համքարության ղեկավարը: Հագուստով տարբերվել է հասարակ գյուղացիներից: Դրել է Բուխարայի փափախ, հագել արխալուղ, կապել արծաթե գոտի և կրել արծաթե շղթայով ժամացույց: Շրջանի ամենահայտնի երաժիշտն էր: 19-20-րդ դ. կեսերին գյուղում 7 փողային նվագարանների դաստա էր գործում:
***Սահակյան Ստեփան -*** Ղավալ Ավագի փեսան էր և աշակերտը, զուռնա, դուդուկ
***Չատի Սահակի Մեխակ -*** զուռնա, դուդուկ, քյամանչա - 19-րդ դ. վերջ 20-րդ դ. սկզբներին
***Մկրտչյան Մեխակ -*** զուռնա, դուդուկ - 19-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկզբներին
***Գյուրջյան Հարություն*** - զուռնա, դուդուկ - 20-րդ դ. 1-ին կեսերին (որդիները՝
Հակոբ և Մեխակ, դհոլ են նվագել)
***Դալլաքյան Սաքի Ալեքսանի*** (Ալի Սաքի) - դհոլչի, 19-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկզբներին
***Ադամ Ալադան*** (Սարգիս) - դհոլչի, 19-րդ դ. վերջ - 20-րդ դ. 1-ին կես
***Տոնյան Գրիգոր (Տոնունց Գրիգոր)*** - զուռնա, դուդուկ (աշակերտել է աչակաթի վարպետ
Դալլաքանց Ղուկասին) - 20-րդ դ. 1-ին կեսերին
***Տոնյան Արմենակ Գրիգորի*** (որդին է) - զուռնա, դուդուկ, կլարնետ, 1970-ական թթ
***Տոնյան Ժորա Գրիգորի*** (որդին է) - զուռնա, դուդուկ, կլարնետ, 1970-ական թթ.
***Նալբանդյան Ստեփան -*** դամքաշ, 1970- ական թթ.
***Քոսյան Մարտիրոս (Աբոլ)*** - կլարնետ, դուդուկ (թաղման ծեսի երաժիշտ)

**գ. Խաչակապ (Ղուշչի)**

***Դալլաքանց Ղուկյաս*** (ուստեն էր) - 20-րդ դ. սկիզբ, զուռնա, դուդուկ
***Գյուգյունց Մելիք -*** 20-րդ դ. սկիզբ, զուռնա, դուդուկ
***Չալաբյան Խաչատուր (Չատի Դայի)-*** 20-րդ դ. սկիզբ, զուռնա, դուդուկ



Աբրահամյան Անդրանիկ,
ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽ**

**ք. Ստեփանակերտ**

***Ուստա Ներսես -*** ծնվ. 1880- ական թթ., զուռնա, դուդուկ
***Աբրահամյան Անդրանիկ -*** ծնվ. 1907թ., զուռնա, դուդուկ, շվի, քյամանչա, աշակերտել է Ուստա Ներսեսին:

**ՋԱՎԱԽՔ (Վրաստանի կազմում )**

**Ախալցխայի շրջան,**

**գ. Ծղալթբիլա**

***Երոյան Հովհաննես -*** զուռնա, դուդուկ - մինչև 1920թ.
***Ադամյան Սիմոն -*** դամքյաշ մինչև 1920թ.
***Անտոն Հովհաննեսի Խաչատրյան -*** զուռնա, կլարնետ, դուդուկ, ծնվ. 1921թ.

**գ. Սազել**

***Թորոսյան Գրիգոր -*** 20-րդ դ. սկիզբ, զուռնա, դուդուկ
***Նահապետյան Արամ -*** 20-րդ դ. սկիզբ, զուռնա, դուդուկ

**ՋԱՎԱԽՔ**

**Աստինձայի շրջան**

**գ. Դամալա**

20-րդ դ. սկզբին գյուղում երկու նվագախումբ էր գործում:
Նվագախումբ (հարսանիք, խնջույքներ, տոներ՝ Բարեկենդան, Վարթևոր, դուդուկ նվագում են հիվանդի մոտ, որ լավանա, և թաղման ծեսին)
***Խաչոյան Գարեգին*** - 20-րդ դ. սկիզբ, դուդուկահար, զուռնա
***Բեդիրյան Գրիգոր -*** 20-րդ դ. սկիզբ, դուդուկահար, զուռնա
***Խաչատրյան Գարեգին Սանդրոյի*** - ծնվ. 1907թ., դուդուկ, զուռնա, շվի,
իր ուստեն եղել է Ախալքալաքի շրջ. Սամսարցի Արութիկը, սովորել է 2 տարի, ամիսը վճարել է 30 մանեթ: Վարպետն ուներ նաև աշակերտներ Դիլիսկա և Օրջա գյուղերից:

**ՋԱՎԱԽՔ, ԾԱԼԿԱՅԻ ՇՐՋԱՆ**

**գ. Ղուշչի**

**20-րդ դ. 2-րդ կեսերին գործող նվագախմբերը**

1 զուռնա, 2 դուդուկ, 1 դհոլ
1 կլարնետ 2 դուդուկ, 1 դհոլ:

**գ. Ղըզըլքիլիսա**



**19 -րդ դ. վերջի- 20-րդ դ. 2-րդ կեսերի թաղման ծեսի նվագախումբ**
2 դուդուկ, 1 դափ կամ դհոլ, երգիչ:
**գ. Այազմա**
***Հարությունյան Հարություն -*** զուռնա, դուդուկ, - ծնվ. մոտ. 1885 - 90- ական թթ.
***Հարությունյան Պարսամ*** -զուռնա, դուդուկ, Հարությունի եղբայրն է - ծնվ. մոտ. 1880- ական թթ.
***Միքայելյան Թաթո -*** 1880-ական թթ., դամքյաշ, նվագում էր նաև զուռնա, սալամուր (մետաղե սրինգ)


*Թոքմաջյան Վահան*

**ՋԱՎԱԽՔ**
**ք. Ախալքալաք - *դուդուկ, դհդիկ, մեյի***
**19-20-րդ դդ. սկզբների նվագախմբերը**
Դուդուկ, դամ, դհոլ
Դուդուկ, ջութակ, դափ (երբեմն` դհոլ)
Դուդուկ, թառ, դափ (երբեմն` դհոլ)
**20-րդ դ. 2-րդ կեսի նվագախմբերը**
Դուդուկ, դամ, դհոլ
Դուդուկ, ջութակ, դափ (երբեմն` դհոլ)
***Սամսրցի Արութիկ -*** ծնվ. գ. Սամսար, դուդուկ, զուռնա, սրինգ
***Թոքմաջյան Վահան -*** ծնվ. 1906թ, գ. Դիլիսկա, (Արութիկի աշակերտն է), դուդուկ, զուռնա, սալամուր:

**ՋԱՎԱԽՔ**
**Ախալքալաքի շրջան**
**գ. Սուլդա - դուդուկ, դհդիկ, մեյի**
**19-20-րդ դ. սկզբների նվագախմբերը**
Դուդուկ, դամ, դհոլ (կամ դափ)
Դուդուկ, թառ, դհոլ (կամ դափ)
**20-րդ դ. 2-րդ կեսերի նվագախմբերը**
Դուդուկ, դամ, դհոլ (կամ դափ)
Դուդուկ, թառ, դհոլ (կամ դափ)
Դուդուկ, ակորդեոն, դհոլ (կամ դափ)
Դուդուկ, դամ, կլարնետ, դհոլ (կամ դափ)

***Մինասյան Բաթո*** - 19-րդ դ. վերջ, դուդուկ, զուռնա, թութակ
***Դարբինյան Գոքոր*** - 19-րդ դ. վերջ, դուդուկ, զուռնա, թութակ
***Հովհաննիսյան Պողոս -*** ծնվ. 1880-ական թթ., զուռնա, դուդուկ, շվի
***Հովհաննիսյան Արտավազդ Հմայակի*** - ծնվ. 1909թ. (աշակերտել է հորեղբորը` Հովհաննիսյան Պողոսին), զուռնա, դուդուկ, շվի
***Կուջոյան Մեխակ -*** ծնվ. 1907թ. դամքաշ, դուդուկ, զուռնա, շվի
**գ. Գումբուրդո**
***Այվազյան Մինաս -*** 19-րդ դ. վերջ, զուռնա, դուդուկ
***Իբաշենց Արտո -*** 19-րդ դ. վերջ, զուռնա, դուդուկ





## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 о»л, Вертков К., Благодатов Г., Язовицкая Э., Атлас музыкальных инструментов народов СССР. , М. 1963, стр. 81, 88, 93, 105, 106. Музыкальные инструменты мира; Иллюстрированная энциклопедия, Минск, 2001, стр. 44-49. Музыкальный энциклопедический словарь. Главный ред. Г. В. Келдыш, М., 1990, стр. 14, 185. Ավդալ Ամինե, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, երևան, 1957, էջ 245:

2 Lavingac A., Encyclopedie de la Musigue., Paris 1922, p. 19.

3 Музыкалхная культура древнего мира, Л., 1937, стр. 55-57. Грубер Р., История Музыкальной культуры., т.1, стр. 192-193. Закс К., Музыкальная культура древнего мира., Л., 1937. Anthony Baines, Woodwind Instruments and their History, London, 1977. Anthony Baines, Ancient and Folk Backgrounds. James A. Macgillivray, The Woodwind, //Musikal Instruments Through the Ages. Edited by Anthony Baines. A. Pelican Original, London, 1977, pp. 200-236, 237-276.

4 Տարբեր երկրներում ձևավորված ծայնարտաբերման ավանդական եղանակներին և կատարողական տեխնիկայի հատկանշական կողմերին ևս չենք անդրադառնա, քանզի սույն գրքի բաժիններից մեկն ամբողջությամբ նվիրված է դուդուկի հայ վարպետների կատարողական առանձնահատկություններին:

5 1980 թ.-ից սկսած, Հայաստանի գրեթե բոլոր մարզերում կատարած մեր հավաքած դաշտային-ազգագրական նյութերի հիման վրա փորձել ենք կազմել 19-20-րդ դդ.-ում ժողովրդական ճանաչման արժանացած դուդուկահարների ցանկը, որը կներկայացնենք ստորև:

6 Կոմիտաս, Հայ գեղջուկ երաժշտություն:// Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:

7 Քոչարյան Ա., Հարկանային ու փողային երաժշտական գործիքները Հայաստանում: //Արվեստագիտութ. թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության մեքենագիր օրինակ, Երևան, 1965, էջ 221-232, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժող. երաժշտության բաժնի արխիվ:

8 Лисициан Срб., Старинные пляски и театрализованные представления армянского народа, т. 1, Ереван, 1958г.

9 Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ, Երևան, 1988:

10 Աճեմյան Ա., Հայկական ժողովրդական երաժշտական գործիքներ, Կուլտուր-լուսավորական հանդես, Երևան, 1978, էջ 21- 23:

2 Սարգսյան-Խուդաբաշյան Կ., Հայ-փռուգիական և հայ-խեթական կապերը երաժշտագիտության տեսանկյունով: //Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Երևան, 2004, էջ 447-452:

32 Հովհաննիսյան Ս., Հայկական ժողովրդական գործիք դուդուկը, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1984, թիվ 10, էջ 67-70:

43 Քոչարյան Ա., նշվ. աշխ., էջ 227- 228:

54 Հին եգիպտական դուդուկի հնչյունաշարը բերված է ըստ Լավինյակի հանրագիտարանի, իսկ ճապոնականինը` ծայնագրել է Վ. Բեյլանը` Լենինգրադում` ՍՍՀՄ ժողովուրդների մարդաբանության և ազգաբանության թանգարանի հավաքածուից, ցենտային հաշվումների հիման վրա. հիշատակում է Ա. Քոչարյանն իր նշված աշխատության մեջ:

65 Ս. Հովհաննիսյան, նշվ. աշխ, էջ 68-70:

76 Դուդուկի նոր տեսակների ստեղծման և նորամուծությունների մասին, տես` Փահլևանյան Ա.

87 Մեր հավաքած դաշտային-ազգագրական նյութերի հիման վրա կարող ենք փաստել, որ գյուղական միջավայրում գործող դուդուկահարների գերակշիռ մասը հավասարապես տիրապետում է և՛ զուռնային, և՛ շվիի կամ սրնգի տեղական տարբերակներին:

98 Զուռնաչու կերպարի մասին ավելի մանրամասն տես` Հ. Պիկիչյան, Զուռնան հայոց կենցաղում, «Բանբեր» Երևանի համալսարանի, 1986, թիվ 2-3: Пикичян Р., Зурна в быту армян., //Традиции и современность. вопросы армянской музыки., кн. 2, Ереван 1996, стр. 155-169.

109 Հիշենք, որ երգեհոնների նախնական տեսակները կոչվում էին հիդրավլիկ, որի մեջ հենց դուդուկի ընտանիքի նվագարաններից մեկի` ավլոսի անվանումը կա: Այս հարցի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Կ. Խուդաբաշյան-Սարգսյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում:

20 Рухкян М., Авет Тертерян. творчество и жизнь. Ереван, 2004, стр. 100-115.

21 Տես, Վ. Շարաֆյանի ստեղծագործությունների խտասալիկը` ,,On The Fortieth Day,,. Chamber Workes for Strings and Armenian folk Instruments. Traditional Crossoads CD 6003. Բազմիցս կատարել են «Մետաքսի ճանապարհ» հանրաճանաչ համույթը, ինչպես նաև բազմաթիվ այլ խմբեր և դուդուկահար Գ. Դաբաղյանը:

22 Рухкян М., Дудук в современной профессиональной музыке. //Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2004, N 10, էջ 141-147:

23 Саркисян С., Армянская музыка в контексте XX века. М. 2002, стр 188-189.

24 ,,... Знаменательно, что ключом к пониманию другого народа, а через это и современной музыки оказалась народная песня, в данном случае исполненная на неповторимом качестве звучания армянском народном инструменте — дудуке,,. Джагацпанян К., На пьедестале, По материалам венгерской прессы. //ГА, 30. 07. 2005.

25 Տեղին է հիշել նաև, որ Ա. Բախտիկյանի կատարմամբ դուդուկը հնչել է նաև Փարիզում` Մոլիերի պիեսների ներկայացումների ժամանակ:

26 Նկատենք, որ օտար ունկնդիրն առաջին անգամ դուդուկին հաղորդակցվել է Վաչե Հովսեփյանի կատարմամբ` «Հովերն ընկան» ավանդական մեղեդու միջոցով, որը 2004թ. Պիտեր Գաբրիելի գործիքավորմամբ հնչեց «Քրիստոսի վերջին փորձությունը» մեծ աղմուկ հանած կինոնկարում:

27 Ինչպես հոլիվուդյան հանրահայտ «Կալիգուլա», «Գլադիատոր», «Քրիստոսի վերջին փորձությունը», «Եվգենի Օնեգին» և այլ ֆիլմերում:

28 Երաժիշտների և նվագարանագործների ցանկերը կազմվել են միայն մեր ունեցած տվյալների հիման վրա, ուստի կարող են հընթացս լրացվել` Հայաստանի այլ բնակավայրերում ու հայաշատ վայրերում գրանցվող նյութերի շնորհիվ, և բնավ սպառիչ լինելու ակնկալություն չունեն: Երաժիշտների և վարպետների անունները և մականունները գրանցելիս պահպանվել են խոսակցական լեզվի առանձնահատկությունները` սերունդների հիշողության և հրատարակվող ցանկերի մեջ ներդաշնակություն պահպանելու նպատակով:







# դուդուկահարներ

**Անահիտ Կիրակոսյան**
*Երաժշտագետ,*
Երևանի Պետական կոնսերվատորիա

Հայ ժողովուրդը վաղուց ի վեր ունեցել է բարձր զարգացած նվագարանային արվեստ, այն ներկայացնող պրոֆեսիոնալ և սիրող կատարողների մի ամբողջ բանակ, որոնք ավանդաբար փոխանցել են թե՛ ժողովրդական նվագացանկը, թե՛ նվագարաններին տիրապետելու վարպետությունը, թե՛ ստեղծագործելու և իմպրովիզացիայի շունչն ու ոգին՝ ստեղծելով կայուն ավանդույթներով կատարողական տարբեր դպրոցներ:

Այսօր այդ ավանդույթները շարունակում են մեր օրերի միջին տարիքի և երիտասարդ երաժիշտները՝ իրենց վարպետությանն ավելացնելով նոր որակ, թարմ շունչ և ինքնատիպ մեկնաբանություն:

Ժողովրդական փողային նվագարանների ընտանիքում **դուդուկն** առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Մի հայ մտավորական գրում է. «Դուդուկը սոսկ նվագարան չէ, դուդուկը հոգի է ու զգացմունք, դուդուկը մարդկային տրամադրությունների հավաքական մի սիմֆոնիա է, որը գալիս է տրամադրության մեղեդայնության ելևէջներից»[1]:

Բայց, եթե դուդուկը դիտենք որպես սոսկ նվագարան, ապա դրան հոգի ու զգացմունք հաղորդողը **գործիքին տիրապետող վարպետն** է՝ կատարողը կամ նվագածուն, և կատարման վարպետությունն է, որ ունկնդրին հիացնում ու զմայլում է դուդուկի թավշյա տեմբրով, ջերմությամբ, զգացմունքների արտահայտման քնքշությամբ:

Դուդուկը եղել է հայի հետ դարեր շարունակ ու կա նաև այսօր՝ ուրախության ու վշտի պահերին: Սակայն, այսօր դուդուկը շրջում է աշխարհով մեկ, հնչում է աշխարհի տարբեր բեմերից, ռադիո-հեռուստատեսության եթերից և ուղեկցում բազում ֆիլմերի՝ հայրենական, թե՝ օտար: Զարմանալի է, որ լինելով հայ ժողովրդի վշտի և ուրախության, սիրո ու կարոտի արտահայտիչը, այն կարողացել է օտարին նույնպես համակել հարազատության զգացումով և հաճույք պատճառել ինչպես հոգեթով, նույնպես և կենսախինդ մեղեդիներով: Հայ երաժիշտներից մեկն ասել է. «Դուդուկը մեր սրտերի արտահայտիչն է, դուդուկը սեր է»[2]: Ինչ խոսք, այդ սերը իրական չէր լինի առանց վարպետ կատարման, և դրանում հսկայական է հայ դուդուկահարների դերը, մեծ է նրանց ավանդը դուդուկի կատարողական արվեստի պատմության մեջ: Ստեղծելով դպրոց, ուղղություն և կրթելով մի քանի սերունդներ՝ նրանք ապահովել են իրենց իսկ կատարողական ավանդույթների շարունակելիությունը:

Ասվածն հաստատում են նաև, տարիներ շարունակ, ավանդական դարձած դուդուկին նվիրված տոնահանդեսները, մրցույթները, փառատոները, «Դուդուկի ավանդական երեկոները»՝ Գյումրիում, Երևանում և այլուր: Նպատակը հետևյալն էր. նախնառաջ՝ կազմակերպել դուդուկահարների վարպետության ցուցադրումներ, որը նշանակում էր պրոպագանդել նշանավոր դուդուկահարներին, նաև՝ ի հայտ բերել սկսնակ, բայց խոստումնալի ու շնորհաշատ երաժիշտների: Մյուս կողմից՝ պայմանավորված ժամանակի գործոնով և առանձին վարպետ նվագածուների՝ սեփական նվագարանը կատարելագործելու միտումով, նվագարաններն ընդհանրապես, և դուդուկն՝ մասնավորապես, իր գոյության ընթացքում անընդհատ զարգացման, կատարելագործման ճանապարհ է անցել՝ թե՛ արտաքին ու տեխնիկական, թե՛ հնչողական հատկանիշներում: Միանշանակ է, որ վերոհիշյալ հանդեսներն ունեին նաև դուդուկի հնարավորությունների բացահայտման նպատակը: Ավելին՝ ժամանակակից անսամբլների բեմական պահանջներին հարմարվելու անհրաժեշտությամբ ստեղծվել ու ստեղծվում են նաև նորերը:

Վերջապես, որ պակաս կարևոր չէ, այդ միջոցառումները նպաստում էին դուդուկի համար գրվող նոր ստեղծագործությունների հայտնվելուն: Այսպես, դուդուկը, որպես տեմբրային բնորոշ երանգով գործիք, օգտագործվեց կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայում: Կոմպոզիտոր Յուրի Գևորգյանը գրեց Կոնցերտ դուդուկի և նվագախմբի համար, որտեղ նա օգտագործեց երկու տարբեր լարվածքի գործիք (in D և



in A)՝ տեմբրային կոնտրաստ ստանալու նպատակով: Կոմպոզիտոր Ստեփան Ռոստոմյանը օգտագործեց դուդուկը իր սիմֆոնիայում, որը հնչեց «Լոնդոն Սինֆոնիետտա» նվագախմբի կատարմամբ (դուդուկի մասը նվագեց Արայիկ Բախտիկյանը): Ռուբեն Ալթունյանը ստեղծեց «Թափուր անդաստան», Էդվարդ Հայրապետյանը՝ «Դարերի միջով» ստեղծագործությունները դուդուկի և կամերային նվագախմբի համար:

Իսկ կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի «Ակացիաների առավոտյան երգի բուրմունքը»՝ դուդուկի, սոպրանոյի և լարային նվագախմբի համար, «Արև, գինի, ժամանակի քամի»՝ դուդուկի, ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար, «14 մշակումներ և փոխադրումներ ըստ Կոմիտասի»՝ դուդուկի և լարայինների համար, «Համբարձվող քամանչա»՝ դուդուկի, թավջութակի և դաշնամուրի համար, «Իմ բարձրագնայ լուսին»՝ դուդուկի, զուռնայի, արաբական քանոնի, ճապոնական շոի, չինական շենգի և ութ արևմտյան գործիքների համար, ինչպես նաև Ալտի կոնցերտը՝ «Surgite Gloriae», որի մեջ օգտագործվել էր դուդուկը՝ դիսկանտի, բարիտոնի և նվագախմբի հետ, անընդմեջ հնչում են աշխարհի տարբեր երկրներում՝ դուդուկահար Գևորգ Դաբաղյանի և բազմաթիվ հանրահայտ երաժիշտների ու խմբերի կատարմամբ, ինչպիսիք են՝ թավջութակահար Յո-ՅոՄան և «Մետաքսի ճանապարհ» անսամբլը, ալտահար Յուրի Բաշմետը և «Մոսկվայի Սոլիստներ» նվագախումբը, Ամստերդամի «Ատլաս» նվագախումբը, «Քսենյա» քառյակը, Հայաստանի Ազգային Կամերային նվագախումբը, Կոմիտասի անվան քառյակը:

Վերոհիշյալ կոմպոզիտորների շարքում իր պատվավոր տեղն ունի կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանը, որը հեղինակ է ինչպես դուդուկի, այնպես և ժողովրդական այլ նվագարանների համար գրված բազմաթիվ ստեղծագործությունների:

Անշուշտ, այս կոմպոզիտորների մեծ մասը, ստեղծագործության վրա աշխատելիս, նկատի է ունեցել կոնկրետ կատարողի և հաշվի է առել վերջինիս վարպետության աստիճանն ու զգացական աշխարհը: Այսպես, Ա.Տերտերյանն իր սիմֆոնիայում լսում էր դիցուկ Ջիվան Գասպարյանի նվագը, Յ.Գևորգյանը իր կոնցերտը գրել է հատուկ Վաչե Հովսեփյանի կատարման համար, Ռ.Ալթունյանը, Է.Հայրապետյանը, Վ.Շարաֆյանը՝ Գևորգ Դաբաղյանի և այլն:

Լավագույն հայ կատարողները 20-րդ դարում բազմադարյա դուդուկն ու հայ երգը բարձրացրեցին համաշխարհային բեմ. Վաչե Հովսեփյանի «Հովերն ընկան» մեղեդին առաջինը հնչեց Հայաստանի սահմաններից դուրս, և այդ ձայնագրությունը հետագայում օգտագործեց հայտնի երաժիշտ Փիթեր Գաբրիելը՝ «Հիսուսի վերջին փորձությունը» ֆիլմի երաժշտության մեջ: Ջիվան Գասպարյանի, Գևորգ Դաբաղյանի և այլոց բազմաթիվ ձայնագրություններ նույնպես օգտագործվել են տարբեր երաժիշտների կողմից և հնչել համաշխարհային կինոյի էջերից («Գլադիատոր», «Մայրիկ», «Արարատ», «Դոկտոր Ժիվագո», «Միսս Մարիա», «Սոխակների բույնը» և այլ ֆիլմերում):

Դուդուկի պահանջարկի սահմաններն այսօր ավելի քան լայնացել են. այն ներմուծվել է ջազային արվեստ և, օգտագործվելով ֆոլկ-ջազի սինթեզման փորձարկումներում, ստացել հետաքրքիր լուծումներ ու մեկնաբանություններ: Ավելին, էթնոերաժշտագետ Հ.Պիկիչյանը գրում է, որ «20-րդ դարում բազմաթիվ երկրներում լայն ծավալում ստացած տրանսցենտենդալ մեդիտացիոն տեխնիկաների՝ մտավարժանքի ոլորտ ներմուծվեց նաև դուդուկի հնչողությունը, հատկապես լայնաշունչ նվագները՝ իբրև բնություն-աստվածային սկիզբ կապի հնչյունային արտահայտություն»[3]:

Այս ամենը վկայում է այն, որ հայի նվագարանը համահայկական խորհրդանիշից վերածվել է համամարդկայինի: Մեր համեստ կարծիքով, բնավ էական չէ, թե որտեղ է այն ծագել: Կարևոր է այն, որ գործիքը հայ կատարողի ձեռքին խոսում ու երգում է հայերեն, նաև այն չափանիշը, ըստ որի հայ կատարողն իր ներդրումն է ունեցել նվագարանի զարգացման ու կատարելագործման ասպարեզում. հենց դրանով է հայոց իրականության մեջ որոշարկվում **դուդուկի հայկական դպրոցի կամ ուղղության գոյությունն ու հայ դուդուկահարի երևույթն**՝ իր ավանդական և ժամանակակից գործառության ամբողջության մեջ:

Իսկ նրանք՝ դուդուկի հայ վարպետները, շատ շատ են. ավագներից՝ Կարապետ Եղոյան, Մարգար Մարգարյան, Լևոն Մադոյան, Կարո Չարչօղլյան, Վաչե Հովսեփյան, Խաչիկ Խաչատրյան, Ջիվան Գասպարյան, Վլադիմիր Հարությունյան, Սերգեյ Կարապետյան, Արարատ Պետրոսյան, Սուրեն Գրիգորյան, Կարապետ Եղոյան, Սուրեն Թովմասյան, Արտավազդ Տեր-Հովհաննիսյան, Վլադիմիր Կրոյան, Մկրտիչ Մալխասյան, Գեորգի Մինասով, Սերգեյ Սիմոնյան, Գագիկ Գյուրջյան, Խաչիկ Ավագյան, Հովհաննես Կասյան, Եղիշե Մարգարյան, միջին սերնդից՝ Եղիշե Մանուկյան, Հարություն Գևորգյան, Բենիկ Իգնատյան, Սարո Դանիելյան, Խաչիկ Պետրոսյան, Մկրտիչ Կարապետյան, Գևորգ Դաբաղյան, Արմեն Սարգսյան, Ռուբիկ Հարությունյան, Արարատ Դալլաքյան, Ավետիք և Հակոբ Մարտիրոսյաններ, Արմեն Ստեփանյան, Արա Բախտիկյան, Նորայր Ժամհարյան, Գագիկ Մալխասյան, երիտասարդներից՝ Արմեն Գրիգորյան, Կարապետ Շաբոյան, Վարազդատ Հովհաննիսյան, Արշակ Սահակյան, Արա Մկոյան, Արտակ Կոստանդյան, Գուրգեն Ասիլյան, Վահան Հարությունյան, Հովհաննես Ղազարյան, Կամո Սեյրանյան, Էմմանուել Հովհաննիսյան, Վաչե Փաշինյան, Արտակ Ասատրյան և շատ ու շատ ուրիշներ:

Ավելացնենք նաև, որ ազգային փողային նվագարանների կատարողներից շատ-շատերը տիրապետում են միաժամանակ մի քանի գործիքների՝ դուդուկ, զուռնա, պկու, երբեմն նաև՝ պարկապզուկ, շվի, սրինգ, եվրոպական կլարնետ՝ ազգայնացված կատարողական մաներայով, և նույնիսկ՝ սաքսոֆոն:

Թեպետ դուդուկը հնուց ի վեր համարվել է բացառապես տղամարդու գործիք, սակայն 20-րդ դարի վերջում ի հայտ եկան նաև կին դուդուկահարներ, թե՛ պրոֆեսիոնալ՝ կոնսերվատորիական կրթությամբ, թե՛ սիրողական մակարդակի, սակայն՝ արդեն իսկ ճանաչման արժանացած (Արմինե /ԱՄՆ/, Աննա Սարգսյան, Լիլիթ Հովսեփյան):

Մեկ հոդվածի սահմանները բավարար չեն բոլորի մասին խոսելու, թեպետ յուրաքանչյուրն իր չափով արժանի է գովեստի ու հիշատակման: Ամեն մեկն իր բաժին քարն է դրել ժողովրդական կատարողական արվեստի կառուցման գործում, սակայն, վստահաբար, բոլորին միավորում է մեկ ընդհանուր բան՝ ջերմ ու անսահման **սերը դուդուկի նկատմամբ**:

1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝ 9-10
2. Միրզոյան Կ., Դուդուկը սեր է: Գրական թերթ, թիվ 5, 27.01.1989
3. Պիկիչյան Հ., Դուդուկ. ավանդույթ և արդիականություն:«Ժողովրդական ստեղծագործություն և կոմպոզիտորական արվեստ» (միջազգային գիտաժողով-փառատոնի զեկուցումների ժողովածու): Երևան, 2006, էջ՝ 88

**Կարապետ Եղոյան** (19-րդ դարի վերջ)*(տես նկարը, էջ 24, նստած մեջտեղում)*

Այս չափազանց համեստ և, միաժամանակ, արտասովոր մարդու մասին Գյումրիում մինչև այսօր հետաքրքիր զրույցներ ու եղելություններ են պատմում: Դրվագներ, որ իր դուդուկին ընդմիշտ սիրահարված երաժշտի մասին են, ու վարպետ կատարողին ներկայացնող պատառիկներից հավաքված հուշեր:

Ուստա Փանչոյի (ճանաչված երաժշտին այդպես էին կոչում հին ալեքսանդրապոլցիները քաղաքում) գերդաստանն էլ հայտնի իրադարձությունների հետևանքների կրողներից էր, և, կորստի ցավը սրտում, պատմական Հայաստանի էրզրում քաղաքից գաղթել-եկել էր Կարս, ապա անցել Գյումրի ու հաստատվել այստեղ: Այն նվիրական բաները, որ հասցրել էին վերցնել տանից, հին Ավետարանն ու պապի դուդուկն էր, որոնք, իբրև մասունք ու ամենազոր սուրբ պահապան, պատանի Կարոյի կրծքին կապած, տատը բերել հասցրել էր քաղաք: Իր համեստ բնավորության, պատրաստակամության, ժողովրդական եղանակների ու երգերի բացառիկ իմացության ու քնքուշ նվագի շնորհիվ, նա շուտով մեծ ճանաչում է ստանում՝ դառնալով ալեքպոլցիների ընտանեկան խնջույքների ու զանազան արարողությունների մշտական ուղեկիցն ու ցանկալի հյուրը:





Տեսել ու լսել էր Շերամին, ոգևորվել նրա երգերով և հոգու մեջ պահել նրանից լսած «դասերը», մաքուր ու վճիտ նվագով հիացրել իր ունկնդիրներին: Սիրով էր անում իր գործը: Երբեք չէր դժգոհում ու կամ խորշում, եթե վճարը ցածր էր լինում, կամ պատվիրատուն նեղսրտում էր իր տված գումարի սակավությունից: Ժամանակակիցները Կարապետ Եղոյանին հիշում են որպես առաքինի և որոշակի սովորույթներ պահպանող մարդու: Պատմում են, որ, եթե մեկի հարսանիքն էր «ծաղկեցրել» ժամանակին, ապա դժբախտության ժամանակ նա հրաժարվում էր վարձատրությունից՝ հանգուցյալին հարգանքի տուրք մատուցելը համարելով իր պարտքը, իսկ գործընկերների ակնարկներին պատասխանում էր.«Աղաթ է, օղուլ...»:

Դուդուկահարի հուզառատ նվագը մեծ հետաքրքրությամբ լսում ու բարձր էր գնահատում հայ ժողովրդական երաժշտության մեծ գիտակ, կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը: Դանիել Ղազարյանն էլ իր հերթին հորդորում էր ճանաչված երաժշտին՝ հաճախակի ելույթներ ունենալ նաև բեմահարթակից: Ալեքսանդրապոլի, իսկ հետո նաև Լենինականի թանգարանների ֆոնդերում համերգային մի քանի ազդագրեր են միայն պահպանվել, որտեղ նշվում է երաժշտի անունը: Սակայն հայտնի է, որ դուդուկահար Կարապետ Եղոյանը բազմիցս մասնակցել է ժողովրդական երաժշտության փառատոների ու հանդիսությունների, թե՛ Հայաստանում և թե՛ Անդրկովկասի զանազան քաղաքներում՝ Թբիլիսի, Բաքու, Կիրովաբադ և այլուր, արժանանալով բարձր գնահատականի ու մրցանակների: Ուրիշ քաղաքներում ապրելու և նվագելու շատ առաջարկներ է մերժել՝ միայն Լենինականում տեսնելով իրեն ու իր նվագը: Ցավոք, երաժշտի կատարումներով ձայնագրություններ նույնպես չեն պահպանվել: Միայն հնատիպ մի քանի ձայնապնակներ կան, որոնց պիտակների վրա եղած կցկտուր տեղեկություններից միայն կարելի է ենթադրել, որ կատարողը՝ Կարոն, նույն ինքը՝ բոլորի կողմից սիրված ուստա Փանչոն է:

Իր յուրատիպ թավշյա նվագով ու մեկնաբանման առանձնահատուկ կերպով՝ նա իր շուրջը հավաքեց շնորհալի շատ երիտասարդ երաժիշտների, որոնց թվում էին Կարապետ Սանդոյանը, Լևոն Մադոյանը, Կարո Չարչօղլյանը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրի կատարման մեջ կարելի է զգալ վարպետից ժառանգածը՝ յուրահատուկ մի գիծ, որն այնքան բնորոշ է Շիրակի երաժշտական կատարողական մեկնակերպին:

Երբ Փանչոյին հարցնում էին, թե՝ ուստա՛, երբվանի՞ց ես սկսել նվագել, ժպտում ու պատասխանում էր. «Ինչքան ընձի կըհիշեմ՝ կընվագեմ, էլի...»:

**Բագրատ Բաղրամով** (1850-1939 )

Դուդուկահար, երգիչ-դափահար Բագրատ Բաղրամովը ծնվել է Թիֆլիսում: Երաժշտական ձիրքը ժառանգել է մորից, որն ունեցել է գեղեցիկ ձայն:14 տարեկանից սկսել է նվագել ու երգել սազանդարների խմբերում: 17-18 տարեկանում արդեն ճանաչված երաժիշտ էր Թիֆլիսում, նույնիսկ՝ Կովկասում:

Ըստ որոշ տվյալների, սազանդարային երաժշտության ավանդույթը քաղաքում հիմնել է հենց Բագրատը, կամ, ինչպես հաճախ կոչում էին նրան, «Большой Баграт»:Հին թիֆլիսցիները մինչև օրս չեն մոռանում այն տոնակատարություններից մեկը, երբ Բագրատն իր «Չոբան-բայաթիով» գրավեց Ղազախ մեկնող բեգի ուշադրությունը: Բեգը առաջարկում է Բագրատին դառնալ իր փեսան, խոստանում նրան հարստություն, բայց նա հրաժարվում է»[1]:

Բագրատը հաճախ հրավիրվել է Իրան՝ Շահի կազմակերպած տոնախմբություններին, և արժանացել մեծ պարգևների: Իր գեղեցիկ տենորով նաև երգչի համբավ է վայելել: «Պատե-ռեկորդ», «Պրեմյեր-ռեկորդ», «Սպորտ-ռեկորդ» հայտնի ֆիրմաները Բագրատի կատարումներով մեծ թվով ձայնագրություններ են թողարկել[2]:

Ծավալած երաժշտական հասարակական գործունեության համար Բագրատն արժանացել է Վրաստանի ժողովրդական արտիստի կոչման:

Վախճանվել է Թիֆլիսում, 88 տարեկան հասակում:

11.Б.Барнов “Музыканты старого Тбилиси”, Тбилиси,1974, стр.23-26 (на груз. яз).

2. “Дискография армянской монодической музыки” сост. Апинян А., Бадалян Ж., Киракосян А., Л-д, 1989, стр. 143,145,183,185,186,247

 143,145,183,185,186,247

**Գևորգ Չաբանով** (Գևորգ Շուլավրեցի, 1884-1950)

Գևորգ Սարգիսի Չաբանովը կամ Շուլավրեցին ծնվել է Շուլավերում (Վրաստան): Պատմության մեջ մնացել է որպես զուռնա և դուդուկ նվագող, ինչպես նաև՝ շվիահար, երգիչ-դափահար:

18-19 տարեկանում արդեն լավ դուդուկահարի համբավ է ունեցել և ղեկավարել է Շուլավերի իր խումբը (դաստան):

1927 թվականին Լենինգրադի կոնսերվատորիայում տեղի ունեցած համերգների մասնակիցներից մեկն էր՝ Ս.Օգանեզաշվիլու հետ միասին[1]: Համերգներից հետո իր գործիքներից մի քանիսը նվիրել է կոնսերվատորիային:

Գ. Շուլավրեցին նույնպես ունի ժամանակի հայտնի ֆիրմաների կողմից թողարկված խառը ձայնապնակներ:

Վախճանվել է Թիֆլիսում:

1. Մ.Բրուտյան, Հայ Քաղաքային ժողովրդական երաժշտական կատարողական արվեստի պատմության էջեր, Երևան, 2001, էջ՝ 76

**Մարգար Մարգարյան** (1894-1941 )



■ *Մարգար Մարգարյան*

Մարգար Ավետիսի Մարգարյանը ծնվել է Վաղարշապատում: Հասուն տարիքում նա դառնում է էջմիածնեցի հայտնի դուդուկի կենդանի լեգենդ՝ ուստա Մարգարը: Նա համարվում է առաջին պրոֆեսիոնալ դուդուկահարը, որը մայրաքաղաք Երևան եկավ վարպետ Հարութի և Կ. Սարգսյանի դպրոցն անցած:

Մ. Մարգարյանը նվագել է արևելյան գործիքների անսամբլում, այնուհետև՝ Վ.Բունու ղեկավարած Արևելյան սիմֆոնիկ նվագախմբում, 1926-ից դարձել է Հայաստանի ռադիոյի ժող.գործիքների անսամբլի մենակատար /ղեկ.՝ Ա. Մերանգուլյան/: Նա ունեցել է հարուստ երգացանկ՝ պարեղանակներ, հայկական ժողովրդական ու աշուղական երգերի գործիքային փոխադրումներ, մուղամներ: 1939-ին մասնակցել է Մոսկվայում կայացած հայկական արվեստի տասնօրյակին: Ժող.գործիքների երաժիշտ-կատարողների համամիութենական ստուգատեսում նա արժանացել է երրորդ մրցանակի: Սա նշանակում է, որ **նա առաջին անգամ դուդուկը բարձրացրել է համերգային բեմահարթակ**: Նրա նվագով հիացել է աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Ուստա Մարգարի կատարումով թողարկվել են ձայնապնակներ, գրառվել կինոֆիլմերի երաժշտություն («Պեպո», «Զանգեզուր», «Սևանի ձկնորսները», «Լեռնային հեղեղ» և այլն):

Նա մեծ դեր ունեցավ դուդուկի ձայնի արտաբերման, տեմբրի, շրթունքի խաղերի վարպետության ձևավորման պրոցեսում: Նա առաջինն էր, ով ժողովրդական երգը մատուցեց դուդուկի նվագակցությամբ:

Նրա նվագով հիացել է աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Մարգարյանը նվագում էր Խաչատրյանի համար, երբ վերջինս աշխատում էր իր «Գայանե» բալետի վրա: Մարգարի մտերիմներից էր Եղիշե Չարենցը:

 Ուստա Մարգարի կատարումով թողարկվել են ձայնապնակներ, գրառվել կինոֆիլմերի երաժշտություն («Պեպո», «Զանգեզուր», «Սևանի ձկնորսները», «Լեռնային հեղեղ» և այլն): Մարգար Մարգարյանը հանդես էր գալիս նաև Երևանի կինոթատրոններում, ուր նվագում էր համր ֆիլմերի ցուցադրումից առաջ: Այդ ֆիլմերից են «Նամուս», «Գիքոր», «Զարե», «Խաս-Փուշ». իիրավի, նա իր նվագով կենդանի շունչ էր տալիս դրանց:

Տարիներ շարունակ նվագակցելով հայ երգի շատ վարպետների՝ նա զգացել է գործիքը կատարելագործելու անհրաժեշտությունը: Փոքրացնելով գործիքի չափերը, նա մոտեցրեց ձայնանցքերի միջև եղած տարածությունը՝ օգնելով վերացնել կատարողի մատների բացվածքի ավելորդ լարվածությունը: Այդպես ծնվեց դուդուկի միջին տեսակը, որը դարձավ նախատիպը **in D** տարատեսակի:

Սիրված վարպետի կատարմանը բնորոշ էր «հուզական հագեցվածությունը և ազգային-ժողովրդական ցայտուն երանգը»[1]:

Մ. Մարգարյանը մահացել է Երևանում:

1. Էլոյան Հ., Մարգար Մարգարյան: Հայկական Սովետական Հանրագիտարան /ՀՍՀ/, հատոր 7, Երևան, 1981, էջ՝ 302

**Կարո Չարչօղլյան** (1905 -1956)

Կարո Չարչօղլյանը ծնվել է Լենինականում (ներկայումս՝ Գյումրի): Հայրենի քաղաքում նա ուսանել է հայտնի դուդուկահար Փանչո Կարոյի մոտ, հետագայում, խորհր-







Կարո Չարչօղլյան



Կարո Չարչօղլյանի դուդուկը

դային բանակում ծառայելու տարիներին կազմակերպել է ժող.գործիքների անսամբլ, ընդգրկելով դուդուկ, զուռնա, շվի, դհոլ: Մի որոշ ժամանակ նվագել է Վարդան Բունու Արևելյան սիմֆոնիկ նվագախմբում, նաև՝ Ռադիոյի ժող.գործիքների անսամբլում (ղեկ.՝ Ա.Մերանգուլյան):
Իր կյանքի հետագա տարիներն անց է կացրել Բաքվում, հանդես է եկել Բաքվի ժող.գործիքների պետական նվագախմբում: Հուզեիր Հաջիբեկովի համահեղինակությամբ դասագիրք է գրել դուդուկի մասին: Նա բազմակողմանի զարգացած, նաև նոտաճանաչ դուդուկահար էր:
Երկար տարիներ Բաքվում նվագել է նաև բժիշկ Ավանես Իոնիսյանի հայտնի անսամբլում, իսկ 1939-ին արժանացել է համամիութենական մրցույթի դափնեկրի կոչման:
«Նրա դուդուկի տեխնիկական հնարավորություններն անգերազանցելի էին՝ կատարման յուրաձնությամբ, ձայնի որակի արտաբերմամբ: Նա իմպրովիզացիայի մեծ վարպետ էր, տիրապետում էր մի քանի նվագարանների»[1]:
Կարո Չարչօղլյանը, բացի ազգային նվագացանկից, դուդուկով կատարում էր նաև արևելքի դասական երաժշտության՝ մուղամաթի նմուշներ և այլն: Նա ապացուցում էր, որ դուդուկը, թեև սիմֆոնիկ նվագարան չէ և համեմատաբար սահմանափակ հնարավորություններ ունի, սակայն կատարողի վարպետության, բարդ իմպրովիզացիոն հնարքների շնորհիվ կարելի է հասնել ցանկացած բարդության ստեղծագործության կատարմանը: Կարո Չարչօղլյանի նվագը իր հոգու և հույզերի, տրամադրությունների արտահայտիչն էր: Ցավոք, այդ անկրկնելի երաժշտի կատարումները մեզ չեն հասել՝ ձայնագրման համապատասխան տեխնիկայի բացակայության պատճառով, զրկելով մեզ ըմբոշխնել այդ վիրտուոզ դուդուկահարի կատարումները:
Կարո Չարչօղլյանը մահացել է Բաքվում:

1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝20

**Խաչիկ Տալգաուկով** (1907-1962)
Խաչիկ Տալգաուկովը Թիֆլիսի դուդուկահարների առաջին անսամբլի հիմնադիրն ու ղեկավարն է եղել: Ճանաչված էր իբրև վարպետ, ֆենոմեն դուդուկահար, ուսուցիչ և հրաշալի մարդ՝ հումորով և բարեխիղճ:
Ծնվել է Թիֆլիսում, բազմանդամ ընտանիքում: Նվագել սովորել է դուդուկահար Դաթա Զուբիաշվիլու մոտ: Ինքը նույնպես հորինել է դուդուկի համար և հրատարակել այդ հորինումների ձայնագրյալ ժողովածուն: Զբաղվել է Սայաթ-Նովայի և Գյուրջու երգերի հավաքմամբ ու տարածմամբ: Երազել է հիմնել դուդուկի դասավանդման համար ուսումնական հաստատություն Լավատեղյակ էր քաղաքի երաժշտական ավանդույթներին, և ինքն էլ ակտիվ շարունակում էր դրանք:
Մինչև 1933 թվականը Խաչիկն աշխատել է Վրաստանի Ռադիոկոմիտեում, 1932-36 թթ.՝ «Կովկասի արծիվ» անսամբլում, իսկ 1936-ից մինչև կյանքի վերջը՝ Վրաստանի Ֆիլհարմոնիայում՝ իր իսկ հիմնադրած դուդուկահարների անսամբլում:
Մեծ հայրենականի տարիներին Խաչիկ Տալգաուկովը բազմաթիվ շեֆական համերգներով հանդես է եկել տարբեր վայրերում:
Մահացել է Թիֆլիսում:

**Հայրիկ Բախտիկյան** (1909 -1982)
Հայրիկ Սարիբեկի Բախտիկյանը ծնվել է Գավառի Հացառատ գյուղում: Նվագել է դուդուկ, զուռնա, սուֆարա (բլուլ), կլարնետ: Նվագել սովորել է Ցամաքաբերդցի վարպետ Նահապետից: Հայրիկ Բախտիկյանը Գեղարքունիքի շրջանի ամենահայտնի դուդուկահարներից էր: Նա պատրաստել է նաև նվագարաններ՝ բլուլ և իր դուդուկի ղամիշները:
Հայրիկ Բախտիկյանին աշակերտել են թոռները՝ Արա Բախտիկյանը, որը հետագայում սովորել է Երևանի Կոմիտասի անվ. Կոնսերվատորիայում՝ Ջիվան Գասպարյանի դասարանում, և Սաշա Տիգրանյանը:

**Լևոն Մադոյան** (1909-1964 )
Լևոն Մանուկի Մադոյանը ծնվել է Ալեքսանդրապոլում: Մայրը 10 տարեկան Լևոնին է հանձնել պապի դուդուկը: Փոքրիկ Լևոնը, մանկուց լսելով տեղի դուդուկահար երաժիշտներին, աստիճանաբար ծանոթացել է դուդուկի գաղտնիքներին:





Մանուկ հասակում նա լսել է նաև «Առավոտ լուսո» մեղեդին և, հետագայում, «Սահարի» անվան տակ, այդ մեղեդու ժողովրդականացված տարբերակով նվագում ու ազդարարում էր Գյումրվա հարսանեկան ծեսի սկիզբը: 1923-ին բացվել է Լենինականի առաջին երաժշտական դպրոցը, որտեղ էլ նա սովորել և իր բեմական առաջին քայլերն է արել:
1923-ից Լ.Մադոյանը աշխատել է նաև ՀայՖիլհարմոնիայի Լենինականի բաժանմունքի արևելյան գործիքների անսամբլում: Կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը, լսելով նրա նվագը, ասել է՝ «Լավ է, Լևոն ջան, հայավարի կչալես (կնվագես՝ Ա.Կ.)»[1]:
Նրան, մի առիթով, դիմել է մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը՝ ցանկություն հայտնելով, որ «Էս ինչ զուլում աշխարի է» բանաստեղծությունը երաժշտություն ունենա: Նրանք միասին գտել են մեղեդին և այդպես ծնվել է
*Սիրեցի, յարս տարան, յարա տվին ու տարան...* երգը:
Մադոյանի համերգների թիվը անցնում է հինգ հարյուրից: Նա ելույթներ է ունեցել մի շարք երկրներում, և նրա կատարումներն աչքի են ընկել բարձրակարգ վարպետությամբ:
1939-ին Լ. Մադոյանը տեղափոխվել է Երևան: Ֆիլհարմոնիայում կազմակերպել է ժող.գործիքների անսամբլ, որտեղ երգում էին Ա.Գյուլզադյանը, Մ.Դոլգոռուկյանը:
1952-ից Ա. Մերանգուլյանի հրավերով նա սկսել է աշխատել Ռադիոյի ժող.գործիքների պետական անսամբլում, որպես մենակատար: Համերգներով հանդես է եկել Հայաստանի տարբեր վայրերում, ինչպես նաև Մոսկվա, Թբիլիսի, Բաքու, Տաշքենդ, Աշխաբադ, Դոնի Ռոստով քաղաքներում: 1939-ին, դուդուկահար Մ. Մարգարյանի հետ միասին, մասնակցել է հայկական արվեստի ու գրականության տասնօրյակին, արժանացել կառավարական պարգևի և առաջին մրցանակի: Նրա դուդուկը հնչել է նախկին ԽՍՀՄ միության և սփյուռքի շատ բեմերում:
1961-ին Լ. Մադոյանը արժանացել է ժողովրդական արտիստի պատվավոր կոչման: Իրապես, ժողովուրդը ջերմորեն էր սիրով Լևոնին, և գյումրեցիք նրան կնքել էին «Փըսո» մականունով:
Վարպետի երգացանկում տեղ են գտել հայկական ժողովրդական և աշուղական երգեր, պարեղանակներ, արևելյան մուղամներ: Իր հավաստմամբ՝ **նա վերականգնել է Շիրակի բազմաթիվ մոռացված երգեր ու պարեղանակներ,** կատարել մեծ թվով ձայնագրություններ: Նրա կատարումներն աչքի են ընկնում բարձրակարգ վարպետությամբ: Այսօր, **դասական կատարումներ են համարվում նրա «Հովվի կանչը», «Ճամփու դայդեն» մեղեդիների, «Մաճկալ», «Որսկան ախպեր», «Սիրեցի, յարս տարան», «Դուն էն գլխեն» և շատ այլ երգերի գործիքային մեկնաբանությունները**: Նա կարողանում էր երգը կամ մեղեդին մատուցել նորովի՝ մադոյանական ոճով: Վարպետի խոսքերով՝ ինքը չէր սիրում ավելորդ քաղցրացնել մեղեդին, շրթունքներով չէր միջամտում հնչյունին և ավելորդ գեղգեղացնում, քանի որ գեղջուկ երգը դրա կարիքը չունի և հետո՝ «դուդուկի ձայնը արդեն շատ խորհրդավոր է և հոգու մեջ կմխրճվի: Կարիք էլ չկա դուդուկին ավելի ողբերգական հնչերանգ տալ՝ դուդուկը դրա համար չի, դուդուկի նման պարեցնող չկա»[2]:
Երգիչ Ն.Մնացականյանը գրել է. «Այն, ինչ հեռու ժամանակներից ավանդաբար եկել ու ամբարվել էր դուդուկահարների անդաստանում, բոլորովին նոր որակ ստացավ Լևոն Մադոյանի արվեստում: Դուդուկով կատարվող հայ երգն ու երաժշտությունը նրա մատների տակ վերստին հայացան և սկսեցին հնչել ավելի կիրթ, չափավոր, ներքին բարեկրթությամբ, ընդ որում՝ հաճախ ավելի էպիկական, քան քնարական շնչով: **Դուդուկը նրա շնորհիվ սովորական կենցաղից բարձրացավ մինչև պրոֆեսիոնալ լսարանները և արևելյան նվագարանների մեջ ճանաչվեց իբրև փառահեղ թագուհի: Դրանում մեծ էր Լ.Մադոյանի ծառայությունը»**[3]**:**
Լ.Մադոյանը մահացել է Երևանում:

1.Դարբինյան Հ., Լևոն Մադոյանը: Երաժշտական Հայաստան, թիվ 2 /17/ 2005, էջ՝ 35
2. Նույն տեղում
3. Սովետական Արվեստ, թիվ 3, 1986, էջ 31

**Վաչե Հովսեփյան** (1924 -1978)
Վաչե Արտաշեսի Հովսեփյանը ծնվել և մահացել է Երևանում: Ապրել-մեծացել է Նորքի գեղատեսիլ մի վայրում, ուր հնարավոր չէր անխառն մնալ բնության ձայներից: Ծիրանենու ծառը, որ բնիկ հայկական է համարվում՝ ամրակուռ, չճկվող, խոր ար-















Վաչե Հովսեփյան

ճատներով, զարմացնում էր նրան իր գարնանային գեղեցկությամբ, ամառային ոտ-դի քաղցրությամբ և, հետագայում՝ նաև որպես դուդուկի համար լավագույն հումք, հաստատելով այն տարածված կարծիքը, որ դուդուկը հին է այնքան, որքան հայկական ծիրանենին ու հայ ազգը:
Վաչե Հովսեփյանն այն ընտրյալներից է, ում ձեռքին այդ, կարծես, քմահաճ գործիքը, խոսում է, մեղեդին ուղղակի հոսում է նրա միջից: Բայց մինչ այդպիսի վարպետության հասնելը, նա անցել է կրթական ուղի՝ սկսելով նվագել Երևանի թիոներների և դպրոցականների պալատի գործիքային խմբում /ղեկ. Մ.Չաղալյան/:
Հայաստանում այդ տարիներին ճանաչված էին դուդուկահարներ Լ.Մադոյանն ու Մ.Մարգարյանը, իսկ Անդրկովկասում հայտնի էր Կարո Չարչօղլյանը, որն էլ դարձավ Վաչեի հեռակա ուսուցիչը: Նա ժամերով ինքնամոռաց լսում էր Կարոյի նվագը և երազում հանդիպել իր վարպետին:
1944 թ. նա ընդունվում է Ռադիոկոմիտեի ժող.գործիքների անսամբլ, որտեղ հասունանում և հմտանում է, յուրացնում դուդուկի կատարողական առանձնահատկություններն ու տեխնիկան: Պրոֆեսիոնալ գիտելիքների պակասը, սակայն, նրան բերում է Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան: Այստեղ նա սովորում է դաշնամուր նվագել և տեսական գիտելիքներ ձեռք բերում, որը նրան օգնում է իր հետագա ստեղծագործական կյանքում:
Ռադիոկոմիտեի ժող.գործիքների անսամբլը իսկական դպրոց եղավ Վաչեի համար: Նա պատմում է. «Ես շատ բան սովորեցի Լ.Մադոյանից: Նրա դուդուկը պարզապես «դողում էր» նրանից: Մտքումս դրել էի՝ ինչ գնով էլ լինի սովորել, վարպետանալ»[1]:
Վաչեի վարպետ կատարումներն ու սեփական ստեղծագործությունները (նա հեղինակ է մեկ տասնյակ երգերի և պարեղանակների) երաժիշտ-երգահանին բերեցին ճանաչում և բարձր գնահատանք. 1965-ին նա արժանացավ հանրապետության վաստակավոր, իսկ 1977-ին՝ ժողովրդական արտիստի կոչումներին: «Վերադարձիր», «Երեքնուկ», «Երանի թե», «Հայաստանի աղջիկներ», «Իրիկնամուտին», «Հավատա ինձ» և այլ երգերի համար ներշնչանքի աղբյուր հանդիսացան Վ.Տերյանի. Պ.Սևակի, Ս.Կապուտիկյանի և այլոց բանաստեղծությունները: Սրանցից զատ, նրա նվագացանկում տեղ գտան հայկական ժողովրդական երգեր ու պարեղանակներ, ինչպիսիք են՝ «Հովերն ընկան», «Ինձ մի խնդրիր», «Որսկան ախպեր», «Դուն էն գլխեն» և այլն:
«**Վաչե Հովսեփյանի նվագը զերծ էր ավելորդություններից, - գրում է թերթերից մեկը,- այստեղ հստակ նկատելի էին կոմիտասյան երգարվեստի անաղարտությունը,** ժողովրդական երաժշտության գիտակներ Ա.Մերանգուլյանի, Ստ. Ջրբաշյանի, Մ.Բեգլարյանի հետ ունեցած բեղմնավոր ստեղծագործական աշխատանքի ներազդեցությունը: Վաչեն, իր զգայուն ներաշխարհով, կենսափորձով և մեծ աշխատասիրությամբ, սպունգի պես իր մեջ ներառնելով կատարողական արվեստի նորագույն ձեռքբերումները, կարողացավ ստեղծել ուրույն, սեփական արտահայտչաձևեր, կատարման հովսեփյանական ոճ ու կուլտուրա»[2]:
**Նրա կատարումներն առանձնանում են ազգային ոճական հստակությամբ, հուզականությամբ և բարձր վարպետությամբ:**
Վաչե Հովսեփյանը, մասնակցելով Հայկական արվեստի տասնօրյակներին, իր արվեստի հմայքով գերել է իր ունկնդրին, լինի դա Մոսկվայում, Վրաստանում, թե Ղազախստանում: 1975 թ. Տաշքենդում հրավիրված գիտական կոնֆերանսին, որը նվիրված էր մուղամաթի արվեստին, Վ. Հովսեփյանն իր «Հայկական բայաթի» և «Ադրբեջանական մուղամ» ստեղծագործություններով՝ վիրտուոզ տեխնիկայի ցուցադրմամբ և կատարման մեծ զգացմունքայնությամբ եզրափակեց համերգը: Դա մեծ հաղթանակ էր ամբողջ արևելքում:
Աշխարհի շատ բեմերում է նվագել Վ.Հովսեփյանը՝ Ֆրանսիա, Եգիպտոս, Հունաստան, Թուրքիա, ԱՄՆ: Նույնիսկ հեռավոր Իսլանդիայում, ուր ոչ մի հայ չկար, սիրեցին նրա նվագն ու հայ երգը:
Վ.Հովսեփյանը դուդուկի նոր տեսակներ ստեղծելու փորձեր կատարեց. գործիքը ձեռք բերեց ավելի մեծ ձայնատարություն և անվանվեց բաս-դուդուկ:
Վաչեն ամենուր ուներ իր սաները. որտեղ էլ լիներ, յուրաքանչյուր երիտասարդ դուդուկահարի հետ կիսում էր իր գիտելիքներն ու փորձը, տալիս էական խորհուրդներ:
Ռադիոյի ֆոնդում պահպանվող նրա բազմաթիվ ձայնագրությունների հիման վրա Մոսկվայի «Մելոդիա» ֆիրման թողարկել է ձայնապնակներ: 1972 թվականին կենտրոնական հեռուստատեսությունը և ռադիոն հաղորդել են նրա «Վերադարձիր» երգն՝







իբրև տարվա լավագույն երգերից մեկը: Նրա մասնակցությամբ «Երևան» ստուդիան նկարահանել է նաև «Նվագում է Վաչե Հովսեփյանը» երաժշտական ֆիլմը: Լոս Անջելեսի Բարսեղյան ձայնագրման ստուդիան հրատարակել է Վաչե Հովսեփյանի՝ ռադիոյի ֆոնդում պահված մի քանի ձայնագրությունների CD-ն:
Աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը, ունկնդրելով Վաչեի կատարումները, այսպես է արտահայտվել. «Քո նվագը աղոթք է, հայու աղոթք»:

**78 էջի վրա պատկերված են Վաչե Հովսեփյանի դուդուկները**

1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝ 34
2. Պետրոսյան Մ., Հուշի թևերով (Վաչե Հովսեփյան): Եթեր, 6-13.08, 1999

**Խաչիկ Խաչատրյան** (1924-2000)

Խաչիկ Բադալի Խաչատրյանը Բջնի գյուղից էր, դուդուկի տոհմական ավանդույթներով հարուստ և երաժշտության սիրահար ընտանիքից: Նրա պապը 1920-ականներին Հայաստանում համարվում էր լավագույն դուդուկահարներից մեկը: Նա 1939 թ. հայկական ռադիոյի ժող.գործիքների անսամբլի կազմում մասնակցել է Մոսկվայում Հայաստանի արվեստի և գրականության տասնօրյակին:
Հայրը՝ վարպետ Բադալը, նույնպես տիրապետում էր դուդուկ, զուռնա և կլարնետ գործիքներին: Եղբայրը՝ Սերգեյ Խաչատրյանը, ավարտելով Մոսկվայի կոնսերվատորիայի հոբոյի բաժինը, աշխատել է Ալեքսանդրովի անվան երգի-պարի անսամբլում, որպես փողային գործիքների կոնցերտմայստեր և հոբոյահար: Նրանց ընտանիքը, որպես երաժշտական գերդաստան, հայտնի է ավելի քան 200 տարի:
Խաչիկը սովորել է Բջնիի միջնակարգ դպրոցում և հենց այս դպրոցի երաժշտության ուսուցչից սովորել է նաև նոտագրություն:
1934 -35 թթ. ընտանիքով տեղափոխվել են Երևան: Խաչիկն իր կրթությունը շարունակել է Նար-Դոսի անվան դպրոցում, միաժամանակ հաճախել նաև պիոներ պալատի ժող.գործիքների խմբակ: Նրա վարպետն է եղել ժամանակի հայտնի դուդուկահար Մարգար Մարգարյանը:
1938-ին Խաչիկն ընդունվում է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան և ընդմիջումներով ավարտում 1953-ին:



Խաչիկ Խաչատրյան

Դպրոցն ավարտելուց հետո, 1940-ին վարպետ Մարգարը նրան տանում է նորաստեղծ ժող.գործիքների անսամբլի հիմնադիր և ղեկավար Արամ Մերանգուլյանի մոտ: Լսելով պատանու նվագը՝ Ա.Մերանգուլյանն անմիջապես նկատում է ապագա վարպետին և ընդունում անսամբլ:
1942 թ. Խաչատրյանը մեկնում է ռազմաճակատ: Մի քանի անգամ վիրավորվում է: Պատերազմի ավարտից հետո, 1945 -ին նրան ուղարկում են Թբիլիսի, որտեղ և ծանոթանում է իր ապագա կնոջ հետ: 1947-ին զորացրվում է և վերադառնում Երևան:
Իր պապի՝ վարպետ Հարությունի գործը Խաչիկ Խաչատրյանը, կամ ինչպես մտերիմներն էին կոչում՝ «բջնեցի» Խաչիկը, պատվով շարունակում է արդեն Ա.Մերանգուլյանի անունը կրող նույն ժող.գործիքների անսամբլում, որպես մենակատար-դուդուկահար: Այս անգամ նա արդեն կողք-կողքի նվագում է հայտնի դուդուկահարներ Լևոն Մադոյանի և Վաչե Հովսեփյանի հետ:
Լինելով գրագետ, աշխատասեր և լավ տիրապետելով նոտագրությանը՝ նա ծավալել է նաև մանկավարժական գործունեություն՝ դասավանդելով Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, որի սանն է եղել նաև ինքը:
Նրա լավագույն սաներն այսօր հայտնի են աշխարհում՝ Գևորգ Դաբաղյան, Արարատ Պետրոսյան և ուրիշներ: Իր հարուստ փորձն ու հմտությունները սիրով փոխանցել է բազմաթիվ երիտասարդների, այդ թվում նաև՝ սփյուռքից (Փարիզ, Նյու Յորք, Բոստոն): Երևանի կոնսերվատորիայում նա բացել է դուդուկի մասնագիտական դասարան, աշխատել է նաև Էջմիածին քաղաքի ակումբա-գրադարանային տեխնիկումի երաժշտական բաժնում:
Դուդուկի կատարողական բարդ տեխնիկային տիրապետելու և ժողովրդական երգերաժշտության ոգին անաղարտ արտահայտելու կարողություն և շնորհք ուներ Խաչիկը: Հայ երաժշտությունը նա պրոպագանդում էր ճաշակով և բարձր մակարդակով: Նրա կատարումները ուղեկցում էին ազգային օպերային ներկայացումները, նա ելույթներ էր ունենում Հայաստանի կենտրոնական ռադիոյով ու հեռուստատեսությամբ, ձայնագրվել է հայկական, վրացական, ադրբեջանական և ուզբեկական կինոնկարներում: Մասնակցել է Հայաստանի տասնօրյակներին Ղազախստանում, Մոլ-

դովայում, Մոսկվայում և այլուր:
Նվագել է Երևանի օպերայի թատրոնում բեմադրված Հ.Հաջիբեկովի «Քյոռ-Օղլի» օպերայում (բացի դուդուկից ընդգրկված էին նաև զուռնա, թառ և քամանչա): Որպես գրագետ և նոտաճանաչ դուդուկահար, Ա.Մերանգուլյանը առաջարկում է Խաչիկի թեկնածությունը:
Բազմաթիվ են տարբեր հանդիսավոր երեկոներին նվիրված համերգներին դուդուկի լավագույն կատարումների և ճանկավարժական գործունեություն ծավալելու համար ստացած պատվոգրերն ու շնորհագրերը:
Հայկական «Պեպո» կինոֆիլմի մեջ, Լ.Մադոյանի հետ միասին, որպես դամ-դուդուկահար, ձայնագրվել է նաև Խ. Խաչատրյանը, իսկ ինքը առանձին նվագել է «Լեռնային հեղեղ», «Լուսանկար» ֆիլմերում: Տաջիկֆիլմի «Հալվայի համը» կինոնկարի երաժշտության մեջ Խաչիկը հանդես է եկել Համամիութենական էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի (դիր.՝ Գ.Գարանյան) կազմում:
Իր բեղուն կատարողական գործունեության համար, 1978 թ. նա արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման:
Խաչատրյանն իր կենդանության օրոք ուներ նվագարանների մեծ հավաքածու (դուդուկներ, շվիներ, սրինգներ), որով շատ հպարտանում էր, իսկ իր ձեռքի դուդուկը տոհմական մասունք էր. գործիքի վրայի արծաթյա օղակներից յուաքանչյուրը որևէ մրցույթի հաղթանշան էր, իսկ նրա դուդուկն ամբողջովին զարդարված էր այդ օղակներով:
Իր կենսագրականում նա գրում է. «Ես երջանիկ եմ, որ լսել եմ ու տեսել դուդուկի լավագույն վարպետներին՝ Մ.Մարգարյան, Փանչո Կարո, Կ.Չարչօղլյան, Լ.Մադոյան, Վ.Հովսեփյան և այլ վարպետներ, որոնցից ամեն մեկն ինչ-որ բան է տվել ինձ իմ կատարողականության մեջ՝ երգերի ինքնատիպ մեկնաբանման, միայն տվյալ վարպետին բնորոշ հատկանիշի իմաստով: Ես կաշխատեմ օգտակար լինել բոլոր նրանց, ովքեր ուզում են սովորել դուդուկ նվագել»: Իրոք, Խաչատրյանը դուդուկահարների համար լավագույն մանկավարժներից էր՝ ինքնամոռաց, հոգատար:
Փաստորեն, նա համարվում է պրոֆեսիոնալ դուդուկահարներ կրթելու և դաստիարակելու գործընթացի հիմնադիրը մեզանում:
Խաչիկ Խաչատրյանը մահացել է Երևանում:



**Սուրեն Թովմասյան** (1924 - 1999)
Սուրեն Վարդանի Թովմասյանը ծնվել է Երևանում, աշխատավոր, բայց երաժշտասեր ընտանիքում: Հայրը՝ թեև որմնադիր էր, բայց սիրով սրինգ էր նվագում: Սուրենը նրանից էլ նվագել է սովորել: 12 տարեկանում արդեն նվագում էր վարպետ դուդուկահարների (Մ.Մարգարյան, Լ.Մադոյան, Կ.Չարչօղլյան) կողքին, ռադիոյի ժող.գործիքների անսամբլում (ղեկ.՝ Ա.Մերանգուլյան): Միաժամանակ սովորում էր, կատարելագործվում: Սակայն նրա երազանքները ընդհատվեցին պատերազմով. տակավին երիտասարդ, Սուրենը մեկնեց ռազմաճակատ՝ իր հետ վերցնելով իր սիրելի գործիքները: Նրա սխրանքների մասին շատ է խոսվել ու գրվել[1]: Իր անհավատալի քաջության համար բազմիցս պարգևատրվել է շքանշաններով: Բայց ամենից շատ նա իր նվագով է օգնել զինվորներին. հայկական պարեղանակների հնչյունների ներքո պար էին բռնում հայն ու ռուսը, վրացին ու բելոռուսը և բանակի մյուս մարտիկները, իսկ հետո ձեռքերի վրա էին բարձրացնում ամենակրտսեր մարտիկին՝ Սուրենին ու երկար ժամանակ վեր թցնում: Եվ այդպես՝ յուրաքանչյուր գրավված վայրերում: Չորս անգամ վիրավորվել է, վերջին անգամ վերավորվելուց հետո նա տեղափոխվել է Երևանի զինվորական հիվանդանոց, որտեղ նրան այցելել է Ա.Մերանգուլյանը և հորդորել՝ վերադառնալ անսամբլ: Առողջանալուց հետո, իրոք, Սուրենը վերադարձել է անսամբլ և ամբողջ հոգով նվիրվել իր սիրած գործին՝ երաժշտությանը: Հետագայում, նա աշխատանքի է անցել Հայաստանի երգի-պարի անսամբլում և շրջագայել տարբեր քաղաքներում՝ Մոսկվա, Թբիլիսի, Բաքու և այլուր:
Երևանում, նորաստեղծ «Արևելյան երաժիշտների բյուրոյում», Սուրեն Թովմասյանը աշխատել է շուրջ 25 տարի, որտեղ կրթել ու դաստիարակել է շատ երիտասարդ կատարողների: Այս հիմնարկում նրան մտերմաբար, «Черный Сурик» էին անվանում՝ մյուս երաժիշտ, Սուրիկ-ներից տարբերելու համար:
1974-ին նա մասնակցել է Սախալինում հայ երաժշտության օրերին և հիացրել իր վարպետությամբ:
1979 թվականին, Երևանի Ա.Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում տեղի ունեցած «Մեր դուդուկի հորովելը» խորագրով համերգին, որին մասնակցում էին Երևանի, Գյումրիի և Ադրբեջանի դուդուկահարները, մասնակցել է նաև Սուրենը և աչքի ընկել իր առանձնահատուկ կատարումներով:
Նրա կատարումներով ֆոնդային ձայնագրությունները հաճախ են հնչել ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Իր բեղուն կատարողական գործունեության համար Սուրեն Թովմասյանը արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի պատվավոր կոչման:
Դուդուկի մեծ վարպետ Վաչե Հովսեփյանը հիշում է. «Երգի-պարի անսամբլում լսելով Սուրեն Թովմասյանի նվագը, թողեցի շվին ու անցա դուդուկի: Հետագայում լսելով նրան՝ զգացի, որ դուդուկահարի համար կարևորը միայն լավ շուրթեր, լավ մատներ, լավ լսողություն ունենալը չէ, այլ նաև՝ նուրբ ճաշակ, հոգի և մեծ աշխատասիրություն: Անհնար է առանց հուզմունքի լսել Սուրենին»[2]:
Սուրեն Թովմասյանը մահացել է Երևանում:









1. Հակոբյան Հ., Հոգում՝ նվագը հաղթանակի: «Սովետական Հայաստան», թիվ 154, 05.07.1981
2. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝ 30



**Սերգեյ Սիմոնյան** (1926-1981)
Հայ ժողովրդական գործիքահարների շարքում իր ուրույն տեղն ունի վաստակավոր արտիստ Սերգեյ Սիմոնյանը:
Դուդուկահար-զուռնահար և վարպետ կլարնետահար Սերգեյ Միսաքի Սիմոնյանը ծնվել է Շիրակում: Պատանի հասակից սիրահարվել է հայկական երգ-երաժշտությանը: Առաջին քայլերը կատարողական արվեստում սկսել է շվի նվագարանով: Հովվական նվագներից բացի նվագել է Ա. Խաչատրյանի ջութակի կոնցերտի 3-րդ մասը, Բիզեի «Կարմեն» օպերայի նախերգանքը, Գրիգի «Անիտրայի պարը» և այլն:
Իր հայրենի քաղաքում տեղի ունեցող հանդիսավոր արարողությունների, թատերականացված ներկայացումների ժամանակ նա հանդես էր գալիս զուռնայի կատարմամբ: Զուռնային նա տիրապետում էր կատարյալ և հաճախ կատարում էր նաև տեխնիկապես բարդ ու նաև նուրբ մեղեդային ստեղծագործություններ, մի բան, որ հազվադեպ է պատահում:
Նույն վարպետությամբ տիրապետում էր նաև կլարնետին (երաժշտական աշխարհում նրան անվանում էին «Կրենկել», որն, ըստ իր ժամանակակիցների, նրան տրվել էր կլարնետին վիրտուոզ և բարձր վարպետությամբ տիրապետելու համար), սակայն նրա սրտին ավելի հարազատ էր դուդուկը՝ ինչպես հաճախ են արտահայտվում՝ հայոց նվագարանների մեջ «թագն ու պսակը»:
Նրա անհատական ձայնապնակում[1] տեղ են գտել կատարումներ բոլոր այդ նվագարաններով, որոնց Սերգեյը տիրապետում էր հավասարապես վարպետորեն:
1956 թվականին նա Լենինականից տեղափոխվում է Երևան, դառնում Հայֆիլհարմոնիայի մենակատար,ապա՝ «Մեղեդի» ժողովրդական անսամբլի հետ բազմաթիվ համերգային շրջագայությունների մեկնում: Նաև տարբեր խմբերի հետ իր արվեստն է ներկայացրել Բելգիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Հնդկաստանում, Հարավսլավիայում, Նեպալում, Մոնղոլիայում, Ինդոնեզիայում, Կիպրոսում, Մերձավոր Արևելքի երկրներում:
Ս.Սիմոնյանը նաև ստեղծագործում էր. նրա շատ գործեր այսօր կատարում են իր գործընկերներն ու աշակերտները: Նա ուներ հարուստ ստեղծագործական երևակայություն, համերգային ինքնատիպ ծրագրեր ստեղծելու տաղանդ: Նրա ստեղծած «Գյումրվա հարսանիք» համերգային կոմպոզիցիան ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես վառ ու գունեղ ներկայացում:
Հայ երաժշտական արվեստին նրա մատուցած ծառայությունների համար Ս.Սիմոնյանին շնորհվել է վաստակավոր արտիստի կոչում:
Կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանը Ս.Սիմոնյանի արվեստի մասին գրել է. «Նա իսկական արտիստ էր բառի ամենալայն իմաստով, որն իր արվեստը բազմատեսակ երաժշտական նվագարաններով կարողացավ մեծ վարպետությամբ ներկայացնել մեր երկրի և աշխարհի շատ բեմահարթակներում: Նրան իրավամբ կարելի է համարել ժողովրդական նվագարանների՝ շվիի, զուռնայի, դուդուկի վիրտուոզ կատարող արվեստագետ»[2]:





1.«Նվագում է Սերգեյ Սիմոնյանը», «Մելոդիա», Մոսկվա, 1987 (ձայնագր.՝1975 թ.)
2. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջեր՝ 56-57

**Ավետիք Մարտիրոսյան** (1926)
Ավետիք Հակոբի Մարտիրոսյանը Լենինականի «Երաժիշտների կոլեկտիվ»-ի հին անդամներից էր, նշանավոր ուստա Փանչոյի աշակերտը, և իր վարպետից ժառանգել էր մեղեդին մեկնաբանելու պարզությունն ու ապագա շնորհալի երաժշտին անվրեպ նկատելու կարողությունը: Ծնունդով լենինականցի էր, արմատներով՝ Ալեքսանդրապոլցի: Հայրը՝ քարտաշ Ազոն, առանց երգ ու նվագի սեղան չէր նստում: Եվ որդին էլ այդ սիրով ոգևորված՝ որոշեց դուդուկահար դառնալ:
Ավետիքը երաժշտական գրագիտություն չուներ, բայց հրաշալի հիշում էր, թե որ եղանակը ումից է լսել ու սովորել: Հարյուրավոր մեղեդիներ ու երգեր գիտեր անգիր, ընկերներից էլ պահանջում էր եղանակները մաքուր ու անսխալ կատարել: Սրամիտ էր, գիտեր բազմաթիվ զրույցներ ու պատմություններ տեղացի երաժիշտների, աշուղների մասին: Հատկապես արժևորում էր քաղաքային մեղեդիների գործիքային կատարումները, դրանք համարելով հատուկ դուդուկի համար նախատեսված եղանակներ, իսկ ինքը պահում էր «մադոյանական» ոճը:
Մեծ ակնածանքով էր խոսում իր վարպետի՝ Փանչոյի (Կարապետ Եղոյան), Լևոն Մադոյանի, Կարո Չարչօղլյանի մասին, ու իր մոտ պարապելու եկած շնորհալի պատանիներին, որոնք բացառիկ ընդունակություններ էին ցուցաբերում, ուղարկում էր նրանց մոտ կատարելագործվելու: Անուսում էր և բաց թողածը, երազանքը ուզում էր իրականացած տեսնել որդու՝ Հակոբի մեջ:
Ա. Մարտիրոսյանը մահացել է Լենինականում:

**Ժորա Սիմոնյան** (1927)
Ժորա Սիմոնյանը ծնվել է Լենինականում:12 տարեկան հասակում արդեն ելույթներ է ունեցել Լենինականի ժող.գործիքների մանկական անսամբլում: Նվագել է Լենինականում տարածված ժողովրդական երգեր և պարեղանակներ, ինչպես նաև աշուղական և իր ժամանակի երգահանների գործեր: Համաձայն Գյումրիում ընդունված սովորույթի, նա, իբրև ճանաչված մարդ, ստացել է իր մականունը՝ «Չախալ Ժորա»:
Մանուկ հասակում Ժ.Սիմոնյանի նվագը հավանության է արժանացել վարպետ Լևոն Մադոյանի կողմից, և նա հրավեր է ստացել վերջինիս կողմից՝ աշխատելու Հայֆիլհարմոնիայում:



Նա իր նվագով շրջել է հայրենի գյուղերն ու քաղաքները, տարածել Գյումրվա ավանդական երգն ու երաժշտությունը:
Ժորայի կատարողական ոճի վրա իրենց հետքն է թողել դուդուկի մեծ վարպետների՝ Մ. Մարգարյանի, Կ.Չարչօղլյանի, Լ.Մադոյանի, Կ.Եղոյանի արվեստը:

**Ջիվան Գասպարյան** (1928)
**«Դուդուկի կախարդը» - Այսպես են բնութագրել խորհրդային և արտասահմանյան շատ թերթեր Ջիվան Գասպարյանին**[1]**:**
Ջիվան Արամայիսի Գասպարյանը ծնվել է Հրազդանի շրջանի Քաղսի (Սոլակ) գյուղում: Պապը դուդուկ էր նվագում: Նա երազել անգամ չէր կարող, որ իր նվիրած դուդուկով իր թոռը՝ Ջիվանը, կդառնար մեծ վարպետ և **դուդուկը կհասցներ համաշխարհային ճանաչման:**



Իր առաջին երաժշտական քայլերը Ջիվանն սկսել է Երևանի Գ.Ղուկասյանի անվան պիոներների ու դպրոցականների պալատում: Հետո նվագել է կոմպոզիտոր Ե.Սահառունու ղեկավարած երգի-պարի անսամբլում: Իր ղեկավարից սովորել է «բեմական համարձակություն, անսամբլային կատարողականություն, մենակատարի վարպետություն»[2]: Ի դեպ, այս նույն անսամբլում էր նվագում նաև Վ.Հովսեփյանը:
Հետագայում, նրանք աշխատանքի անցան տարբեր կոլեկտիվներում, Վաչեն՝ ռադիոյի ժող.գործիքների, իսկ Ջիվանը՝ երգի-պարի անսամբլում:



Դա 1949 թվականն էր: Այստեղ նա դարձավ վաստակաշատ երաժիշտ Թաթուլ Ալթունյանի սիրելի սանը: Մեծ վարպետի ոգևորիչ ու սրտառուչ խոսքերից թևավորված, նա շարունակում էր իր վարպետությունը կատարելագործել: Ջիվանն այս անսամբլում առաջին դուդուկահարը չէր, սակայն նա կարողացավ իր դուդուկը յուրովի՝ միայն իրեն հատուկ ձևով մեկնաբանել, հնչեցնել: Նա ունի ձայնի իր գույնը, իր տեմբրը, իր եղանակը: Եվ դրան նա հասել է իր արտակարգ ընդունակության և ջանասիրության շնորհիվ:
1956 թվականին Մոսկվայում կայացած Երիտասարդության և ուսանողության համաշխարհային փառատոնին, թովիչ ու թավշյա երանգով իր փոքրիկ նվագարանով, նա հիացրեց թե՛ հանդիսատեսին, թե՛ ժյուրիի անդամներին: Այդտեղից նա Հայաստան բերեց առաջին մրցանակը:



ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից կազմակերպված միջազգային չորս մրցույթներում նա շահել է Ոսկե մեդալներ /1959, 1962, 1973, 1980/:
Երկար տարիներ աշխատելով հայկական ժողովրդական երգի-պարի անսամբլում /մինչև 1982 թ./, նա հարյուրավոր ելույթներ է ունեցել աշխարհի բազմաթիվ երկրներում՝ ունկնդրին հասցնելով հայ երգի ու նվագի անկրկնելիությունը, հմայքն ու գեղեցկությունը: Թեև հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչումը նա ստացել է 1973-ին, սակայն ժողովրդի սերն ու համակրանքը Ջ. Գասպարյանը վայելում էր դեռ շատ վաղուց:



Կոմպոզիտոր Ավետ Տերտերյանն իր 3-րդ սիմֆոնիայում լսում էր Ջիվան Գասպարյանի կատարումը, և հենց այդ կատարումն էլ, սիմֆոնիայի հետ մեկտեղ, հնչեց եվրոպական շատ երկրներում:
90-ականներին նա 2 տարի ապրել է ԱՄՆ-ում: Այստեղ նա համագործակցել է աշխարհի լավագույն երաժիշտներից Փիթեր Գաբրիելի, Ստինգի, Մայքլ Բրուքի, Լայոնել Ռիչիի, Վալեն Վայդերի և ուրիշների հետ: 2001 թ. Ջ. Գասպարյանի հրավերով Հայաստան եկան արտասահմանյան բազմաթիվ երաժիշտներ, որոնց հետ նրա համատեղ համերգները կայացան Երևանում, իսկ Գյումրիում կազմակերպվեց դուդուկի փառատոն: 2002 թ. Մոսկվայի Մեծ թատրոնում նա ունեցավ մենահամերգ՝ «Ջիվան Գասպարյանը և իր ընկերները» խորագրով: Համերգը մեծ արձագանք գտավ, և բացի այդ, Մեծ թատրոնում երբևէ մենահամերգներ տեղի չէին ունենում. այս իմաստով, կարելի է ասել, որ դա եզակի համերգ էր: Նույն թվականին նա հրավիրվում է Գերմանիա՝ Էսսեն քաղաքում անցկացվող «World musik» համաշխարհային երաժշտական մրցույթին: 1900 երաժիշտ-մասնակիցների մեջ խստապահանջ ժյուրին Ջիվանին հաղթող է հռչակում: **Նա ճանաչվում է 2002 թվականի լավագույն երաժիշտը:**



Մոտ երկու տասնամյակ Ջ.Գասպարյանը ղեկավարում էր Երևանի քաղաքապետարանի երաժշտական կոլեկտիվների միությունը[3]: Նա իր շուրջն էր հավաքել Հայաստանի լավագույն դուդուկահարների և այլ փողային ժողովրդական նվագարանների տիրապետող երաժիշտների, որոնք իրենց ծառայությունն էին մատուցում ազգաբնակչության սպասարկման այս կամ այն ոլորտում: Հետագայում, այս կոլեկտիվում ծնվեց նաև դուդուկահարների անսամբլը (30-ից մինչև 50 հոգանոց), որը ղեկավարում էր իրենց մեծ վարպետը՝ Ջ.Գասպարյանը: Այն շատ տպավորիչ էր թե՛ իր կազմով, և թե,՛ հատկապես, հնչողությամբ:



Վերջին 15 տարիների ընթացքում Ջ.Գասպարյանը ձայնագրել է 28 CD և դեռ շարունակում է ձայնագրվել ու համերգային ելույթներ ունենալ: 2007 թ. մասնակցել է նաև «Գրեմի» միջազգային մրցանակաբաշխությանը:
Մի որոշ ժամանակահատված Ջ.Գասպարյանը դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, որի շրջանավարտն է նաև ինքը: Ունի շատ սաներ: **Նրա երազանքն է՝ ստեղծել Դուդուկի իր դպրոցը**, որտեղ կսովորեն շնորհալի պատանիներ: Նրա ցանկությունն է՝ իր փորձն ու կատարողական վարպետությունը և դուդուկի գաղտնիքները փոխանցել երիտասարդներին, իսկ **դպրոցը վերածել դուդուկահարների կենտրոնի**:
Այսօր Ջ.Գասպարյանը շարունակում է եռանդով լի արվեստագետի իր ուղին, թեև շուտով կբոլորի իր կյանքի ութերորդ տասնամյակը:



1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝ 41
2. Նույն տեղում:
3. ԳԵԲ - Գործիքային երաժիշտների բյուրո (հայտնի է նաև՝«Ռաբիս» անվանումով)

**Գագիկ Գյուրջյան** (1928 -1993)
Գագիկ Ստեփանի Գյուրջյանը ծնվել է Երևանում, երաժշտասեր ընտանիքում: Հայրը, նկատելով որդու հետաքրքրությունը երաժշտության հանդեպ, նրա համար գնում է մանդոլին, հետո՝ թառ, ապա՝ դուդուկ: Հենց դուդուկն էլ դառնում է նրա ամենահարազատ ընկերն ու նվիրական գործիքը:
Նա ուշադրությամբ լսում էր ժամանակի ճանաչված դուդուկահարներին, աշխատում նրանցից սովորել դուդուկի նրբին գաղտնիքներն ու երազում էր դառնալ իսկական դուդուկահար:

1942-ից Գագիկը սկսում է աշխատել Հայաստանի ժողովրդական երգի-պարի անսամբլում: Թ.Ալթունյանը մասնագիտական խորհուրդներով օգնում է երիտասարդ երաժշտին, ազատ ժամերին պարապում նրա հետ՝ հաղորդակցելով երաժշտական գրագիտությանը: Գագիկի աշխատասիրությունը, կամքն ու նվիրվածությունը տվեցին լավ արդյունքներ՝ դուդուկահարին սկսեցին ճանաչել: Իրականում, անսամբլը Գագիկի համար դարձավ երաժշտական իսկական դպրոց:
Մեծ հայրենական պատերազմի տարիներին անսամբլը մեկնել էր Մերձբալթյան ռազմաճակատ, որտեղ Գագիկի դուդուկի հնչյունները («Քարավան», «Կռունկ», «Դլե յաման») հոգնատանջ ու կարոտամաշ հայ զինվորներին մտովի տեղափոխում էին Հայաստան, հայրենի օջախներ, իսկ «Քոչարին» ու «Վեր-վերին» ոգևորում ու աշխուժացնում էին նրանց: Գագիկը միշտ հիշում էր, թե ինչպես, իր նվագի տակ պարելուց հետո, մարշալ Հ.Բաղրամյանը ասել է. «Շատ համերգային խմբեր են ռազմաճակատ եկել, իսկ մերը՝ հայկականը, առաջին անգամն է, որ այսպես հաջող ելույթ է ունենում»[1]: Անշուշտ, այդ հաջողության մեջ իր բաժինն ուներ նաև Գագիկն՝ իր անզուգական դուդուկով: Պատերազմը դեռ չէր ավարտվել, երբ անսամբլը մեկնեց նաև Պարսկաստան: Այստեղ էլ Գագիկը փայլեց իր վարպետ կատարումներով:
1960 թվականին Գ.Գյուրջյանը Ա.Մերանգուլյանի հրավերով աշխատանքի է անցնում Ռադիոյի ժող.գործիքների պետական նվագախմբում: Այստեղ նա արդեն պիտի նվագեր նշանավոր դուդուկահարներ Լ.Մադոյանի, Վ.Հովսեփյանի, Խ. Խաչատրյանի հետ կողք-կողքի: Ինչ խոսք, Գագիկի վարպետությունը գնալով ավելանում էր:
1963-ին, արդեն պրոֆեսիոնալ դուդուկահարը, նորից վերադառնում է հարազատ երգի-պարի անսամբլ, որի հետ 1964-ին համերգների է մեկնում արաբական երկրներ՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս:
Հետագայում, Գագիկը նվագակցում էր մեծ վարպետ Ջիվան Գասպարյանին, թողնելով մի շարք ձայնագրություններ տարբեր ձայնասկավառակների վրա:
Գ.Գյուրջյանը մահացել է Երևանում:

1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝ 59

**Վլադիմիր Կռոյան** (1928)



Վլադիմիր Ներսեսի Կռոյանը ծնվել է Կիրովականում (ներկայումս՝ Վանաձոր)՝ երաժշտի ընտանիքում: Հայրը դուդուկ և զուռնա էր նվագում, եղբայրը երգիչ էր:
Դուդուկի այբուբենը Վլադիմիրը սովորել է հին դուդուկահար Մկրտիչից: 1944 թվականին Կիրովականում առաջին անգամ լսել է մեծ վարպետ Լ.Մադոյանին և, իր մանկական շվին մի կողմ դնելով, ձեռքն է առել հորից ժառանգություն մնացած դուդուկը և էլ վայր չի դրել: Պատերազմական տարիներին ինքնագործ խմբերի հետ շրջել է Լոռվա գյուղերով և իր դուդուկով ջերմացրել մարդկանց սրտերը:
1947-ին բացվել է Կիրովականի քաղաքային մշակույթի տունը, և նա դարձել է ինքնագործ խմբի մենակատար: 1949 թվականին Երևանում անց է կացվել ինքնագործ խմբերի ստուգատես, դարձել է հանրապետական փառատոնի դափնեկիր, ու պատանի դուդուկահարին նկատել է Թ.Ալթունյանը: Հրավիրել է երգի-պարի անսամբլ, սակայն, մի որոշ ժամանակ աշխատելուց հետո, Վ.Կռոյանը վերադարձել է ծննդավայր և իր հետագա ողջ ստեղծագործական կյանքը կապել Կիրովականի հետ: 1949-59 թթ. նա ղեկավարել է մշակույթի տան ինքնագործ խումբը, միաժամանակ, տրիկոտաժի ֆաբրիկայում ստեղծել է երգի-պարի անսամբլ, դարձել գործիքային մասի ղեկավար: Անսամբլը Մոսկվայում հաջողությամբ ունեցել է համերգներ: Ապա աշխատել է այլ կոլեկտիվներում, եղել են տարբեր շրջագայություններ, ծափահարություններ, ժողովրդի կողմից ճանաչում: Նա դարձել է, նույնիսկ, անդրկովկասյան մրցույթի դափնեկիր:
Սիրված դուդուկահարը նվագում է ինքնամոռաց, իր հնչերանգներով, հոգի դնելով նվագի մեջ: Տարիներ շարունակ դուդուկահարը աշխատել է նաև Կիրովականի երաժշտական ուսումնարանում: Նրա սաներից շատերը դարձել են հանրապետական ստուգատեսների դափնեկիրներ: Նրա զավակներն ու թոռները նույնպես շարունակեցին ընտանեկան երաժշտական ավանդույթները, քանի որ նա իր զավակների մեջ էլ է ներարկել սերը ժողովրդական երաժշտության հանդեպ. դուստրերից էլմիրան, քանոնահարուհի է, ուսումնարանի ժող.գործիքների անսամբլի ղեկավար, Նելին՝ քամանչայի դասատու, որդին՝ Բորիսը. ակորդեոնահար, թոռներից՝ Նունեն շվի է նվագում, իսկ Վլադիմիր թոռնիկը ոչ միայն պապի անունն է կրում, այլև պապի դուդուկով պրոֆեսիոնալ երաժշտական կրթություն է ստանում Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Այսպիսով, տարիներ շարունակ, Կռոյանների հարկի տակ միշտ հնչել է հայ երգ-երաժշտությունը, իսկ ծերունազարդ դուդուկահարը ուրախ է, որ ավանդապահությունը իր օջախում նույնիսկ երաժշտությամբ է պահպանվում:



**Արտավազդ Տեր-Հովհաննիսյան** (1929-2006)







Արտավազդ Դարչոյի Տեր-Հովհաննիսյանը համարվում է Լոռվա գեղատեսիլ աշխարհի անզուգական դուդուկահարը, որին ժողովուրդը մտերմաբար անվանում է վարպետ Արտո: Նա ծնվել է Կիրովական (ներկայումս՝ Վանաձոր) քաղաքում: Գրիգոր պապը եղել է շվիահար, իսկ վերջինիս երկու որդիները՝ Դարչոն և Մկրտիչը, Գյումրիի ուրախությունների անբաժան մասնակից-երաժիշտները: Արտոն նրանցից էլ հենց սովորել է նվագել: Թեև նա չի ստացել կանոնավոր երաժշտական կրթություն, սակայն ունեցել է իր ուսուցիչները, որոնցից ներշնչվել ու հետևել է նրանց (Լևոն Մադոյան, Վաչե Հովսեփյան, Կարո Չարչօղլյան): Հետագայում, սեփական որոնումների ու պրպտումների ճանապարհով, նա կարողացել է հասնել ինքնուրույնության՝ ստեղծելով միայն իրեն հատուկ ձեռագիր և կատարողական ոճ: Նրա բնածին երաժշտական ընդունակությունն ու արտակարգ լսողությունը նպաստել են հասնելու կատարման պրոֆեսիոնալիզմի, ձայնի ելևէջային մաքրության և նրբին երանգների զգացողության:
Հարուստ է Արտավազդի նվագացանկը՝ 200-ից ավելի ժողովրդական երգեր և նվագներ, աշուղական երաժշտության ընտիր նմուշներ, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Եկմալյանի մշակումներից, ինչպես նաև Ռ.Մելիքյանի ստեղծագործություններից և այլն: Նա ունի նաև իր ստեղծած մեղեդիները, որոնք հաճախ նույնացվում են ժողովրդականի հետ:
Արտավազդ Տեր-Հովհաննիսյանը 16 տարեկան հասակից իրեն նվիրել է ժողովրդական արվեստին: «Ես նվագում էի շվի, զուռնա, կլարնետ, սակայն առանձնահատուկ ձևով էի զգում դուդուկը, քանի որ նվագում էի իմ իսկ պատրաստած գործիքի վրա, -ասում է վարպետ Արտոն,- և հետո, հավանաբար չկա մեկ այլ գործիք, որն այնքան հոգեհարազատ լինի իմ ժողովրդին, որքան դուդուկն է: Դուդուկը հնարավորություններով հարուստ և կատարյալ է, սակայն երբեք չեն սպառված նրա հնարքները: Որքան մտերմանաս նրա հետ, այնքան նա քո առաջ կբացի իր կախարդանքի գաղտնիքները»[1]:
Աշխատել սկսել է Կիրովականի մշակույթի պալատից, շարունակել՝ 1972 թվականին ստեղծված «Հորովել» պետական նվագախմբում (գեղ. ղեկ.՝ կոմպոզիտոր Գրիգոր Հախինյան), որպես մենակատար և գործիքային մասի ղեկավար, մինչև 90-ականների սկիզբը: Այստեղ նա պատրաստել և կրթել է երիտասարդ երաժիշտների, որոնք հետագայում շարունակեցին իրենց ուսուցչի՝ այդ ասպարեզում բացած ճանապարհը: Բացի այդ, նա Կիրովական քաղաքի հիմնարկ-ձեռնարկությունների ինքնագործ խմբերի կազմակերպիչն ու ղեկավարն էր, հանրապետական ու միութենական տարբեր փառատոների, խառը համերգների մասնակից, մեծ ու փոքր տոնախմբությունների սիրտն ու հոգին: Բազմիցս պարգևատրվել է ոսկե մեդալներով և դիպլոմներով: Նրա դուդուկը հնչել է Երևանում, Գյումրիում, Մոսկվայում, Փարիզում, Գերմանիայի, Իտալիայի և Լեհաստանի տարբեր քաղաքներում, Անդրկովկասի և Մերձբալթյան երկրներում: Բեղուն կատարողական և երաժշտահասարակական գործունեության համար, 1981-ին նա արժանացել է արվեստի վաստակավոր աշխատողի կոչման՝ թեև վաղուց ճանաչված ու սիրված էր թե՛ մեծերի, և թե՛ երիտասարդների կողմից:
1988 թվականի երկրաշարժից հետո, Արտոն, մոռացած իր վիշտն ու տխրությունը, անմռունչ մասնակցել է բարեգործական համերգների, իր ելույթներով ամոքել տառապած ու անօթևան իր հայրենակիցների սրտերը: Վարպետն ասում էր, որ «դա միայն նրանց ցավը չէր, դա նաև իր ցավն էր»[2]:
Աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը, լսելով վարպետ Արտոյի նվագը, հիացել է՝ ասելով. «Ինչ անուշ կնվագես»: Եվ իրոք, նրա նվագի անուշ ձայնը շատերն են հիշում, թեև արդեն ծերունազարդ վարպետը վերջին տարիներին միայն կրթում ու սովորեցնում էր:
Արտավազդ Տեր-Հովհաննիսյանը մահացել է 2006-ին, Կիրովականում:

1. Առաքելյան Կ.,« Ինչ անուշ կնվագես»: «Երեկոյան Երևան», թիվ 101, 30.04.1989
2. Նույն տեղում





Եղիշե Մարգարյան

**Եղիշե Մարգարյան** (1931)

Եղիշե Ենոքի Մարգարյանը ծնվել է Նոր Կողբ գյուղում (այժմ` Երևանյան լճի շրջակայք), հողագործի ընտանիքում: Նախնիները Սուրմալուից են և շատ երաժշտասեր: Հայրը և քույրը երգել են, եղբայրը դուդուկ է նվագել, ինքը` Եղիշը, նվագել է 9 տարեկանից: 12 տարեկանում մասնակցել է դպրոցական մրցույթների` նվագելով կլառնետ, դուդուկ, զուռնա, շվի:

Խորհրդային բանակի սահմանապահ ուղեկալում կազմակերպել է երգչախումբ: Զորացրվելուց հետո, 50-ականներից սկսել է աշխատել Երևանի Ավտոդողերի գործարանում, սկզբում որպես փականագործ, միաժամանակ, անդամագրվելով գործարանի նորաստեղծ երգի-պարի ինքնագործ անսամբլին (ղեկ.` Ե.Ենգոյան, գործիքային մասի ղեկ.` Խ.Շիրակյան, պարուսույց` Վ.Ռաշիդյան) և հավատարմորեն ծառայում հայ մշակույթի տարածմանը` ընդհուպ մինչև 1990 թ.: Հետագայում նա դառնում է գործարանի դիրեկտորի օգնական:

Որպես ինքնուս երաժիշտ, նա առաջին անգամ բեմ է բարձրացել 1957 թվականին, որպես անսամբլի մենակատար, և նվաճել առաջին ոսկե մեդալը: Այնուհետև, 1965-ին, հանրապետական փառատոնում, նվաճում է ևս մեկ ոսկե մեդալ: Ընդհանուր առմամբ, նվաճել է հինգ ոսկե և մեկ արծաթե մեդալ, արժանացել բազմաթիվ պատվոգրերի և գովասանագրերի: Անսամբլի կազմում և անհատապես մասնակցել է տարբեր փառատոների և համերգների` Հայաստանի տարբեր շրջաններում, Սովետական Միության բազմաթիվ վայրերում, Ռումինիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Գերմանիայում, Հունգարիայում, Չեխիայում, Հունաստանում,Ղազախստանում, Մերձբալթյան ու Մերձավոր Արևելքի երկրներում և այլուր:

1975 թ. Մոսկվայում ժողովրդական ստեղծագործության էքսպեդիցիոն հանձնաժողովը մրցույթ է կազմակերպում, որին մասնակցում էին ժողովրդական ինքնագործ խմբեր, ինքնուս երաժիշտներ` նախկին Խորհրդային միության տարբեր վայրերից: Մոսկվայի կոմպոզիտորների միության տան համերգային դահլիճում այդ մրցույթին իր մասնակցությունը բերեց նաև Եղիշե Մարգարյանը: Սկզբում նվագեց շվիով, հետո` դուդուկով և զուռնայով. դահլիճը թնդում էր ծափահարություններից: «Առաջին շարքում նստած ալեհեր մի ծերունի դանդաղ բարձրանում է տեղից և բացականչում` ապրես, հայ երաժշտության Մեծ վարպետն էր` Արամ Խաչատրյանը»[1]:

Մասնագետները բարձր են գնահատում Ե. Մարգարյանի կատարողական արվեստը: Նա հավասարապես լավ տիրապետում էր շվի, դուդուկ, զուռնա և կլարնետ նվագարաններին, և Ֆոլկլորային հանձնաժողովի որոշմամբ, Մոսկվայի «Մելոդիա» ձայնագրման ստուդիայում, լույս է տեսնում նրա` «Նվագում է Եղիշե Մարգարյանը» ձայնասկավառակը` շվիի կատարումներով («Հովվի կանչ», «Դլե յաման», «Սուրմալու», «Հայաստան»,1975):

1989 թվականին Ե. Մարգարյանը արժանացել է Հայաստանի մշակույթի վաստակավոր աշխատողի կոչման:

1992-94 թթ. համերգներով հանդես է եկել Արցախի մարտավայրերում (Ասկերան, Աղդամ, Մարտակերտ և այլուր):

Համալրելով հայ դուդուկահարների անդաստանը` նա իր կողքին աճեցրեց բազմաթիվ երիտասարդ երաժիշտներ, որոնց մեջ նաև իր հարազատ որդիներին` ջութակահար Մերուժանին և երգիչ - խմբավար, հոգևոր երաժշտության փայլուն մասնագետ Վարուժանին:

«Դուդուկը ազնիվ նվագարան է, - ասում է Եղիշեն, - ուստի, երբ ամեն անգամ ձեռքս եմ վերցնում այն, կարծես թե անէանում եմ, մոռանում ամեն ինչ, մտածում եմ, որ աշխարհում ամեն մեկը պետք է լինի այնքան մաքուր ու ջինջ, ինչպես մեր ազգային դուդուկն է»[2]:

1.Հակոբյան Վ. Անմնացորդ նվիրումով: «Ավտոդողագործ», թիվ 9, 31.03.1980
2. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ`90

**Գեորգի Մինասով** (1933)

Գեորգի Վարդանի Մինասովը (Մինասյան) ծնվել է Բաքվում, երաժշտասեր ընտանիքում (հայրը նվագում էր դուդուկ, զուռնա, քամանչա, իսկ հորեղբայրը` շվի, դուդուկ, զուռնա, կլարնետ և թառ): Սովորել է Բաքվի երաժշտական ուսումնարանում: 1968-ից աշխատել է Ադրբեջանի պետհեռուստառադիոյի ժող.գործիքների նվագախմբում:

Բաքվի Ս.Շահումյանի անվան երաժշտական դպրոցում Գ.Մինասովը 1963 թվականին դուդուկի դասարան է հիմնել և 20 տարի շարունակ կրթել շնորհալի երեխաների:





Գեորգի Մինասով





Այստեղ նա դասավանդել է մասնագիտություն (դուդուկ) և մուղամաթի կատարման վարպետություն:

1983-ին տեղափոխվել է Երևան և այդ թվականից մինչև 2006 թ. աշխատել է Հայաստանի ժողովրդա-գուսանական պետական անսամբլում, որպես մենակատար-դուդուկահար: 1990-ից մինչ օրս դասավանդում է նաև Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

Նա բազմիցս մասնակցել է «Դուդուկի ավանդական երեկոներին» Երևանում և Գյումրիում` ցուցադրելով իր կատարողական հմտությունն ու սեփական հնչյունային երանգը, որը հատուկ է հայկական դուդուկին և հայ երաժշտի հուզական ներաշխարհին: Նրա վիրտուոզ նվագով հիացել են հազարավոր ունկնդիրներ և, պատահական չէ, որ նրան կոչում են «Դուդուկի վարպետ»[1]:

**Գեորգի Մինասովը դուդուկի նորարար վարպետ** է: Ստեղծել է դուդուկի մի քանի տարատեսակներ (բաս, բարիտոն, տենոր), սովորական դուդուկի ձայնածավալը քրոմատիկ լայնացված է կվինտայով: Գործիքի վրա աշխատանքները սկսել է 1992 թվականից, և **դուդուկների նոր տեսակների ստեղծման համար 2001 թվականին ստացել է հեղինակային իրավունք:**

Գեորգի Մինասովը դուդուկի երկու ձեռնարկի հեղինակ է (1988, 2004): Վերջինս իր տեսակի մեջ եզակի է, քանի որ առաջին անգամ այստեղ զետեղված են արևելյան մուղամների նմուշներ` Գ.Մինասովի նոտագրությամբ: «Մուղամների ընգրկումը նպատակ ունի սովորողներին ծանոթացնել այդ արվեստին, նրանց մեջ մշակել մուղամի ոճը նրբորեն ընկալելու և ճիշտ մեկնաբանելու ունակություն»2: Ձեռնարկը առանձնահատուկ արժեք է ստանում նաև վերջում գրքին կցված ձայներիզով, որը պարունակում է մուղամների ձայնագրություններ հենց իր` հեղինակի կատարմամբ: Այն հնարավորություն է տալիս կենդանի հնչողությամբ հստակ պատկերացում ունենալ մուղամի մասին: Ձեռնարկում ներկայացված են նաև վարպետի կատարելագործված դուդուկների տեսակները և դրանց կատարողական միջոցները:

**1998-ին իր սաների հետ միասին Գ. Մինասովը ստեղծել է «Դուդուկահարների քառյակ», որը փորձեր է անում նոր գործիքներով կատարել բազմաձայն ստեղծագործություններ, ինչպես հայ (Կոմիտաս, Եկմալյան, Գր.Նարեկացի, Շնորհալի), այնպես և դասական երաժշտության նմուշներ` Գ. Մինասովի մշակմամբ** (գործիքավորմամբ` կոմպոզիտոր Ռ.Ալթունյանի):

Քառյակն այսօր դարձել է սեպտետ (դուդուկների հնգյակ, դաշնամուր և դհոլ): Վարպետն անընդհատ փնտրում է նոր գույներ, նոր երանգներ: 2006-ին խումբը մասնակցել է Կոստրոմա քաղաքում հայկական օրերին նվիրված համերգներին և մեծ հաջողություն ունեցել: Խմբի ղեկավարման գործում վարպետին օգնում է դուստրը` խմբավար Տատյանա Մինասյանը: Գ.Մինասովը ձայնագրել է իր անհատական և քառյակի կատարումների ձայներիզը:



1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ` 75
2.Հակոբյան Ա., Դուդուկի ձեռնարկ: «Երաժշտական Հայաստան», թիվ 2 /17/, 2005, էջ 30

**Մկրտիչ Մալխասյան** (1933)

Մկրտիչ Կարապետի Մալխասյանը ծնվել է Լենինականում (ներկայումս` Գյումրի), երաժիշտ-դուդուկահարի ընտանիքում: Երաժշտությամբ զբաղվել է փոքրուց, հոր ղեկավարությամբ: Լինելով Շիրակի դաշտավայրի ծնունդ` նա կրթվել է տեղի ժողովրդական արվեստի լավագույն ավանդույթներով:

1941-1951 թթ. Մ.Մալխասյանը սովորել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցում: Այդ ընթացքում նվագել է Պիոներների պալատի ժող.գործիքների անսամբլում, իսկ հետագայում ինքն է ղեկավարել այդ խումբը: Մասնակցել է մի շարք օլիմպիադաների, արժանացել առաջին կարգի դիպլոմների և մրցանակների: 1953-73 թթ. ղեկավարել է Լենինականի Սնյանի անվան մշակույթի տան Պարի անսամբլի գործիքային մասը:

1975-77 թթ. նա արժանացել է առաջին կարգի դիպլոմի` մասնակցելով ինքնագործունեությանը նվիրված Համամիութենական առաջին փառատոնին:

1978 թ. Մ.Մալխասյանը մասնակցել է նաև Սամարղանդում /Ուզբեկստան/ կայացած միջազգային գիտաժողովի համերգային ծրագրին և արժանացել դափնեկրի կոչման: «Музыкальная жизнь» միութենական ամսագիրը գրում է. «Тонкой поэтичностью, позволявшей как бы воссоздавать перед мысленными взорами слушателей пейзажные, проникнутые настроением зарисовки, наделен дудукист из Армении







*Մկրտիչ Մալխասյան*

M.Малхасян, выступавший в сопровождени В. Арояна (второй дудук)».

1983-ին դուդուկահարների եռյակի կազմում նա մասնակցել է Թուրքմենիայում Հայկական երաժշտության օրերին, իսկ 1985-ին՝ Լենինականում տեղի ունեցած դուդուկահարների անդրկովկասյան մրցույթ-փառատոնին, որը կոչվում էր «Դուդուկն է երգում Գյումրիում»: Այս փառատոնում, որին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի լավագույն դուդուկահարները, Մկրտիչն արժանացել է «Արմենտրես»-ի հատուկ մրցանակին: Թերթերը գրում էին, որ «Նրա նվագը նուրբ է ու դայծառ, ատրումը՝ շռայլ ու բնական»[2]: Իսկապես, նրա նվագը աչքի է ընկնում փայլուն տեխնիկայով, գործիքի հմայիչ գեղեցիկ տեմբրով, զգացմունքայնությամբ և ջերմությամբ:

Նա հավասարապես տիրապետում է ժողովրդական փողային բոլոր նվագարաններին՝ դուդուկ, զուռնա, շվի, սրինգ, իսկ նվագացանկը հարուստ է, ինչպես հայկական, այնպես և ռուսական ու արևմտաեվրոպական մեղեդիներով:

Բազմաբեղուն երաժշտի վաստակը գնահատվել է արժանվույն. նրան շնորհվել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչում:

Մկրտիչի մեծ հայրենակից, բանաստեղծ Հ. Շիրազն այսպես է արտահայտվել նրա՝ հատկապես գյումրվա պարեղանակների կատարման մասին. «Ապրե՛ս, Մկրտիչ, շարունակիր շիրակցու քո մեծ շնորհքով հայ երգն ու նվագը տարածել ամենուրեք: Հավատարիմ մնա Գյումրվա լավագույն ավանդներին»:

Իրոք, **Մ. Մալխասյանի կատարումները, կարծես, շարունակում են մյուս մեծ շիրակցու՝ Լ.Մադոյանի կողմից բացած ուղին, այլ խոսքով՝ դուդուկի կատարման Գյումրվա ճյուղը:**

Մ.Մալխասյանը 1985 թվականին եղել է Անդրկովկասյան հանրապետությունների դուդուկահարների մրցույթ-տոնահանդեսի հանձնակազմի (ժյուրի) անդամ:

Մ.Մալխասյանի կատարմամբ Մոսկվայի «Մելոդիա» Ֆիրման հրատարակել է մի քանի ձայնասկավառակներ /1980, /: Ի դեպ, երբ նա իր եռյակով (Ռ.Հարությունյան, երկրորդ դուդուկ, Մ.Հովհաննիսյան, դհոլ), ձայնագրվելու նպատակով, գտնվում էր Մոսկվայում (1978), նրա վարպետությունը նկատի ունենալով՝ **լենինականցի երաժիշտներին հրավիրում են «Մոսկվա-ռեչ» մշակույթի պալատ՝ ելույթ ունենալու «Արսենալ» ջազային անսամբլի հետ: Այդ համատեղ ելույթները ձայնագրվել են ձայնապնակի վրա՝ Գերմանիայում, «Երաժիշտ կատարողների միջազգային համաժողովում» ունկնդրելու նպատակով:**[3]

Ներկայումս Մ.Մալխասյանը բնակվում է ԱՄՆ-ում:

1.Голубева И., Международный симпозиум в Самарканде «Музыкальная жизнь», N23, 1978
2.«Բանվոր» օրաթերթ, թիվ 224, 28.09.1985
3.«Բանվոր» օրաթերթ, թիվ 24, 28.01.1978

**Սուրեն Գրիգորյան** (1933-2001)

Ավանդական գյումրեցու ընտանիքում դուդուկը հարազատ նվագարան է: Նրա յուրահատուկ ձայնը պատանուն հիշեցնում էր մոր՝ Դիլանենց Աստղիկի քնքույշ երգը: Շատ փոքր էր, երբ առաջին անգամ իր ձեռքը վերցրեց փայտյա նվագարանը, և այդ օրվանից ընդմիշտ զինվորագրվեց հայ երաժշտության կատարողական գործին:

Սուրեն Արամի Գրիգորյանը ծնվել է Լենինականում: Ծնողները երաժշտության սիրահար էին, և իրենց որդու հրապուրանքը ընդունեցին առանց որևէ առարկության: Առաջին ուսուցիչը Լենինականում ճանաչում ունեցող Ավետիք Մարտիրոսյանն էր, որին լենինականցիները Տուտուլ Ավո էին կանչում: Նա էր, որ ընդունակ պատանու մեջ տեսավ ապագա դուդուկահարին, և աշխատասիրությամբ կատարելագործվելու խորհուրդը տվեց, իսկ հետո ինքն էլ նրան ուղարկեց արդեն սիրված դուդուկահար Լևոն Մադոյանի մոտ՝ կատարելագործվելու և գիտելիքները խորացնելու:

1949 թվականին Սուրենը աշխատանքի է անցնում ՀայՖիլհարմոնիայի Լենինականի բաժանմունքում, որպես ժողովրդական նվագարանների անսամբլի մենակատար: Սակայն, այս ինքնատիպ կոլեկտիվի աշխատանքը, ցավոք, երկար չտևեց: Հետագայում, Լենինականի ժողովրդական երաժիշտների գործունեությունը կենտրոնանում է քաղաքի Մշակույթի տներում, ուր և, համերգային ելույթներին զուգահեռ, երկար տարիներ մանկավարժական աշխատանք է կատարում Սուրենը:

50-ականներին Լենինականում գործող Երկաթուղայինների մշակույթի պալատը դարձավ այն կենտրոնը, ուր հավաքվեցին շնորհալի շատ երաժիշտներ՝ ստեղծելով ինքնատիպ մի կոլեկտիվ, որի ոգեղեն առաջնորդը Աղասի Շաբոյանն էր: Ս. Գրիգորյանը Երկաթուղայինների պալատի (Սնոյանի տուն) Երգի ու պարի անսամբլի գործիքային մասի ղեկավարն ու մենակատարն էր, և իր դերը որպես դուդուկահար նա գտավ հենց այստեղ: Թեև երաժշտական կրթություն չուներ, բայց նրա նվագն առանձնանում էր կիրթ և մաքուր մեկնությամբ: Հենց սա էլ դուր եկավ մեծ երաժիշտ և խմբավար Թաթուլ Ալթունյանին, որը, լսելով արդեն հայտնի դարձած երաժշտին, հրավիրեց իր ղեկավարած անսամբլում աշխատելու: Սակայն, հանգամանքների բերումով, Սուրեն Գրիգորյանը կապված մնաց իր ծննդավայրին, մնալով միշտ նույն համեստ, բարի, համակրելի ու բանիմաց դուդուկահարը: Նրա կատարումներից հատկապես սիրված էին «Ծանր պարը», «Ղազախին» , «Լուսնյակ գիշերը» և այլն:

Սուրեն Գրիգորյանի լավագույն մենակատարային և խմբական ձայնագրությունների մի ստվար փաթեթ՝ շուրջ 40 նմուշ, պահվում է ՀՀ Ռադիոյի Ֆոնդերում (կատարվել են 1965-78 թթ.-ի ընթացքում), ունի նաև հեղինակային տեսագրություններ, որոնք գտնվում են հանրային հեռուստատեսության արխիվում: Նկարահանվել է «Շիրակի մեղեդիներ» երաժշտական Ֆիլմում՝ կատարելով բոլոր մենանվագներն ու ղեկավարել գործիքային մասը:

Որպես սիրված դուդուկահար, շատ անգամներ հանդիպել է հետաքրքիր մարդկանց հետ, որոնք դրվատել են երաժշտի նվագը, նրանց թվում և հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Իբրև Շիրակի երաժշտական ավանդույթների իսկական կրող, Սուրեն Գրիգորյանին հատկապես շատ էր գնահատում երաժշտագետ-կոմիտասագետ, պրոֆ. Ռ. Աթայանը, որը, Լենինական այցելելիս, պարտադիր հանդիպում էր երաժշտին, զրուցում նրա հետ ու նաև խորհուրդներ տալիս: Սուրենը շրջագայել է աշխարհի տարբեր երկրներում, մասնակցել անդրկովկասյան, համամիութենական ու միջազգային փառատոների, ստացել մրցանակներ ու մեդալներ, որոնք, անշուշտ, իր քաղաքի ու իր գործիքի նվաճումն է համարել:

Սուրեն Գրիգորյանի կարապի երգը դարձավ «Դուդուկն է երգում Գյումրիում» միջազգային փառատոնը: Որպես վարպետ՝ իր նվագարաններից մեկը նա հանձնեց մի շնորհալի պատանու՝ պատգամելով իր գործը շարունակելու նվիրական առաքելությունը:

Սուրեն Գրիգորյանը վախճանվել է Գյումրիում:

**Սերգեյ Կարապետյան** (1933)



Սերգեյ Իշխանի Կարապետյանը ծնվել է Երևանի Կոնդի թաղամասերից մեկում: Հայրը սիրում էր դուդուկով նվագել հայկական ժողովրդական և աշուղական մեղեդիներ, իսկ 7-ամյա Սերգեյը, որին քնքշորեն կանչում էին «Լալիկ», սիրում էր թմբկահարելով նվագակցել հորը /ի դեպ, հայրը ավարտել է կոնսերվատորիայի կլարնետի դասարանը, (դաս.՝ Դովգան), և Սերգեյը հոր շնորհիվ նոտաճանաչ էր: Դպրոցական հասակում երգում և թմբուկ էր զարկում մանկական ինքնագործ խմբում:

1946-ից նա սկսեց հաճախել մանկական ժող.գործիքների անսամբլ, որը ղեկավարում էր ժողովրդական արտիստ, քամանչահար Արտեմ Մեջինյանը: Հետո աշխատանքի անցավ աշուղ Սմբատի ղեկավարած խմբում՝ մոտիկից հաղորդակցվելով աշուղական երգարվեստին:

1949-ին աշխատանքի է անցել ՀայՖիլհարմոնիայի ժող.գործիքների անսամբլում (ղեկ.՝ Վ.Բունի): Այս առաջին պրոՖեսիոնալ անսամբլը նրա կյանքում դարձավ իսկական երաժշտական դպրոց:

1952-ից նա հրավիրվում է Գուրգեն Միրզոյանի ղեկավարած ժող.գործիքների անսամբլ, որտեղ նա լուրջ քննություն է բռնում այնպիսի վարպետների կողքին, ինչպիսին էին՝ Լ.Մադոյանը, Ալ.Սարգսյանը, Ներսիսյանը և ուրիշներ: Այստեղ, նա երբեմն նվագակցում էր մեծ վարպետ Լ.Մադոյանին:

1952-ից Ս.Կարապետյանը ծառայել է խորհրդային բանակի շարքերում, եղել է փողային նվագախմբի մենակատար կլարնետահարը:

1964-ից մինչև 90-ականների վերջը նա հանդիսացել է ռադիոյի Ա.Մերանգուլյանի անվան ժող.գործիքների պետական նվագախմբի մենակատարը: Այստեղ նա նվագում էր շվի, զուռնա, դուդուկ, կլարնետ: Սակայն, Վաչե Հովսեփյանը հորդորեց նրան վերջնականապես անցնել դուդուկին. Սերգեյի սրտում հենց այդ երազանքն էր... այդ օրվանից նա իր ողջ էությամբ նվիրվեց դուդուկին: Կլանված լսում և կատարում էր Վաչեի մասնագիտական խորհուրդները, երբեմն էլ՝ նվագակցում նրան: «Դուդուկ նվագելու համար պարտական եմ իմ սիրելի ուսուցիչ Վաչե Հովսեփյանին», - ասում է









արդեն ինքը վարպետ դարձած Սերգեյ Կարապետյանը:

Նվագել է շատ երկրներում (Ֆրանսիա, Հունաստան, Եգիպտոս, Իսլանդիա, Ալժիր և այլուր): Նվագակցել է հայտնի երգիչների (ժող. արտիստներ` Օ.Համբարձումյան, Հ.Բադալյան, Ռ.Մաթևոսյան, վաստ. արտիստներ` Ն.Մնացականյան, Վ. Խաչատրյան, Ր.Հովհաննիսյան և ուրիշներ): Հայաստանի և սփյուռքի մամուլը հաճախ է մեկնաբանել Ս.Կարապետյանի արվեստը: Ամերիկյան ամսագրերից մեկը իր էջերում զետեղել է առանձին հոդված` վարպետ կատարողի մասին[1]:

1986 թվականին դուդուկահարն արժանացել է վաստակավոր արտիստի պատվավոր կոչման` իբրև նրա անցած ստեղծագործական երկար ճանապարհի գնահատական: Մոսկվայի «Մելոդիա» ձայնագրման ֆիրման հրատարակել է վարպետի անհատական ձայնասկավառակը` «Նվագում է Սերգեյ Կարապետյանը» վերնագրով (Մոսկվա, 1987): 2003 թվականին հրատարակվել է լազերային երեք ձայներիզ` «Երգիր, իմ դուդուկ»` Ա.Մելանգուլյանի ժող.գործիքների անսամբլի հետ, «Սիրված մեղեդիներ»` նվագակցությամբ Ս.Սիմոնյանի և Հ.Հովսեփյանի /դամ դուդուկներ/,«Սերգեյ Կարապետյան /Լալիկ/ - Չերվոնեց...» /կլարնետ, դուդուկ, զուռնա/:

Մեծավաստակ երաժիշտը զբաղվել է նաև մանկավարժությամբ. դասավանդել է Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում` հիմնադրելով դուդուկի և շվիի դասարաններ /1979-89/:

Կոմպոզիտոր Գ.Հախինյանը շնորհալի երաժշտի մասին ասել է. «Սերգեյ Կարապետյանը` ռադիոյի անսամբլի դուդուկահարների կոնցերտմայստերը, նոր աստիճանի է հասցրել դուդուկահարի իր մասնագիտությունը (դուդուկահարությունը - Ա.Կ.): **Նա Վաչեի արժանավոր աշակերտն է, նրա գործի շարունակողը: Նրա դուդուկը խոսում է մարդկային սրտերի հետ, նրա արտաբերած հնչյունները սրտամոտ են»**[2]:

1.Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ`55
2. Գևորգյան Լ., Վարպետ կատարողը: «Sowiet life» ամսագիր, մայիս, 1983, էջեր` 1, 38-39

**Վլադիմիր Հարությունյան** (1934 -2001)



Վլադիմիր Բարեղամի Հարությունյանը ծնվել է Ապարանում: Փոքր հասակում շվի է նվագել: Երբ տեղափոխվել են Երևան, նա ընդունվել է Հայֆիլհարմոնիա և տարբեր խմբերի ու անսամբլների կազմում շրջել է Հայաստանի տարբեր շրջաններում, ստացել առաջին ծափերն ու գովեստի խոսքերը: Հետզհետե նա հասկացել է, որ շվին լավն է, բայց բավարար չէ, և նա փորձում է դուդուկը: Դուդուկն իր սրտին ավելի մոտ զգալով, այլևս չի բաժանվում:

Ինչպես գրում է լրագրող Կ.Մկրտչյանը` «Դուդուկը սիրում է, որ տառապեն իր հետ, թե ուզում ես վարպետ դառնալ` պիտի աշխատես, փոթորկվես, մաշվես, որ դուդուկը քո հարազատն ու մտերիմը լինի»[1]: Ահա նման աշխատասիրության շնորհիվ նա հնարավորություն ստացավ 1958-ից աշխատանքի անցնելու Հայաստանի պարի պետական նորաստեղծ անսամբլի գործիքային կազմում:

Մինչ այդ աշխատել էր Հայաստանի երգի-պարի պետական անսամբլում և շատ նրբություններ սովորել Թ.Ալթունյանից ու Ալ.Ալեքսանդրյանից:

Պարի պետական անսամբլի առաջին հայտագիր համերգին, որը տեղի ունեցավ 1958թ. Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, Վլադիմիր Հարությունյանը հանդես եկավ տարբեր նվագարաններով (դուդուկ, կլարնետ, շվի, զուռնա) և բազմաբնույթ ստեղծագործությունների կատարմամբ: Հաջողությունը ուղեկցում էր նրան, բայց նա շարունակ կատարելագործում էր իր վարպետությունը. շատ հարցերում օգնում էր նաև կոմպոզիտոր Խ.Ավետիսյանը: Անսամբլի հետ Վլադիմիրը շրջել է աշխարհի շատ երկրներում` դուդուկի կախարդական հնչյուններով հիացրել ու զարմացրել թե՛ հային, և թե՛ հատկապես ` օտար ունկնդրին:

Պատահական չէ, որ Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել նրա ներդրումը ժողովրդական արվեստում և արժանացրել վաստակավոր արտիստի պատվավոր կոչման:

Թեև նա չի դասավանդել որևէ կրթօջախում, սակայն սիրով իր որդուն հաղորդակից է արել դուդուկի գաղտնիքներին, մտերմացրել նրան հայ երգ ու նվագին, պարին ու երաժշտությանը:

Վլադիմիր Հարությունյանը մահացել է Երևանում:





1.Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ`49

**Հովհաննես Կասյան** (1934)

Հովհաննես Կասյանը Վրաստանի հայ դուդուկահարներից է: Փոքր հասակից լսել է վարպետ դուդուկահարների նվագը և սիրահարվել դուդուկին: Սակայն հավասարապես նվագել է նաև շվի, զուռնա, կլարնետ: Հովհաննեսի երաժշտական վարպետությունը, ճաշակը հղկելու գործում կարևոր դեր է կատարել Թիֆլիսի «Սայաթ-Նովա» անսամբլը (ղեկ.` Վրաստանի վաստակավոր արտիստ Մկրտիչ Ղազարյան), որտեղ նա շուրջ 30 տարի նվագել է: Անսամբլի հետ շրջել է Վրաստանի տարբեր շրջաններ ու քաղաքներ, կատարել է հիմնականում Սայաթ-Նովայի և ժողովրդական երգեր:

Հովհաննես Կասյանի դուդուկն, ըստ ժամանակակիցների, ուներ «հարուստ ձայնեռանգ, խոր տխրություն ու թախիծ»[1]: **Նրա կատարմամբ մեղեդիները հարազատորեն էին անդրադարձնում Թիֆլիսի քաղաքային միջավայրում (թե՛ հայկական, թե՛ վրացական) տարածված նվագարանային կատարողական առանձնահատկությունները:**

Նա աշխատել է Թբիլիսիի արևելյան գործիքների երաժշտական բյուրոյում, սովորելով հայ և վրացի դուդուկահարներից: Հատկապես, նա մտերմացել է Սայաթ-Նովայի երգերի թիֆլիսահայ ճյուղին բնորոշ ոճով երգող` անզուգական կատարող Գևորգ (Գլախո) Զաքարյանի հետ, և երկար տարիներ համագործակցել նրա հետ:

Ամեն տարի մայիս ամսին, Թբիլիսիում տեղի ունեցող Սայաթ-Նովային նվիրված վարդատոնին, բոլոր հայ երաժիշտներն իրենց հոգու պարտքն են համարում ներկա գտնվել. այդ միջոցառման մշտական մասնակիցն է եղել նաև Հ.Կասյանն իր խմբով` ավանդական դարձած այդ արարողությունը զարդարողներից մեկը: Համամիութենական և հանրապետական մրցույթների դափնեկիր Հ.Կասյանն իր խմբով մշտապես եղել է տարբեր պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիսությունների, միջոցառումների ակտիվ մասնակիցը:

1970 թվականին Մոսկվայում, խորհրդային բանակի կենտրոնական տան դահլիճում, կատարվել է կոմպոզիտոր Հայկ Մարության «Տոնական նախերգանքը»` փողային նվագախմբի համար: Դուդուկի մենանվագով հանդես է եկել Հ.Կասյանը (դամ` Սուրեն Ներսիսյան): Իր փայլուն ելույթի համար նա պարգևատրվել է ԽՍՀՄ զինված ուժերի նախարարության պատվոգրով: Նա բազմիցս հանդես է եկել Վրաստանի և Հայաստանի հեռուստատեսությամբ` թե՛ որպես մենակատար, և թե՛ դուդուկահարների վեցյակի կազմում: Վերջինիս ծրագրում ընդգրկված վրացական ժողովրդական երգերը թույլ էին տալիս դրանք կատարել բազմաձայն տարբերակով:

«Հուզականություն, հայկական մեղեդիների ներքին զգացողություն, պրոֆեսիոնալ կատարողականություն և վիրտուոզ տեխնիկա»,- այսպես է գնահատել Կասյանի արվեստը Հայաստանի արվեստի վաստ.գործիչ, կոմպոզիտոր Մանվել Բեգլարյանը[2]:

Դուդուկի վարպետը ծավալում է նաև մանկավարժական գործունեություն. Թբիլիսիի միջնակարգ դպրոցներից մեկի շենքում գործում է պատանի դուդուկահարների դպրոց, որտեղ հայ և վրաց պատանիները փորձված վարպետից ընդօրինակում են դուդուկի վարպետության գաղտնիքները:

Աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանը 1959 թ. Թբիլիսիում լսել է Հ.Կասյանին և, հիացած նրա նվագով, ասել է. «Ես չեմ մոռանա նրա նվագը, որն իր մեջ պահում է Սայաթ-Նովայի շունչն ու ոգին: Իսկ նրա նվիրած դուդուկը պետք է պահեմ սրբորեն»:

1. Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ` 70
2. Նույն տեղում, էջ` 72

**Կարապետ Մեխակյան** (1946 -1988)

Կարապետ Վաղարշակի Մեխակյանը ծնվել է Լենինականում (այժմ Գյումրի):

Նրա երաժշտական կյանքը սկսվել է Հայաստանի վաստակավոր արտիստ` Ա. Շաբոյանի ղեկավարած պարի խմբում, ուր Կարապետը պարել էր սովորում: Բայց սերը դուդուկի նկատմամբ հանգիստ չէր տալիս: Նրա առաջին դուդուկի ուսուցիչը դարձավ Մկրտիչ Մալխասյանը: Աստիճանաբար ճանաչում ձեռք բերելով, Կարապետ Մեխակյանը սկսեց նվագել ժող.գործիքների տարբեր անսամբլներում: 1979 թվականին նա ընդունվել է Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի ժող.գործիքների բաժին:1981-ից սկսել է աշխատել Սևյանի անվան երկաթուղայինների ժող.գործիքների անսամբլում: Միաժամանակ դասավանդել է թիվ 6 երաժշտական դպրոցում:



1981 թվականին գեղարվեստական ինքնագործունեության փառատոնում Մեխակյանը արժանացել է ոսկե մեդալի:
Ցավոք, 1988-ի երկրաշարժը պատճառ դարձավ Կարապետ Մեխակյանի անժամանակ մահվան: Այսօր նրա գործը շարունակում է որդին՝ Մկրտիչը:

**Արմեն Սարգսյան** (1949 )

Արմեն Ղազարի Սարգսյանը ծնվել է Աշտարակի շրջանի Օհանավան գյուղում: Տեսնելով տղայի սերը երաժշտության հանդեպ, հոր երաժիշտ ընկերը յոթամյա Արմենին է նվիրում իր դուդուկներից մեկը: Թեև դժվար էր ինքնուրույն սովորելը (սովորեցնող չուներ), սակայն Արմենը շատ ջանասեր էր:
Առաջին ելույթը եղավ 1957 թվականին, Աշտարակում, հանրապետական փառատոնի եզրափակիչ փուլում: Հետագայում, ծնողների աջակցությամբ, 1961-ին Արմենը Երևանում ընդունվում է Պիոներների պալատի ժող.գործիքների անսամբլ, ղեկավարությամբ՝ վաստ. արտիստ, քամանչահար Նորայր Հովհաննիսյանի:



Դուդուկի երիտասարդ դասատու Ս. Խաչատրյանը տղային ծանոթացնում է դուդուկի վարպետության գաղտնիքներին:
1966 թ. Արմենը ընդունվում է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի հոբոյի դասարանը: Նրա դասատուն՝ արվեստի վաստ. գործիչ Քրիստափոր Բաբայանը, աշխատում էր նրան ուղղել դեպի դասական երաժշտություն: Եվ իրոք, շատ չանցած, Արմենը վարպետանում է հոբոյի պրոֆեսիոնալ կատարողականության մեջ և արդեն ելույթներ ունենում ուսանողական սիմֆոնիկ նվագախմբի հետ, որպես մենակատար կատարելով Չիմարոզայի կոնցերտը՝ 4 մասից:
1970 թվականին Ա. Սարգսյանը ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի հոբոյի դասարանը (դաս.՝ Ք.Բաբայան) և ավարտում 1974-ին:
1973-ին, Բեռլինում մասնակցել է Երիտասարդության և ուսանողության համաշխարհային 10-րդ փառատոնին՝ նվագակցելով երգչուհի Մելանյա Աբովյանին:
1973-83 թթ. աշխատել է Երևանի Երկաթուղայինների մշակույթի պալատի պարի անսամբլի գործիքային խմբում: Աշխատել է նաև Երևանի Ա.Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցում՝ դասավանդելով դուդուկ, զուռնա, շվի (1989-92 թթ.):
1971-ից մինչև օրս Արմենն աշխատում է Հայաստանի Ռադիոյի Ա.Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլում, որպես մենակատար դուդուկահար և հոբոյահար: Եղել է աշխարհի մոտ 33 երկրներում՝ տարբեր խմբերի հետ և, առանձնապես, որպես ժողովրդական արտիստ Ռուբեն Մաթևոսյանին նվագակցող դուդուկահար:

**Եղիշե Մանուկյան** (1950)

Եղիշե Աղվանի Մանուկյանը ծնվել է Արագածի շրջանի Բերքառատ գյուղում, արվեստասեր ընտանիքում: Հայրը տարածաշրջանում ճանաչված ու սիրված երաժիշտ էր: Եղիշեն երազում էր շարունակել հոր սիրած գործը: Հետաքրքրասեր երեխան իր նվագելու առաջին անվարժ փորձերն արել է հոր գործիքներով: Եվ երբ հաջողվել է մի քանի մեղեդի ճշգրտորեն դուրս բերել, ապա մեծ հիացմունք և ուրախություն է առաջացրել ընտանիքի անդամների մոտ:
Սկզբնական կրթությունը ստացել է Ալագյազի թիվ 9 դպրոցում, և այդ տարիներից արդեն նա իր շվիով դպրոցական բոլոր միջոցառումների ու հանդեսների պարտադիր մասնակիցն էր: Կրթությունը շարունակել է Երևանի թիվ 110 դպրոցում, և միաժամանակ, հաճախել կերամիկական իրերի գործարանի ժող.գործիքների ինքնագործ խմբի պարապմունքներին: Երաժշտական պրոֆեսիոնալ կրթությունը Եղիշեն ստացել է Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի կլարնետի դասարանում (դաս.՝ Գ.Նալբանդյան): Այստեղ, նա աստիճանաբար կատարելագործվում էր՝ լինելով աշխատասեր և իր նպատակին ձգտող:
Արդեն տիրապետում էր կլարնետին, զուռնային:
Սակայն, դուդուկի հետ հանդիպումը կտրուկ բացահայտեց երիտասարդ երաժշտի կատարողական հնարավորություններն ու իսկական խառնվածքը: Երաժշտական դպրոցի իր սիրելի դասատուներից մեկի՝ Զատիկյանի երաշխավորությամբ Եղիշեն, տակավին երիտասարդ հասակում, աշխատանքի է ընդունվում Հայաստանի պարի պետական անսամբլի գործիքային մասում: Դեռևս անփորձ երիտասարդի համար վճռորոշ եղավ ծանոթությունն ու շփումը ճանաչված կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի հետ, որն այն ժամանակ ղեկավարում էր անսամբլի գործիքային խումբը: Իսկ դուդուկի նրա առաջին վարպետը եղավ վաստակավոր արտիստ Վլադիմիր Հա-









Եղիշե Մանուկյան

րությունյանը, որի խորհրդով էլ այլևս երբեք չբաժանվեց դուդուկից: Ավելին, ինչպես գրվեց մամուլում. «Նա այնպես կապվեց այդ հնամենի գործիքին, որ ընդամենը մի քանի դաս ընդունելուց հետո ինքնուրույն անցավ ինքնուրույն պարապմունքների ու կատարելագործվեց զարմանալի արագությամբ: Նվագում, պարապում էր շատ, հրճվելով, ոգևորվելով ամեն մի նոր մեղեդի յուրացնելիս: Զգում էր, որ մեղեդին պարզեցնելու, իր և ունկնդրի համար նրանում նոր հնչերանգներ, ոգեղեն նոր խորքեր հայտնաբերելու դեռ շատ հնարավորություններ է թաքցնում դուդուկը, և իր մատները դեռ այնքան պիտի տքնեն այդ հրաշագործ նվագարանի վրա, իր շունչը երկար պիտի ջերմացնի այդ կախարդական փողը, մինչև որ արթնանան, անհունորեն թևածեն նրանում նիրհող հնչյունները, թաթախվեն իր հոգու լույսով, լինեն նախ իրենը և հետո միայն բոլորինը»[1]:
Իսկապես, Եղիշեն գտավ դուդուկի՝ միայն իրեն հատուկ տեմբրը և մեղեդիների սեփական մատուցումն ու մեկնաբանումը:
1967-ից սկսած և հետագայում երկար տարիներ Ե. Մանուկյանը հանդիսանում էր այդ ճանաչված անսամբլի մենակատար դուդուկահարը: Անսամբլի հետ և առանձին համերգային խմբերի կազմում նա շրջագայություններ է մեկնել Խորհրդային միության տարբեր քաղաքներ, ելույթներ ունեցել ԱՄՆ-ում, Գերմանիայում, Չիլիում, Արգենտինայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում...
Մասնակցել է Վաչե Հովսեփյանի հիշատակին կազմակերպված մի քանի երեկոների: Այդ համերգներից մեկում նվագելով վարպետի կատարմամբ հանրահայտ «Հովերն ընկան» երգը, նա կարողացել է ինքնաբուխ հուզականությամբ և վարպետ հնչյունախաղերով ունկնդրի առջև նորովի բացահայտել այդ ծանոթ ու սիրված մեղեդին:
Եղիշեն տարբեր մրցանակների դափնեկիր է: Հարուստ է նրա կատարողական նվագացանկը՝ հայ կոմպոզիտորների, հայ ժողովրդական և օտար ազգի բազմաթիվ երգեր ու պարեղանակներ, երբեմն, նույնիսկ, կատարել է մշակումներ:
Եղիշե Մանուկյանը ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում:

1. Բլբուլյան Լ., Սիրո և կարոտի թրթիռներ: Ավանգարդ, թիվ 16, 06.02.1981

**Սարո Դանիելյան** (1951)

Սարո (Սարիբեկ) ԳեղամիԴանիելյանը ծնվել է Արտաշատի շրջանի Ջրաշեն գյուղում: Առաջին երաժշտական տպավորությունները ստացել է իր երաժշտասեր ընտանիքում, ուր եղբայրները նվագում էին շվի, սրինգ, դուդուկ, զուռնա. նրանց տունը մշտապես լցված էր ժողովրդական մեղեդիներով: Դեռ այդ ժամանակ արդեն Սարոն վճռել էր նվիրվել երգ-երաժշտությանը: Իրենց գյուղի ինքնագործ խմբում (ղեկ.՝ Ա.Ստեփանյան) էլ սկսել է իր առաջին քայլերը: Նրա պատանեկան ելույթներն արդեն իսկ համոզում էին ունկնդրին, որ Սարոն լի է սիրով հանդեպ դուդուկը և ամենակարևորը՝ օժտված է երաժշտական ցայտուն ընդունակություններով:
Լուրջ երաժիշտ դառնալու ցանկությամբ նա 1967 թվականին ընդունվեց Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի հոբոյի դասարան, քանի որ դուդուկի դասարան չկար (դասատու՝ վաստ. արտիստ Ք.Բաբայան): Դասական կրթությունը Սարոյին հղկեց և գիտելիքների մեծ պաշար ապահովեց, միաժամանակ, նա առավել խորությամբ զգաց ազգային երաժշտության առանձնահատկություններն ու հմայքը: Իսկ դուդուկին անցնելը դժվար չէր: Դեռ ուսումնարանը չավարտած՝ կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանի առաջարկությամբ Սարոն աշխատանքի է անցնում Թ.Ալթունյանի անվան երգի-պարի վաստակավոր անսամբլում, որպես երաժիշտ, նվագելով դուդուկ, զուռնա, շվի և հոբոյ: Այստեղ նրա համար պատիվ էր նստել մեծ վարպետ Ջիվան Գասպարյանի կողքին. վերջինս և այլ երաժիշտ վարպետներ օգնեցին Սարոյին սովորել ու վարպետանալ հայկական դուդուկի կատարողականության մեջ: Հետագայում, արդեն անսամբլի գեղ.ղեկ. Էմմա Ծատուրյանի ղեկավարությամբ, Ս.Դանիելյանը հնարավորություն ունեցավ իր վարպետությունը ցուցադրել աշխարհի շատ երկրներում: Բարձրագույն երաժշտա-կատարողական վարպետությունը նա ստացավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (ղեկ.՝ Ջ.Գասպարյան), որից հետո նա արդեն մտածում էր նաև մենակատարային ծրագրի շուրջ: Այն կայացավ 1989 թվականին, երբ Սարոն նաև ՀայՖիլհարմոնիայի մենակատար էր: Կամերային երաժշտության տան կամարների ներքո կայացավ Սարո Դանիելյանի մենահամերգը, որը եղավ, կարծես, նրա ստեղծագործական հաշվետվու-



թյան երեկոն: Երիտասարդ դուդուկահարը մինչ այդ արդեն հասցրել էր դառնալ երիտասարդության և ուսանողության համաշխարհային 12-րդ փառատոնի դափնեկիր, դուդուկահարների Անդրկովկասյան մրցույթ-փառատոնի պատվավոր դիպլոմակիր: 1988 թվականին, մի խումբ հայ երաժիշտների հետ, հյուրախաղերի մեկնեց Ֆրանսիա: Այստեղ նա իր բազմաբնույթ ծրագրում ընդգրկել էր նաև միջնադարյան երաժշտություն, որը հետզհետե ներմուծվում էր դուդուկի նվագացանկ:
Կոմպոզիտոր Գրիգոր Հախինյանը բարձր գնահատական է տվել շնորհալի երաժշտին. «Դուդուկահար **Սարո Դանիելյանը դասական երաժշտության մակարդակի է բարձրացրել հայկական դուդուկը և դրան առնվազն նպաստել է նրա կոնսերվատորիական կրթությունը»,** իսկ Էդվարդ Միրզոյանը նրան համարում է զուտ և ինքնատիպ դուդուկահար-երաժիշտ, որն ունակ է բավականություն պատճառել՝ դուդուկի և մյուս նվագարանների թավշե, հոգեզմայլ մեղեդայնությամբ[1]: «Կատարման անմիջականություն, գործիքի վարպետ տիրապետում, ստեղծագործությունը ունկնդրին հարազատ դարձնելու կարողություն - ահա դոդուկահարին բնորոշը», - գրում է լրագրող Կ.Մկրտչյանը[2]: Ինքը՝ Սարոն, հասկանալով դուդուկի գաղտնիքները՝ հայտնագործեց նվագարանի համար ամենաբնորոշն ու հատկանշականը. «Դուդուկի ձայնը շատ նման է մարդու ձայնին, այն գալիս է ներքին էությունից, ասես շարունակում է քո ձայնը»:
Այսօր Սարո Դանիելյանը իր համերգային գործունեությունը ծավալում է Հայաստանի սահմաններից դուրս, իսկ ընտանիքով բնակվում էր սկզբում Արգենտինայում, այսօր արդեն ԱՄՆ-ում:

1. Մկրտչյան Կ., Հոգեզմայլ, թավշե մեղեդայնությամբ: «Երեկոյան Երևան», թիվ 169, 23.07.1981
2. Մկրտչյան Կ., Հոտավետ ծաղիկ: «Երեկոյան Երևան», թիվ 101, 01.05.1981



**Բենիկ Իգնատյան** (1953)
Բենիկ Հուսիկի Իգնատյանը ծնվել է Վայքի շրջանի Մարտիրոս գյուղում:
Երաժշտական առաջին քայլերն արել է Երևանի պիոներների պալատի ժող.գործիքների անսամբլում (ղեկ. Հ.Արաբյան):
Սովորել է Էջմիածին քաղաքի ակումբա-գրադարանային տեխնիկումի երաժշտության բաժնում:
Հայաստանի ռադիոյի Ա.Մերանգուլյանի անվան ժող. գործիքների անսամբլում աշխատելու հավանությունը տվել է մեծ վարպետ Վաչե Հովսեփյանը՝ նախապես լսելով երիտասարդ Բենիկի կատարումները դուդուկով և զուռնայով: Հենց վարպետից էլ սովորել է երաժշտական գրագիտություն և, ամենակարևորը՝ ծանոթացել դուդուկի նվագարվեստի գաղտնիքներին ու նրբերանգներին: Վարպետ Վաչեն ասում էր. «Դուդուկը բարդ գործիք է, նրան տիրապետելու համար մեծ կամք ու հմտություն է պետք: Սրտումդ միշտ պիտի երգես նվագածիդ ամեն մի ֆրազը»[1]:
Եվ իսկապես, մեծ վարպետի դասերն իզուր չանցան. Բենիկն երկար տարիներ անսամբլի առաջատար դուդուկահարն էր: Նրա գործիքն ուներ յուրահատուկ տեմբր, որ շատերին էր հիացնում և զարմացնում: Նրա վարպետության մասին է վկայում այն փաստը, որ նույնիսկ դուդուկի հնչեղ ձայնարտաբերման ժամանակ գործիքին հատուկ ձայներանգը (այսպես ասած՝ պզզոցը) Բենիկի մոտ իսպառ բացակայում էր. դա իրապես վարպետության արդյունք էր: Գործընկերները նշում են նաև Բենիկի կիրթ նվագաոճը՝ զուտ և հայեցի:
2002 թվականից Բենիկ Իգնատյանը բնակվում է ԱՄՆ-ում:

1.Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝106

**Ռուբիկ Հարությունյան** (1956)
Ռուբիկ Բալաբեկի Հարությունյանը ծնվել է Հրազդանի շրջանի Վերին Ախտա գյուղում: Երաժշտական գերդաստանում բոլորը սիրում էին հայ երգն ու նվագը. Հովրամ պապը երգում էր, հորեղբայրը՝ Աղաբեկը, հայտնի զուռնաչի էր, իսկ հայրը՝ դհոլահար: Երաժշտական ընտանեկան ավանդույթները, բնականաբար, փոխանցվեցին նաև Ռուբիկին: Առաջինը փորձեց հորեղբոր զուռնան. թեև անվարժ ու դողդոջուն էր առաջին հնչյունների արտաբերումը, սակայն հորեղբայրը ոգևորեց նրան և այլևս հետ չվերցրեց զուռնան տղայի ձեռքից, վստահ, որ թերևս Ռուբիկը շարունակի իրենց գործը: Այդպես էլ եղավ. ավանդական այդ նվագարանը, որով նա կատարում էր գեղջկական երգեր ու պարեղանակներ, հարսանեկան շուրջպարեր ու արևելյան մուղամներ, խորը արմատներ գցեցին երիտասարդի սրտում և տարան նրան դեպի երաժշտական աշխարհ:
Դուդուկի հետ նրա կատարողական վարպետության աճը կապված է մեծ վարպետ Ջիվան Գասպարյանի հետ: Հենց նա էլ դարձավ Ռուբիկի պրոֆեսիոնալ ուսուցիչը, որի տված դասերը մինչև օրս էլ ուղեկցում են նրան:
«Ես Ջիվան Գասպարյանին համարում եմ ոչ միայն դուդուկի իմ առաջին ուսուցիչը, այլև իմ երաժշտական կյանքի ուղենիշը»,- խոստովանում է արդեն ինքը վարպետացած դուդուկահարը[1]:
Ռուբիկը սովորել է Երևանի երաժշտամանկավարժական ուսումնարանում, իսկ երկար տարիներ աշխատել է Հայաստանի Թ.Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի գործիքային խմբում (1975-95 թթ.): Կատարել է բազմաբնույթ ստեղծագործություններ (Կոմիտաս, Սայաթ-Նովա, Ջիվանի, Շերամ, Շահեն, Ա.Մայիլյան, Վ.Հովսեփյան, ժողովրդական երգեր ու պարեղանակներ և այլն):
Անհատապես վարպետորեն նվագակցում էր շատ երգիչ-երգչուհիների:
Հայաստանի վաստակավոր արտիստ, երգիչ Թովմաս Պողոսյանը իր մենակատարումների մեծ մասը երգել է Ռուբիկի վարպետ կատարումների նվագակցությամբ: Ահա թե ինչպես է ներկայացնում նրան ճանաչված ու սիրված երգիչը. «Ռուբիկ Հարությունյանը իր սերնդի վարպետներից է, որն, իր մեջ կրելով անցյալի մեծերի լավագույն սկզբունքները, կարողացավ դրանց հիման վրա կայանալ, և բացի այդ, բնածին տաղանդի շնորհիվ, կարողացավ դուդուկի արվեստի ասպարեզում հաստատել իր ինքնատիպ տեսակը: Նրա արվեստին բնորոշ է խիստ հայկական հնչերանգը, զգացմունքային ու նրբաճաշակ մեղեդայնությունը: Նրա կատարած մեղեդին ունկնդրին հասցնում է մեր ժողովրդի մշակութային հնագույն և ազնիվ շերտերին:
Ռ.Հարությունյանի **դուդուկը հայ մարդու սրտի թարգմանն է**»:
90-ականների կեսերից Ռ. Հարությունյանը բնակվում է ԱՄՆ-ում:

1.Մկրտչյան Կ., Հայ դուդուկահարներ: Երևան, 1987, էջ՝112



**Ալեքսանդր Հարությունյան** (1961)
Ալեքսանդր Վլադիմիրի Հարությունյանը ծնվել է Վրաստանում, Բաթումի քաղաքում, արվեստագետի ընտանիքում: Հայրը վաստակավոր արտիստ, դուդուկահար Վլադիմիր Հարությունյանն է, Պարի պետական անսամբլի մենակատար:
1982 թվականին Ալեքսանդրը ընդունվել է Հայաստանի պարի պետական անսամբլ, որպես դուդուկահար, միաժամանակ սովորելով Էջմիածնի Ակումբա-գրադարանային տեխնիկումի դուդուկի բաժնում:
1994-ին ստեղծել է «Արմենիա» դուդուկահարների խումբը, որը գործում է մինչ օրս:
Ելույթներ է ունեցել մի շարք երկրներում: Նվագել է Ֆրանսիայում, Բոբինի թատրոնի «Աղոյանների ցեղասպանությունը» ներկայացման մեջ, համագործակցելով դերասան՝ Սիմոն Աբգարյանի հետ:

**Արա Բախտիկյան** (1962)
Արա Սերգեյի Բախտիկյանը ծնվել է Գավառում: Սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Դուդուկ նվագելը սովորել է պապից, վերջինս նվագում էր նաև զուռնա, կլարնետ և բոլոր իրադարձությունների (հարսանիք, ծես և այլն) անփոփոխ մասնակիցն էր:
1982-ին Արայիկն ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա, սովորել ճանաչված դուդուկահարներ Ջիվան Գասպարյանի և Խաչիկ Խաչատրյանի դուդուկի դասարաններում: Ավարտել է 1987-ին՝ տիրապետելով դուդուկ, զուռնա և սրինգ նվագարաններին:
Սայաթ-Նովայի անվան ազգային մրցույթի (1987) մրցանակակիր է, Ուկրաինայի երկրորդ երաժշտական միջազգային փառատոնի (1991) դափնեկիր: 1999-ին Գերմանիայում մասնակցել է «Տաջիկստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի երաժշտություն» փառատոնին:
Աշխատել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում (1988-91): 1988-ից սկսած պայմանագրով աշխատել է եվրոպական մի շարք երկրներում, համագործակցել աշխարհի լավագույն սիմֆոնիկ նվագախմբերի հետ՝ կատարելով Ա.Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայում դուդուկի և զուռնայի մենանվագները (Բեռլին,



*Արա Բախտիկյան*

Դրեզդենի սիմֆոնիկ նվագախմբեր, Նիդերլանդական ռադիոյի և հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախումբ, «Լոնդոն-սիմֆոնիետա» նվագախումբ /ղեկ.՝ Դիեգո Մասսո/, Կինի սիմֆոնիկ նվագախումբ, Ս.Պետերբուրգի սիմֆոնիկ նվագախումբ /դիր.՝ Ալ.Սլադկովսկի/):
Հայաստանում, տարբեր դիրիժորների ղեկավարմամբ, նվագել է ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ (Լ.Ճգնավորյան, Էդ. Թոփչյան, Յ.Պողոսյան, Ռ.Ասատրյան):
Համագործակցել է «Փյունիկ», այսօր արդեն՝ «Օշական» անսամբլի (ղեկ. Գր.Առաքելյան) հետ, մասնակցել է փառատոների: 2006 թ. Լոնդոնի «Լանգոլեն» միջազգային փառատոն-մրցույթին շահել է առաջին մրցանակ (նվագակցությամբ Գ.Առաքելյանի /թավջութակ/):
Ֆրանսիական Լիոն քաղաքի ժան Մարեի անվան թատրոնի «Դոն-Ժուան» ներկայացման մեջ Արան կատարել է դուդուկի նվագներ: Թատրոնի հետ շրջագայել է Ֆրանսիայի և Շվեյցարիայի տարբեր վայրերում:
Ա.Բախտիկյանը ունեցել է բազմաթիվ խառը ելույթներ և մենահամերգներ. Կովկասի մշակույթին նվիրված փառատոն - Ֆրանսիա, 2006; Ջազ-Ֆեստիվալ - Գրենոբլ, 2007; 2 մենահամերգ - Ֆրանսիա, 2006: 2007 թ. մայիսին նախատեսվում է հերթական մենահամերգը Ֆրանսիայում:
Համերգներով ելույթներ է ունեցել ֆրանսիական հայտնի «Musicatreize» երգչախմբի (ղեկ.՝ Ռոլանդ Հայրապետյան) հետ:
Բախտիկյանը նվագել է գերմանական, իտալական բազմաթիվ կինո և դոկումենտալ ֆիլմերի երաժշտության մեջ, ինչպես նաև ՀայՖիլմի «Նամուս» ֆիլմի վերականգնված տարբերակի երաժշտության համար:
Հրատարակել է չորս ձայներիզ, որոնցից մեկը՝ Հայաստանում, երեքը՝ Եվրոպայում.

1.«Armenian traditional instruments. Araik Bakhtikian - duduk» (2000, Հայաստան):
2. Musik from Tajikistan ա Georgia ա Azerbeijan ա Armenia - Awet Terteryan, symphony NO 3 (cond. M.Nelmrand): Drezden, 2001
3. Mein herz Brennt աTorsten Rasch, NO 4 ա Sehnsucht Orchesterlieder: Germany, 2003
4. «Monodiques. Araik Bartikian ա doudouk solo» (2006, France):
Ներկայումս աշխատում է Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում: Համագործակցում է «Սիկորսկի» հրատարակչության հետ՝ իբրև Ավետ Տերտերյանի 3-րդ Սիմֆոնիայում դուդուկի մշտական կատարող:



**Արմեն Ստեփանյան** (1962)
Արմեն Հայկի Ստեփանյանը ծնվել է Երևանում:
Երաժշտական կրթությունը ստացել է Երևանի Հ.Դանիելյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանում: Սերը դուդուկի հանդեպ որդու մեջ սերմանվեց հոր՝ դուդուկահար Հայկ Ստեփանյանի, այնուհետև՝ Հայաստանի պարի պետական անսամբլի դուդուկահար Եղիշե Մանուկյանի շնորհիվ:
Բարձրագույն երաժշտական կրթությունը Արմենը ստացել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ազգային նվագարանների բաժնում, ուսանելով Ջիվան Գասպարյանին (1980-85 թթ.) և, հատկապես, ասպիրանտուրայում (ավարտել է 1988-ին)՝ կրթվելով այնպիսի հեղինակավոր մասնագետների մոտ, ինչպիսիք էին՝ Խաչատուր Ավետիսյանը, Ռոբերտ Աթայանը, Ծովակ Համբարձումյանը և ուրիշներ:
Այդ կրթությունը դուդուկահարին հղկեց որպես լուրջ արվեստագետ, որն օգնեց նրան իր ստեղծագործական հետագա գործունեության մեջ:
Ուսանողական տարիներից Արմենն աշխատել է որպես Երևանի Կույրերի միավորման ժող.գործիքների ինքնագործ խմբի ղեկավար, ինչպես նաև՝ նվագել է Արմեններ պարախմբի (ղեկ.՝ Լ.Քուրդայան) գործիքային կազմում:
1988 թվականից Ա. Ստեփանյանը դասավանդում է կոնսերվատորիայում և դասական կրթություն տալիս երիտասարդ սերնդի դուդուկահարներին:
2000 թ. Ա. Ստեփանյանը ստեղծել է «Վաչե Հովսեփյանի անվան դուդուկահարների անսամբլ», որի ձայնագրությունների CD-ն հրատարակվել է Երևանում, 2003-ին:
Տարբեր կազմի խմբերով և անհատապես՝ Արմենը մասնակցել է բազմաթիվ համերգների և շրջագայել տարբեր երկրներում:

**Հակոբ Մարտիրոսյան** (1962)
Հակոբ Ավետիքի Մարտիրոսյանը ծնվել է Լենինականում: Վաղ տարիքից ձեռքն է վերցրել գործիքը ու հորից էլ առել է դուդուկ նվագելու իր առաջին դասերը: 12 տարեկան Հակոբին ընդունում են Տեքստիլագործների մշակույթի պալատի ժողովրդական գործիքների անսամբլ, որի համերգների ժամանակ նա հաճախակի ելույթներ է ունենում մենակատարային համարներով:
1977 թվականին Հակոբը ընդունվում է Լենինականի Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարան, սկզբում սովորում է Ժ. Սնդոյանի, իսկ այնուհետև՝ Մ. Մալխասյանի դասարանում: 1981- ին, գերազանց ավարտելով ուսումնարանը, Հակոբը աշխատանքի է անցնում Ն.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում, որպես դուդուկի դասատու: Մեծ սիրով ու աշխատասիրությամբ պատրաստում է շնորհալի աշակերտներ, միաժամանակ, շարունակելով աշխատակցել տեքստիլագործների անսամբլի հետ:
Այսօր էլ նա մասնակցում է համերգների, ելույթներ ունենում որպես մենակատար: Տեքստիլագործների «Արագած» ժողովրդական երգի ու պարի անսամբլի կազմում մեկնել է շրջագայությունների (Սիրիա, Թուրքիա, Բելգիա և այլուր):
1983 թվականին նա մասնակցել է Լենինականում կազմակերպված «Դուդուկն է երգում Գյումրիում» անդրկովկասյան փառատոնին և ստացել հատուկ մրցանակ ու դիպլոմ:
Հակված է ավանդական նվագելաոճը պահպանելուն: Իր սաների հետ նոտային տեքստերը ճշգրտորեն սերտելուց զատ, ուսուցանում է նաև բանավոր ավանդման ճանապարհով, ինչը հնարավորություն է տալիս աշակերտին գործնականորեն ծանոթանալ այս կամ այն երաժշտի նվագելաոճին, մեկնաբանման առանձնահատկություններին ու կատարման նրբերանգներին:
Հակոբ Մարտիրոսյանի աշակերտները մեծ հաջողությամբ պարբերաբար ելույթներ են ունենում Շիրակի մարզային և հանրապետական տարբեր միջոցառումներին, մասնակցում փառատոների և մրցույթների, շահում դիպլոմներ ու մրցանակներ:
Իբրև մասունք, Հակոբն իր տանը պահում է հոր՝ Ավետիքի նվագարանները, իսկ ժողովրդական երաժշտությունը համարում է ազգային դիմագծի ու ավանդույթների պահպանման լավագույն գրավական:



**Արսեն Գրիգորյան** (1963)
Արսեն Քաջիկի Գրիգորյանը ծնվել է Երևանում: Երաժշտական ժառանգությունը ստացել է պապիկից՝ դուդուկահար Անդրանիկ Գևորգյանից, ինչպես նաև մորեղբայր Հարություն Գևորգյանից: Որպես երաժիշտ, պատանի Արսենը հանդես է եկել պարուսույց Բորիս Գևորգյանի և վաստակավոր արտիստ, քամանչահար Հրաչյա Մուրադյանի ղեկավարությամբ գործող «Բերդ» պարախմբում:
Սովորել է Երևանի մանկավարժական ինստիտուտի մշակույթի ֆակուլտետի ժող.գործիքների բաժնում (դաս.՝ ): Որպես հոգևոր ուսուցիչ է ճանաչում դուդուկի անզուգական վարպետ Վաչե Հովսեփյանին:
1987 թվականին, կոմպոզիտոր Մանվել Բեգլարյանի հրավերով, ընդունվում է Ազգային ռադիոյի Արամ Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլ, որտեղ աշխատում է մինչև օրս: Արսենը հանդես է գալիս ինչպես մենակատար, այնպես և նվագակցող. նա ելույթներ է ունեցել հայ ժողովրդական երգի հանրահայտ կատարողների հետ՝ Օֆելյա Համբարձումյան, Հովհաննես Բադալյան, Ռուբեն Մաթևոսյան, իսկ 1991 թվականին, Երևանում, Արսենը նվագել է ռոք աստղ Յան Գիլանի հետ:
Արսեն Գրիգորյանը ելույթներ է ունեցել մի շարք երկրներում, այդ թվում՝ Սիրիայում, Կանադայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իրանում, Լիբանանում և այլուր:
Սկսած 2000 թվականից, թողարկվել են Արսեն Գրիգորյանի երեք CD-ները՝ «Հայոց գույներ», «Անուրջներ», «Մտորումներ»:

**Տիգրան Պողոսյան** (1963)
Տիգրան Իշխանի Պողոսյանը ծնվել է Երևանում: Երաժշտական ունակությունները ժառանգել է ծնողներից. պապը նվագել դուդուկ է, հայրը՝ կլարնետ, մայրը սիրել է երգել: 14 տարեկանում Տիգրանը սկսել է սովորել Հրայր Փարվանյանի մոտ:
1984-1988թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետում: Սկսած 1988ից մինչև 1992 թվականը, դասավանդել է մանկավարժական ինստիտուտում, Էջմիածնի ակումբա-գրադարանային տեխնիկումում, որպես դուդուկի ուսուցիչ:
1997 թվականին հայ երաժշտության երախտավորներ՝ Մարգար Մարգարյանի, Լևոն



*Գևորգ Դաբաղյան*

Մադոյանի, Վաչե Հովսեփյանի անվան դուդուկահարների համահայաստանյան անդրանիկ մրցույթում ճանաչվել է հաղթող, արժանանալով առաջին մրցանակի: Ելույթներ է ունեցել ԱՄՆ-ում, Կանադայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում, Թայվանում, Ավստրիայում:

**Գևորգ Դաբաղյան** (1965)

Գևորգ Գուրգենի Դաբաղյանը ծնվել է Երևանում, երաժշտասեր ընտանիքում:
Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 94 դպրոցում, զուգահեռաբար ավարտել է Պ.Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտական դպրոցի կլառնետի դասարանը (դաս.՝ Ս.Շինդյան):
Երաժշտական կրթությունը Գևորգը շարունակել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում՝ դուդուկի վարպետ Խաչիկ Խաչատրյանի դասարանում/ 1980-84թթ./: Մինչև օրս էլ Գևորգն իր կրթական ճանապարհին միակ ու անփոխարինելի վարպետ է ճանաչում իր ուսուցչին, թեև մեծագույն հարգանքով է արտահայտվում մյուս վարպետ դուդուկահարների մասին:
Բարձրագույն երաժշտական կրթությունը նա ստացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում /դաս՝ Արարատ Պետրոսյան,1984-89թթ./, սովորել է նաև ասպիրանտուրայում՝ մեծահամբավ կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի մասնագիտական հսկողությամբ /1989-92 թթ./:
Այժմ Գ.Դաբաղյանը դասավանդում է կոնսերվատորիայում, ունի բազմաթիվ սաներ, որոնք համագործակցում են թե՛ իրենց վարպետի հետ, և՛ թե զբաղվում համերգային անհատական գործունեությամբ: Իր մանկավարժական և համերգային գործունեության համար Գ.Դաբաղյանը ստացել է դոցենտի կոչում /2005/:
Սակայն, դեռևս ուսանողական տարիներից է սկսվել Գ.Դաբաղյանի կատարողական գործունեությունը:
1980-1996 թթ. նա եղել է Հայաստանում հայտնի «Ակունք» ֆոլկլորային անսամբլի դուդուկահարը (ղեկ.՝ Մ.Մուրադյան, հետագայում՝ Հ.Փանոսյան):
1990 թվականին Դուշանբեում կայացած երաժշտական փառատոնին «Արևելյան լավագույն ազգային նվագարան» անվանակարգում Գևորգը ստացել է «Գրան պրի»: 1991-ին Երևանում կազմակերպված Սայաթ-Նովայի անվան մրցույթում արժանացել է գլխավոր մրցանակին:
1992-ին Գևորգը ստեղծել է «Շողակն»՝ 8 հոգանոց ֆոլկլորային անսամբլը, որի նպատակն է՝ աշխարհին ծանոթացնել հայ ավանդական երգ-երաժշտությանը՝ իր նախաստեղծ ու անաղարտ տեսակով:
1994-ին ԱՄՆ-ում թողարկվել է Գ.Դաբաղյանի առաջին անհատական CD՝ «The Music of Armenia» անվանումով, և 1995 թվականին ստացել «Indi» մրցանակ:
2001 թվականին Գ.Դաբաղյանը մասնակցել է «The Worlds Multi-Voise» միջազգային երաժշտական նախագծին /Մոսկվա/, որի նպատակն էր միավորել տարբեր երկրների ժողովրդական նվագածուներին: Փառատոնի վերջում Գևորգը նվագել է հանրահայտ ջութակահար Գիդոն Կրեմերի հետ:
2001-ին թողարկվել է նրա երկրորդ CD, որը կոչվում է՝ «Miniatures, Gevorg Dabaghyan - Masterworks for Armenian Duduk»:
2002 թվականին պարսիկ կոմպոզիտոր Մեջեթ Էնթեզամին գրել է ստեղծագործություն դուդուկի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար, որը, Գևորգի մասնակցությամբ, ձայնագրվել է հատուկ «Միսս Մարիա» ֆիլմի համար (Իրան):
Սկսած 2001 թվականից, Գևորգ Դաբաղյանը ընտրվել է «Մետաքսի ճանապարհ» համաշխարհային ծրագրի դուդուկահար, որի շրջանակներում նվագել է կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի մի շարք ստեղծագործություններ աշխարհահռչակ թավջութակահար Յո-Յո Մայի և «Մետաքսի ճանապարհ» անսամբլի հետ՝ այնպիսի կարևորագույն դահլիճներում, ինչպիսին են՝ Նյու Յորքի Carnegie Hall-ը, Չիկագոյի սիմֆոնիկ մեծ դահլիճը, Սիեթլի Բենարոյա դահլիճը, Բրյուսելի, Քյոլնի ֆիլհարմոնիկ դահլիճները, Ամստերդամի Concertgebouw-ն, ինչպես նաև՝ Հռոմում, Միլանում, Ֆլորենցիայում, Վաշինգտոնում, Սան-Ֆրանցիսկոյում: Գևորգ Դաբաղյանը նաև նվագել է Շարաֆյանի ստեղծագործությունները Ամստերդամի Ատլաս անսամբլի, Կոմիտաս քառյակի, Քսենյա քառյակի, Հայաստանի Ազգային կամերային նվագախմբի, հանրահայտ ալտահար Յուրի Բաշմետի և «Մոսկվայի Սոլիստներ» նվագախմբի հետ:
2003 թվականին թողարկվել է «Շողակն» ֆոլկլորային անսամբլի CD, որի նվագացանկում Գ.Դաբաղյանը, բացի դուդուկից, նվագում է նաև զուռնա, շվի: Անսամբլի հետ նա շրջագայել է մի շարք երկրներում, սակայն նրա մենակատարային գործունեության սահմանները ավելի լայն են. ազատ արվեստագետի կարգավիճակով նա տարբեր համերգների և երաժշտական նախագծերի սիրված մասնակիցն է /ԱՄՆ, Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա և այլուր/:











Գ.Դաբաղյանը համագործակցում է աշխարհահռչակ երաժիշտների հետ՝ թավջութակահար Յո-Յո Մա, ջութակահար Գիդոն Կրեմեր, սակսաֆոնահար Յան Գարբարեկ, ալտահար Յուրի Բաշմետ, երգչուհի Իզաբել Բայրակդարյան և շատ ուրիշներ:
Ձայնագրվել է հայրենական և օտար կինոֆիլմերի երաժշտության մեջ՝ «Նահապետ», «Արարատ» (ի դեպ, «Արարատ»-ի երաժշտությունը Կանադայում արժանացել է հատուկ մրցանակի), Տավիանի եղբայրների նկարահանած «Սոխակների բույնը», ռուսական և պարսկական ֆիլմերում և այլն:
Նրա նվագացանկը բազմազան է և հարուստ՝ գեղջուկ և աշուղական երգ, տաղ և հոգևոր մեղեդի, արևելքի դասական երաժշտության՝ մուղամաթի նմուշներ և ժամանակակից կոմպոզիտորական ստեղծագործություններ: Կոմպոզիտորներ Ռ.Ալթունյանը, Է.Հայրապետյանն ու Վ.Շարաֆյանն իրենց երկերում՝ գրված դուդուկի համար, նկատի են ունեցել կոնկրետ դուդուկահար Գ.Դաբաղյանի վարպետ կատարումները: Պետք է առանձնակի նշել, որ **Գևորգն առաջին պրոֆեսիոնալ դուդուկահարն է, որը բեմ է հանել հայ միջնադարյան հոգևոր երաժշտության նմուշներ՝ էլ ավելի հարստացնելով դուդուկի նվագացանկը, և ստացել դուդուկի նոր հնչերանգներ:**
Գ.Դաբաղյանի դուդուկն իսկապես երգում է, ինչպես մարդկային ձայնը, և վեր հանում նրանում ամփոփված հայի ոգու և մտածողության շերտերը, նրա անցյալի ու ներկայի ձայները: Վարպետ դուդուկահարի խոսքերով՝ «Դուդուկի հայկական դպրոցն անկրկնելի է ու աննախադեպ, տարածաշրջանում հավասարը չունեցող՝ յուրահատուկ, խորը և ինքնատիպ»[1]: Հասկանալիորեն, ընդհանուր առմամբ, «հայկական դպրոց» ասելով, նա նկատի ունի հայ դուդուկահարների՝ անցյալի և ներկայի ողջ ընտանիքի դերը, սակայն, որպես այդ ընտանիքի լիիրավ անդամ, ինքը նույնպես հսկայական ներդրում ունի այդ գործում:
Այսպես, 2005 թվականին Գևորգ Դաբաղյանի և կոմպոզիտոր Վաչե Շարաֆյանի ղեկավարած հանձնախմբի կողմից ներկայացրած «Դուդուկի երաժշտություն» նախագիծը հավանության արժանացավ «Մարդկության բանավոր և ոչ նյութական ժառանգության գլուխգործոցների 3-րդ հռչակում», և 2006 թվականին հայկական դուդուկի երաժշտությունը ճանաչվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համաշխարհային ոչ նյութական արժեքների գլուխգործոց:
Այսօր Գ.Դաբաղյանն ապրում է ստեղծագործական, կատարողական և մանկավարժական գործունեության ակտիվ և բովանդակալից կյանքով՝ սիրահարված իր դուդուկին և հայ երաժշտությանը:

1. «Համամարդկային, տիեզերական աղոթք. այսպիսին է դուդուկը՝ օտարների ընկալմամբ» (Ա. Թովմասյանի հարցազրույցը դուդուկահար Գևորգ Դաբաղյանի հետ): «Օր», թիվ 148, ապրիլի 29-30, 2003

**Գագիկ Մալխասյան** (1966)

Գագիկ Իլյիչի Մալխասյանը մեր հանրապետության ճանաչված դուդուկահարներից է: Ծնվել է Լենինականում: Իր մասին գրում է.«Ինձ շատ հոգեհարազատ էին ժողովրդական մեղեդիները: Ես անչափ սիրում էի Վաչե Հովսեփյանի, Մկրտիչ Մալխասյանի ձայնագրությունները: Դրանք լսում էի հմայվածի պես, մեծ հափշտակությամբ: Ունկնդրումները իմ մեջ դուդուկ նվագելու անմեկնելի ցանկություն առաջ բերին: Ես սիրահարվեցի այդ գործիքին և որոշեցի անպայման աշակերտել մեծ վարպետներին»:
Լենինականի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինն ավարտելուց հետո, 1981 թվականին, Գագիկն ընդունվում է Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի դուդուկի դասարանը (դաս.՝ Ռ.Պետրոսյան): Սովորելուն զուգահեռ, հաճախում է Լենինականի պիոներների պալատ, ուր տարիների ընթացքում այստեղ ձևավորվել էր յուրատեսակ ստեղծագործական մթնոլորտ, և անվանի շատ կատարողներ իրենց համերգային բեմական առաջին համարձակ քայլերը սկսում էին այստեղից: Առաջին լուրջ հաջողությունը 1983-ին էր, երբ «Դուդուկն է երգում Գյումրիում» հանրապետական փառատոնում նա ստացավ III կարգի մրցա-



*Գագիկ Մալխասյան*

նակ և դիպլոմ:1985-ին Գագիկ Մալխասյանը ընդունվում է Լենինականի ժող.գործիքների անսամբլ: Համերգներում ունեցած ելույթները վստահություն էին ներշնչում և, բանակում ծառայելուց հետո, 1990-ին ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների բաժնի դուդուկի դասարանը, դառնալով մեծահամբավ վարպետ Ջիվան Գասպարյանի աշակերտը: Ուսանելու տարիներին զուգահեռաբար աշխատում է Երվանդ Սահառունու անվան երգի պարի անսամբլում, «Գանձասար» Ֆոլկլորային անսամբլում, Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների նվագախմբում և Պարի պետական անսամբլի գործիքային խմբում: Դեռևս ուսանողական տարիներից, անհատական ելույթներով ու նաև տարբեր խմբերի կազմում շրջագայել է աշխարհի տարբեր երկրներում (ԱՄՆ, Հոլանդիա, Կանադա, Ֆրանսիա, Բուլղարիա, Հունաստան և այլուր):
Կոնսերվատորիան ավարտելուց հետո, սկզբում աշխատում է Լենինականի մշակույթի բաժնում, որպես մասնագետ, զուգահեռ` քաղաքի երաժշտական դպրոցներում դուդուկ է դասավանդում, իսկ 1997թ-ին նշանակվում է Գյումրու Շերամի անվան երաժշտական դպրոցի տնօրեն, որտեղ և մեծ նվիրումով աշխատում է մինչ օրս:
1998-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում նա ստանձնում է դուդուկի դասատուի պարտականությունները: Իսկ «Գոհար» երաժշտանոցում ժողովրդական գործիքների նվագախումբ ստեղծելու գաղափարը երաժշտի համար գրավիչ առաջարկ էր, և Գ. Մալխասյանը այս ոլորտում նույնպես փորձում է իր մասնագիտական հմտությունները գործի դնել: Հետևելով իր վարպետի` Ջիվան Գասպարյանի օրինակին, նա նորարարական փորձարկումների կողմնակից է և հաճախ է ելույթներ ունենում տարբեր կազմի նվագախմբերի հետ (սիմֆոնիկ, կամերային, էստրադային և այլն): Նշելի է Մալխասյանի համագործակցությունը Գյումրու հանրաճանաչ «Բամբիռ» ռոք անսամբլի հետ: Կատարողի համար սա հետաքրքրական փորձ էր` դուդուկը բեմական այլ հարթության մեջ հնչեցնելու և նոր հեռանկարներ գտնելու փորձ:
Տարիների ընթացքում ծավալած աշխատանքի գնահատանքը` որպես պարգև ստացած մեծաքանակ մրցանակները, դիպլոմներն ու գովասանագրերն են: Սակայն դրանց մեջ կա մեկը, որը, հատկապես, նվիրական ու թանկ է դուդուկահարի համար: Դա` Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի առիթով Գյումրիում կազմակերպված դուդուկի փառատոնն էր, որտեղ Մալխասյանին շնորհվեց «Վարպետի» կոչում:
Մալխասյանի կատարումները տեղ են գտել ՀՀ Ռադիոյի և հեռուստատեսության Ֆոնդային ձայնագրություններում և տեսադարանում: Նրա մասին տարբեր թերթերում և պարբերականներում տպագրվել են բազմաթիվ հրապարակումներ, ուր նշվում է, որ դուդուկահար Գագիկ Մալխասյանը ինքնատիպ ոճով և ուրույն մեկնակերպով երաժիշտ է: Ներկայումս, նա Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում դոցենտի պաշտոնակատար է. հրատարակել է «Դուդուկի ձեռնարկ» (2004, Երևան) ու փոխադրումների ժողովածու: Իսկ «Նվագում է Գագիկ Մալխասյանը» ձայներիզը հայ ժողովրդական երաժշտության երկրպագուների ձայնադարանում տեղ գտած և սիրված ձայնագրություններից է:

**Արշակ Սահակյան** (1970)
Արշակ Արկադիի Սահակյանը ծնվել է Երևանում:
1986-1989 թթ. սովորել է Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի, իսկ 1990-1995թթ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժող.գործիքների բաժնի դուդուկի դասարանում: Սկսած 1991 թվականից, Արշակը աշխատում է Հայաստանի պարի պետական անսամբլում, որպես դուդուկահար-մենակատար:
Հյուրախաղերով ելույթներ է ունեցել Ֆրանսիայում, Չինաստանում, Լիբանանում, Արաբական Էմիրություններում, Թուրքիայում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Ռուսաստանում, Կանադայում:
2002 թվականին մասնակցել է Գյումրիում անցկացված դուդուկահարների փառատոնին: 2000-ին, Արմեն Ստեփանյանի հետ համագործակցությամբ, ստեղծել է Վաչե Հովսեփյանի անվան դուդուկահարների խումբ:

**Արմեն Գրիգորյան** (1971)
Արմեն Վաղինակի Գրիգորյանը ծնվել է Երևանում, երաժշտի ընտանիքում: 1978-88 թթ. սովորել է թիվ 73 միջնակարգ դպրոցում: 1985-ին ընդունվել է Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դուդուկի և շվիի դասարան (դաս.` Ն.Ժամհարյան) և ինգամյա կուրսը ավարտել երկու տարում: Այդ տարիներին մասնակցել է բազմաթիվ մրցույթների, պարգևատրվել և դարձել է դափնեկիր, դարձել է ոսկե մեդալակիր` դուդուկահարների հանրապետական մրցույթում:
1988-ին ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա, սովորել ճանաչված դուդուկահար Ջիվան Գասպարյանի դուդուկի դասարանում: Սովորելու ընթացքում դասավանդել է Մ.Միրզոյանի անվան երաժշտական դպրոցում, իսկ 1990-ին տեղափոխվել է Ա.Տիգրանյանի անվան դպրոց և աշխատել մինչև 1992 թվականը:
1989-ից աշխատել է նաև մշակույթի նախարարությանը կից Կռունկ պարի անսամբլի ղեկ.` ժող. արտիստ Ազատ Ղարիբյան, հետագայում` Թ.Գրիգորյան գործիքային կազմում: 1992-ից աշխատել է ռադիոյի և հեռուստատեսության Ա.Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլում:
1993-ին ավարտել է կոնսերվատորիան և աշխատել հարազատ ամբիոնում` մինչև 1995-ը: 1997-ին ճանաչված երգիչ Պ.Պողոսյանի հետ հիմնադրել են ազգային ռադիոյին կից «Վերածնունդ» անսամբլը, որտեղ Արմենն աշխատել է և´ որպես դուդուկահար, և´ որպես խմբի տնօրեն, մինչև 2000 թ.:
Ունի բազմաթիվ աշակերտներ, որոնք սովորում են կոնսերվատորիայում և մանկավարժական համալսարանի մշակույթի Ֆակուլտետում:
Համերգային շրջագայություններով եղել է ԱՄՆ-ում (1988, 1995, 2005, 2006), Ֆրանսիայում (1991-92), Ավստրալիայում (1995), Արաբական Էմիրություններում (1997, 2004), Լիբանանում (1996, 2000), Սիրիայում (1989, 2005), Իսպանիայում (1998), Հոլանդիայում (2003), Լեհաստանում ու Գերմանիայում (2004) և այլուր: Տարիներ շարունակ համագործակցել է լավագույն երգիչ-երգչուհիների հետ: Ունի բազմաթիվ ձայնագրություններ, որոնք պահվում են ռադիոյի Ֆոնդում:
Ա.Գրիգորյանը ձայնագրել է լազերային երեք ձայներիզ, որոնք մեծ հաջողությամբ ու պահանջարկով տարածվել են տարբեր երկրներում: Պատրաստվում է հրատարակության չորրորդ ձայներիզը` ամերիկյան ճանաչված ստուդիաներից մեկի կողմից:
2005թ-ից, Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի (ղեկ.` պրոֆ. Ն.Դավթյան) հիմնադրման օրից, հանդիսանում է դուդուկահարների կոնցերտմայստերը:
2005-ից ստեղծել է նաև դուդուկահարների քառյակ, որոնք կատարում են տարբեր ժանրի գործեր (մշակումներն իրականացնում է կոմպոզիտոր Ստ.Շաքարյանը):

**Արա Մկոյան** (1972)
Արա Հայկարամի Մկոյանը ծնվել է Թալինի շրջանի Արեգ գյուղում:
1987-ին ավարտել է տեղի երաժշտական դպրոցի դուդուկի բաժինը (դաս.` Հ.Կոստանդյան) և1987-ին շարունակել ուսումը Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան երաժշտական ուսումնարանում (դաս.` Ալ.Սաղաթելյան, Վլ.Կրոյան):
1992-ին ընդունվել և 1997-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի` ազգային նվագարանների բաժնի` Գևորգ Դաբաղյանի դուդուկի դասարանը: 1999-ին` նաև ասպիրանտուրան:
Համատեղ աշխատել է ազգային ռադիոյի «Ակունք» ժողովրդական անսամբլում (Հ.Փանոսյան), ինչպես նաև` 1994-ից մինչև օրս, Թ. Ալթունյանի անվան ժողովրդական երգի և պարի պետական անսամբլում, որպես առաջին դուդուկահար:
1999-2000-ին դասավանդել է կոնսերվատորիայում:
Ելույթներ է ունեցել, Իտալիայում, Անգլիայում, Հունգարիայում, Ավստրիայում, Խորվաթիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ռուսաստանում:
1993-ից համագործակցում է «Սասուն» Ֆոլկլորային անսամբլին (ղեկ.` Ա.Մանուկյան):
2001 թվականին, Գյումրիում մասնակցել է Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700-ամյակին նվիրված փառատոնին, արժանացել «դուդուկի վարպետ» կոչմանը:
2004-ին լույս է տեսել նրա առաջին CD`«Կարոտ քո ձայնին»( ԱՄՆ):



*Վահան Հարությունյան*

**Վահան Հարությունյան** (1972)
Վահան Հարությունի Հարությունյանը ծնվել է 1972 թ.,ՀՀ Արմավիր քաղաքում, տոհմիկ երաժիշտների ընտանիքում: Իր առաջին ուսուցիչը հայրն էր` Հարություն Հարությունյանը (ծնվ. 1937), որը դուդուկահար Լևոն Մադոյանի լավագույն աշակերտներից մեկն է եղել:

Ավարտել է ծննդավայրի երաժշտական դպրոցը, այնուհետև՝ Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի դուդուկի բաժինը:
1991-96թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, շվիահար Արարատ Պետրոսյանի և ՀՀ վաստակավոր արտիստ, դուդուկահար Գևորգ Դաբաղյանի դասարանում: Բազմիցս համերգներով շրջագայել է Հայաստանում, ԱՊՀ երկրներում, Եվրոպայում և ԱՄՆ-ում:



Կարապետ Շաբոյան

**Կարապետ Շաբոյան** (1976)
Լենինականում ճանաչված դուդուկահար Կարո Շաբոյան-կրտսերը, կարծես, եկավ փոխարինելու 1944թ.-ին պատերազմում զոհված իր անվանակից պապին: Շաբոյանների ընտանիքում գրեթե բոլորն օժտված էին գեղեցիկ ձայնով, և հայ ժողովրդական երգն ու պարն այստեղ իր ուրույն դերն է կատարել շնորհալի երիտասարդի երաժշտական ունակությունների զարգացման գործում:
Կարապետ Խաչատուրի Շաբոյանը (կամ, ինչպես մտերմաբար կոչում են՝ Շաբոյենց Կարոն) ծնվել է Լենինականում:1984-ին ընդունվել է Ն. Տիգրանյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի դուդուկի դասարանը, սովորել Վ. Բալոյանի դասարանում, զուգահեռ հաճախելով Լենինականի պիոներների պալատի ժողովրդական գործիքների անսամբլի պարապմունքներին:
1987թվականին Կարոն մասնակցում է Դուդուկի հանրապետական առաջին փառատոնին, որտեղ ստանում է դափնեկրի կոչում և հատուկ մրցանակ: Իբրև պարգևատրություն՝ հրավիրում են մասնակցելու Ֆրանսիա կատարվող շրջագայությանը:
1991-93թթ. երաժշտական կրթությունը նա շարունակում է Լենինականի երաժշտական ուսումնարանում, դուդուկահար Ռ.Պետրոսյանի դասարանում: Այդ տարիներին նա, մասնակցելով հանրապետական մրցույթի, շնորհալիների հատուկ խմբի հետ մեկնում է շրջագայության Սկանդինավյան երկրներ՝ Շվեդիա, Դանիա, Ֆինլանդիա, Նորվեգիա:
1993-98թթ. Կարո Շաբոյանը կրթությունը շարունակում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, հայտնի դուդուկահար Գ.Դաբաղյանի դասարանում: Ուսանողական տարիներին Շաբոյանը շարունակում է իր ելույթները համերգային տարբեր ծրագրերում, մասնակցում միջազգային տարբեր փառատոների, ստանում մրցանակներ:
Կոնսերվատորիան ավարտելուց հետո, նա1998-ից աշխատանքի է անցնում Գյումրու Պարի պետական անսամբլում (այժմ՝ Ա. Շաբոյանի անվան), որպես գործիքային խմբի ղեկավար: Այդ նույն թվականից նա հրավիրվում է նաև Գյումրու ժողովրդական գործիքների պետական նվագախումբ և, որպես մենակատար աշխատում է մինչ օրս:
Կատարողական գործունեությանը զուգահեռ երիտասարդ կատարողը դասավանդում է նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղում, ղեկավարում դուդուկի մասնագիտական դասարանը: Նրա շրջանավարտներն, իրենց վարպետի հետ կողք-կողքի, աշխատում են քաղաքի երաժշտական դպրոցներում ու տարբեր նվագախմբերում: Կ.Շաբոյանը ձեռնարկել է նաև պիոներների պալատի դուդուկահարների անսամբլի վերականգնումը:
Կարո Շաբոյան-դուդուկահարն ունի բազմաթիվ ձայնագրություններ, տեսագրություններ: Անվանի կատարողի ուշադրության կենտրոնում է նաև իմպրովիզացիայի արվեստը, մի ոլորտ, որն արևելյան ավանդական երաժշտության և ազգայինի շաղախից է գոյանում: Նա հաճախ է սիրում կրկնել. «Սիրիր ուրիշինը, սովորիր, բայց քո ազգայինը միշտ բարձր պահիր»:
Աշխարհի քարտեզի վրա քիչ երկրներ կան, որտեղ չի եղել Կարապետը՝ հայ երգն ու նվագը հնչեցնելով իր թավշյա դուդուկով ու զիլ զուռնայով (ԱՄՆ, Ֆրանսիա, Իտալիա, Անգլիա, Իսպանիա, Կիպրոս, Հունաստան և այլուր):

**Վարազդատ Հովհաննիսյան** (1977)
Վարազդատ Ալբերտի Հովհաննիսյանը ծնվել է Երևանում:
1990-94 թթ. սովորել է Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում (դաս.՝ Ն.Ժամհարյան):
1994-99 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (դաս.՝ Ա.Գրիգորյան, այնուհետև՝ Ն.Ժամհարյան): Իր վարպետությունը կատարելագործել է ասպիրանտուրայում՝ Գ.Դաբաղյանի ղեկավարությամբ: Ավարտելուց հետո հրավիրվել է աշխատանքի՝ կոնսերվատորիայի ազգային նվագարանների դուդուկի դասարանում:





Աշխատել է տարբեր պետական և ինքնագործ խմբերում: 2000-ից առ այսօր նվագում է «Վարպետներ» խմբում, որպես մենակատար: Համերգներով հանդես է եկել արտասահմանյան բազմաթիվ երկրներում: Համագործակցում է տարբեր անհատ երաժիշտների, երգիչ-երգչուհիների հետ:
2001-ից համագործակցում է Ֆրանսիական TAO պրոդյուսերական ընկերության հետ և համարվում է TAO-ի աշխատակից: 2003-ին ձայնագրություններ է կատարել տարբեր երկրների երաժիշտների հետ Ֆրանսիայում:
2004-ին Եկատերինբուրգ քաղաքում, Ուրալի սիմֆոնիկ նվագախմբի հետ, հանդես է եկել Ա.Տերտերյանի 3-րդ սիմֆոնիայի կատարման մեջ՝ դուդուկի և զուռնայի մենանվագներով:
2005-ից համագործակցում է Լիոնի (Ֆրանսիա) կամերային նվագախմբի հետ:

**Կամո Սեյրանյան (**1979)
Կամո Համլետի Սեյրանյանը ծնվել է Չարենցավան քաղաքում: 1985-ից սովորել է տեղի թիվ 4 միջնակարգ դպրոցում և զուգահեռ հաճախել երաժշտական դպրոցի շվիի և դուդուկի դասարանը (դաս.՝ Գ. Խաչատրյան):
1994-ին ընդունվել է Երևանի Ա.Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական ուսումնարանի դուդուկի բաժինը (դաս.՝ Մ.Կարապետյան), իսկ 1997-ից՝ ընդունվել և 2002-ին ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան և ասպիրանտուրան (2004-06 թթ.)՝ Գ.Դաբաղյանի դուդուկի դասարանում: 2003-ից մինչ օրս աշխատում է կոնսերվատորիայում և իր կատարողական վարպետության գաղտնիքներն հաղորդում երիտասարդներին:
Մինչ ուսումնառությունն, արդեն, Կամոն ելույթներ է ունեցել տարբեր վայրերում. 1993-ին, «Ոսկե հասկեր» (Չարենցավան) պարախմբի հետ շրջել է Արցախի բոլոր զորամասերում: 1997-ին, որպես գործիքային մասի ղեկավար, «Գեղարդ» պարախմբի (ղեկ.՝ Ա.Կիզիրյան) հետ եղել է Սիրիայում: Անհատապես և այլ խմբերի հետ, համերգներով շրջագայել է նաև Իրանում, Թուրքիայում, Ավստրիայում, Ավստրալիայում, Ուկրաինայում, Ռուսաստանի բազմաթիվ քաղաքներում:
1997 թվականին Կամոն մասնակցել է 15-50 տարեկան դուդուկահարների փառատոնին՝ նվիրված Մ.Մարգարյանին, Լ.Մադոյանին, Վ.Հովսեփյանին, որտեղ շահել է 2-րդ մրցանակ:
1999-ին հրատարակվել է առաջին ձայներիզը՝ «Սարեր կաղաչեմ» վերնագրով:
2006-ին կամերային երաժշտության համերգասրահում և Գյումրիի կոնսերվատորիայում կատարել է կոմպոզիտոր Ստ.Սուքիասյանի՝ դուդուկի և կամերային նվագախմբի համար գրված ստեղծագործությունը:
2006-ին Կ.Սեյրանյանի կատարմամբ նկարահանվել է առաջին տեսահոլովակը՝ «Պեպոյի երգը» (ռեժ. Ա.Գևորգյան): Պատրաստվում է երկրորդը՝ «Տոնական պար» վերնագրով:
2007 թ. Կամոն ելույթ կունենա Փարիզում, Արաբկիրի անվան հրապարակի բացման կապակցությամբ:



**Արթուր Եղիազարյան** (1981)
Արթուր Կարենի Եղիազարյանը ծնվել է Երևանում: Սովորել է Երևանի թիվ 76 միջնակարգ դպրոցում, զուգահեռաբար՝ Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի շվիի և դուդուկի դասարանում (դաս.՝ Նորայր Ժամհարյան): Բեմական ելույթները սկսել է 12 տարեկանից՝ մասնակցելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կազմակերպած մրցույթին (1993), իսկ 1994-ին, իբրև երաժշտական դպրոցի աչքի ընկնող աշակերտ, մանկական պատվիրակության կազմում մեկնել է Անգլիա և փայլուն ելույթներ ունեցել: Մանկահասակ տարիքում Արթուրը նվագել է նաև Մանկական Ֆիլհարմոնիայի ժող.գործիքների անսամբլում (ղեկ.՝ Հ.Մուրադյան և Ռ.Մանուկյան):
15 տարեկան հասակում, Արթուր Եղիազարյանը ընդունվում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շվիի դասարան (դաս.՝ Ն. Ժամհարյան, այնուհետև՝ Սիրակ Թորոսյան), սակայն, շվիին հավասար, վարպետանում է նաև դուդուկի կատարողականության մեջ: Ուշիմ և հետաքրքրասեր երաժշտի համար ուսումը միայն ժողովրդական նվագարանների բաժնում բավարար չէր: Եվրոպական երաժշտության հետ ծանոթացումն ու յուրացումը տարան նրան նաև դեպի դասական երաժշտության և փողային գործիքային արվեստի հարուստ ու բազմաշերտ ոլորտը: Այստեղ նրան հրապուրում էր հմայիչ սաքսոֆոնը, որի արագ տիրապետումն ու գերազանց



ուսումնառությունը կոնսերվատորիայում թույլ տվեցին համատեղել երկու մասնագիտություն՝ շվիահար-դուդուկահարի և սաքսոֆոնահարի (դաս.՝ պրոֆ. Ալեքսանդր Մանուկյան):

2001 թվականին Ա. Եղիազարյանը գերազանց ավարտում է կոնսերվատորիան , իսկ 2003-ին՝ ասպիրանտուրան: Մասնակցել է տարբեր մրցույթների և բազմաթիվ համերգների:

2000 թ. - Հայաստանի պատանի սաքսոֆոնահարների մրցույթ-փառատոն, (ավագ խմբի 1-ին մրցանակ):

2000 թ.- «Սելմեր-Փարիզ» միջազգային մրցույթ (Կին, դափնեկիր):

2002 թ. - Նանտի միջազգային մրցույթ (Ֆրանսիա, 2-րդ մրցանակ):

Նաև՝ համերգներ սաքսոֆոնահարների քառյակով և դուդուկով:

2005 թ. - «Հայաստանի ձայներ» համերգաշար՝ Արաքս Մանսուրյանի և Մելբուռնի «Ազատ Ղարիբյան» պարախմբի (ղեկ.՝ Հերմինե Գույումջյան) հետ:

Նաև՝ համերգ Մելբուռնի ջազ անսամբլի հետ՝ դուդուկով, շվիով, սաքսոֆոնով (Ավստրալիա)[1]:

2006 թ. - Համերգներ ԱՄՆ-ի քաղաքներում (դուդուկ և ասմունք՝ Բ.Դանիելյան):

2006 թ. - «Կովկասը մեր տունն է» փառատոն (Բաթումի):

2004-05 թթ. աշխատել է Հայաստանի պետական ջազ-նվագախմբում (ղեկ.՝ Ա.Մարտիրոսյան), որպես սաքսոֆոնահար, դուդուկահար և զուռնահար:

2004 թվականից մինչ օրս աշխատում է կոնսերվատորիայի փողային բաժնում, որպես սաքսոֆոնի դասարանի ղեկավարի ասիստենտ:

2006-ից մինչ օրս նաև դասավանդում է Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում, որպես սաքսոֆոնի և ժողովրդական փողային գործիքների դասատու:

«Արթուր Եղիազարյանի փայլուն կատարումները կրկին հավաստում են ազգային նվագարանների անկրկնելիությունը և դրանց տիրապետող վարպետների որակյալ սերնդափոխության փաստը»[2]:

1. Համերգների մասին տես՝ Sounds Armenian ա a celebration of traditional Armenian music, song and dance - բուկլետ, Մելբուռն, Ավստրալիա, 2005
2. Կիրակոսյան Ա., Ազգային հիմքով դեպի դասական վարպետություն: «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, թիվ 152, 24.08.2000

**Հովհաննես Ղազարյան** (1981)

Հովհաննես Սամվելի Ղազարյանը ծնվել է Լենինականում:

Սովորել է Ա.Բրուտյանի անվան երաժշտական դպրոցի դուդուկի դասարանում: Առաջին քայլերը կապված են Լենինականի պիոներների պալատի ժողովրդական նվագարանների անսամբլի հետ: Այս խմբի հետ նա շրջագայել է Հայաստանում և արտասահմանում: Նշանակալից է, հատկապես, Թուրքիայում կայացած համերգ-փառատոնը:

1997թ. ընդունվել է Գյումրու ժող. նվագարանների պետական նվագախումբ /գեղ. ղեկ.՝ Ջիվան Խաչատրյան/:

1997-ին «Դուդուկն է երգում Գյումրիում» երիտասարդական մրցույթ-փառատոնում ստացել է մրցանակ: Մասնակցել է «Իմ անկախ և ազատ Հանրապետությունը հինգ տարեկան է» մանկապատանեկան հանրապետական փառատոնին:

1998թ.-ին ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի դուդուկի դասարան: Ուսմանը զուգահեռ աշխատել է Գյումրու Ա.Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոցում:

2003թ., կոնսերվատորիայի մասնաճյուղն ավարտելուց հետո, ընդունվել է աշխատանքի նույն բուհում, որպես դասախոս: Նրա դասարանի աշակերտներն ու ուսանողները մասնակցել են տարբեր հանրապետական համերգ-մրցույթների:

1999թ. նա աշխատում է Գյումրու «Գոհար» ժող. նվագարանների անսամբլում, մասնակցում է բազմաթիվ համերգների Հայաստանում և արտերկրում:

2006թ. որպես մենակատար մասնակցել է ԵՊԿ Գյումրու մասնաճյուղում անցկացված երկրորդ փառատոն-գիտաժողովին:

**Էմմանուել Հովհաննիսյան** (1983 )

Էմմանուել Գևորգի Հովհաննիսյանը ծնվել է Երևանում: Միջնակարգ կրթությունը ստացել է թիվ 197 դպրոցում (1990-2000), զուգահեռաբար՝ 1998-ից սովորել է նաև Հ.Դանիելյանի անվան երաժշտական դպրոցի շվիի դասարանում (դաս.՝ Հ.Երեմյան):




*Էմմանուել Հովհաննիսյան*

Այնուհետև անցել է դուդուկի տիրապետման՝ արդեն հայտնի դուդուկահար Արմեն Գրիգորյանի ղեկավարությամբ:

2000-2005 թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (դաս.՝ Գ.Դաբաղյան): 2006-ին ընդունվել է ասպիրանտուրա՝ դարձյալ Գ.Դաբաղյանի ղեկավարությամբ:

Համերգային շրջագայություններով եղել է Հայաստանի տարբեր շրջաններում, Ավստրիայում, Շվեյցարիայում, Լեհաստանում, Չեխիայում, Ռուսաստանում, Մոնղոլիայում և այլուր: Մասնակցել է տարբեր մրցույթների (2004 թ. հանրապետական մրցույթ, առաջին մրցանակ; 2002-ին Վիեննայում փողային նվագարանների փառատոն; Մոնղոլիայում ֆոլկլորային երաժշտության փառատոն, ոսկե մրցանակ):

2003-ից աշխատում է «Տաղարան» անսամբլում (ղեկ.՝ Ս.Երկանյան), 2005-ից՝ Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբում (ղեկ.՝ պրոֆ. Ն.Դավթյան):

2006-ից դասավանդում է կոնսերվատորիայում:

2003-ին թողարկել է CD՝ Armenian music, համագործակցում է նաև ջազային երաժիշտների հետ, ունի ձայնագրություններ:

**Վաչե Փաշինյան** (1983 )

Վաչե Հարությունի Փաշինյանը ծնվել է Երևանում: Սովորել է թիվ 127 միջնակարգ դպրոցում: 1997-2001 թթ. սովորել է Երևանի Ա.Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական ուսումնարանի դուդուկի դասարանում (դաս.՝ Մուկուչ Կարապետյան): 2001-03 թթ. ծառայել է հայկական բանակում:

2004-ից սովորում է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (ղեկ.՝ դոց. Գ.Դաբաղյան):

Ուսմանը զուգահեռ աշխատել է՝ 1999-2000 թթ. «Ակունք» ֆոլկլորային անսամբլի (ղեկ.՝ Հ.Փանոսյան) գործիքային խմբում; 2003-04 թթ. Թ.Ալթունյանի անվան ժողովրդական երգի-պարի պետական անսամբլում (ղեկ.՝ Հ.Մանգասարյան, ապա՝ Ժ.Ալթունյան); 2005-ին՝ Հայաստանի Ազգային նվագարանների պետական նվագախմբում (ղեկ.՝ Ն.Դավթյան); մի կարճ ժամանակահատված եղել է «Կիլիկիա» ժող.նվագարանների սեքստետի դուդուկահարը: Համագործակցել է նաև տարբեր պարային խմբերի հետ: Համերգներով շրջագայել է Չինաստանում, Հունգարիայում, Ավստրիայում: Ներկայումս, Վաչեն ուսումնառությունը համատեղում է մանկավարժության հետ՝ դասավանդելով Դ.Սարյանի անվան Արվեստի թիվ 1 դպրոցի դուդուկի դասարանում:

**Արտակ Ասատրյան (**1985 )

Արտակ Վոլոդյայի Ասատրյանը ծնվել է Երևանում: Դուդուկ նվագել է 6 տարեկանից: 9-ից նվագել է Հայաստանի պետական մանկական ֆիլհարմոնիայի ժող.գործիքների նվագախմբում (ղեկ.՝ Հ. Մուրադյան), որպես առաջին մենակատար դուդուկահար:

1997 թ. 15-60 տարեկան դուդուկահարների համահայկական մրցույթ-փառատոնում արժանացել է երկրորդ մրցանակի:

2001 թ. Սոչիում կայացած Սերձսևծովյան երկրների փառատոնում արժանացել է «GOLDEN FERRY» մրցանակին:

2000 թվականին ընդունվել է Երևանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ և աշակերտել վաստակաշատ մանկավարժ, դուդուկահար Գ.Մինասովին:

Աշխատում է Գ.Մինասովի դուդուկահարների քառյակի կազմում:

Արտասահմանյան համերգներով հանդես է եկել որպես մենակատար, նաև «Մուշ» և Վասպուրական» պարախմբերի հետ՝ որպես երաժշտական մասի ղեկավար, դուդուկահար և զուռնահար:

2003-05 թթ. ծառայել է ՀՀԶՈւ-ի զինվորական փողային նվագախմբում:

2006-ին ավարտել է քոլեջը և ընդունվել Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիա (ղեկ.՝ Վ.Հովհաննիսյան):

Աշխատում է «Օշական» անսամբլում (ղեկ.՝ Գ.Առաքելյան), որի կազմում 2006 թվականին հյուրախաղերով եղել է Ֆրանսիայում:

2006-ից համալրել է «Կիլիկիա» ժող.նվագարանների սեքստետը (ղեկ.-ներ՝ Մ.Վարդանյան, Մ.Ոսկանյան):





# դուդուկի կառուցվածքը



Դուդուկը կազմված է երկու հիմնական մասերից՝ փայտյա մասից՝ «նայից» և ձայնարտադրիչից՝ ղամիշից: Փայտյա մասը գլանաձև փող է, պատրաստված է ծիրանենու փայտից: Փայտյա մասի մի կողմից արված են իրար հաջորդող ինը անցքեր, որոնցից ութը նախատեսված են տարբեր բարձրության հնչյուններ ստանալու համար, իսկ վերջին իններորդ անցքը արված է մաքուր լարվածք ստանալու համար: Հաճախ այս անցքը արվում է դուդուկի հակառակ մասում: Դուդուկի հակառակ կողմում արված է անցք՝ բթամատի համար, որը նույնպես նախատեսված է համապատասխան բարձրության հնչյուն ստանալու համար: Գլանաձև փողի փչելու մասում արված է բնիկ՝ ղամիշի համար: Տարածությունը մատների համար արվող անցքերի միջև, ինչպես նաև անցքերի տրամագիծը, տարբեր է՝ տարբեր լարվածքի դուդուկների դեպքում:

Այսօր ընդունված են դուդուկի յոթ հիմնական տեսակներ՝ «Սոլ», «Լա», «Սի-բեմոլ», «Սի», «Դո», «Ռե» և «Մի-բեմոլ»:

Դուդուկի տեսակը, այսինքն՝ լարվածքը, որոշվում է համաձայն այն հնչյունի, որը հնչում է գործիքի բոլոր անցքերը բաց վիճակում:

«Լա» դուդուկի երկարությունը 35.5 սմ է, արտաքին տրամագիծը՝ 2.2 սմ, իսկ ներքինը՝ 1.2 սմ, մի փոքր լայնանալով ղամիշի բնիկի մասում:

| **Մատների անցքերը** | **Տարածությունը սկսած դուդուկի ծայրից /մմ/** | | | |
|---|---|---|---|---|
| | **A** | **B** | **H** | **D** |
| **Առաջին** | 40 | 35 | 30 | 24 |
| **Բթամատի անցքը /հակառակ կողմում/** | 58 | 59 | 50 | 40 |
| **Երկրորդ** | 34 | 32 | 31 | 26 |
| **Երրորդ** | 30 | 28 | 27 | 25 |
| **Չորրորդ** | 31 | 30 | 30 | 27 |
| **Հինգերորդ** | 26 | 25 | 24 | 23 |
| **Վեցերորդ** | 30 | 29 | 28 | 26 |
| **Յոթերորդ** | 32 | 31 | 29 | 27 |
| **Ութերորդ** | 30 | 28 | 27 | 25 |
| **Իններորդ** | 40 | 38 | 36 | 35 |
| **Ներքին անցքի տրամագիծը** | 11.5-11.7 | 12-12.5 | 12.5-12.7 | 12.5-13 |

Մատների անցքերի տրամագիծը = 9.5 մմ

Ղամիշը պատրաստվում է եղեգից: Այն ունի զսպանակ, որի օգնությամբ կարգավորվում է ղամիշի փչելու հատվածի բացվածքը, և փական (պտկալ), որը նախատեսված է ղամիշի փչելու հատվածը փակ պահելու համար, երբ դուդուկահարը վերջացրել է նվագելը: Ղամիշի հակառակ մասում, ներքին կողմից, երբեմն դրված է փոքրիկ ալյումինե խողովակ, իսկ արտաքին կողմի վրա թել է փաթաթված, որի օգնությամբ կարգավորվում է ղամիշի կայուն դիրքը դուդուկի բնիկում և, հետևաբար, նաև գործիքի լարվածքը: Փչելու մասում, երկու կողմերից, կաշվե փոքրիկ կտորներ են փակցված, որոնք պահպանում են ղամիշը՝ ճաքելու վտանգից:

Ղամիշը, ինչպես և դուդուկը, ունի լարվածք: Օրինակ «Լա» դուդուկի համար նախատեսվող ղամիշի լարվածքը Դո է:

**Ղամիշի տրամագիծը ամենալայն հատվածում 2.9 մմ է, երկարությունը 10.5 սմ է, իսկ նրա տափակեցված մասի երկարությունը 7 սմ է:**







# զրույցներ պատրաստող վարպետների հետ



Այսօր Հայաստանում գործում են դուդուկ պատրաստող մի քանի վարպետներ: Նրանց թվում են՝ Ռուբեն Ռուշանյանը, վարպետ Աբելը, Կարեն Մուքայելյանը, Միշա Սադոնը, վարպետ Արթուրը, վարպետ Սուրենը, նրա որդին՝ Արայիկը:

Մեծագույն վարպետներից մեկը՝ վարպետ Կառլենը, ներկայումս ապրում է ԱՄՆ-ում:

Որպեսզի մեր տեղեկությունները դուդուկ գործիքի պատրաստման մասին ավելի ստույգ և օգտակար լինեն ընթերցողի համար, մենք որոշեցինք զրույցներ անցկացնել տարբեր սերունդներին պատկանող երեք վարպետների հետ: Թեպետ վստահ ենք, որ վարպետ դառնալու համար զուտ գրքում տրված տեղեկությունները բավարար չեն կարող լինել, սակայն, համոզված ենք նաև, որ ներկայացված հարցազրույցները շատ հետաքրքիր կլինեն ընթերցողի համար, ինչպես նաև, շատ օգտակար կլինեն նրանց համար, ովքեր հետաքրքրված են երաժշտական գործիքներ պատրաստելով և, գուցե, արդեն իրենց առաջին քայլերն են անում այս գործում:

## Զրույց վարպետ Ռուբեն Ռուշանյանի հետ (1939)



***Ե՞րբ առաջին գործիքը պատրաստեցիք:***

*Դեռ մանուկ էի: Այն ժամանակ քաղաքը քաղաքի նման չէր: Քաղաքում կովեր, ոչխարներ էին պահում, հովիվներ կային, արոտավայրեր: Եղեգ էր աճում: Ես եղեգից մի սուլիչ պատրաստեցի, հետո անցքեր արեցի, և այն դարձավ շվի, հովվի շվի: Դա իմ պատրաստած առաջին գործիքն էր: Հետո, երբ ավելի մեծացա, շուկայում տեսա, որ շվիներ և այլ տարբեր գործիքներ են վաճառում. վարպետներ կային, որոնք պատրաստում էին շվիներ, քամանչա, թառ և վաճառում շուկայում: Գնեցի մի շվի և սկսեցի նվագել: Հետագայում առաջարկեցին, որ խմբում նվագեմ: Այդպես սկսեցի ավելի լուրջ զբաղվել երաժշտությամբ, ավելի գրագետ: Խմբի ղեկավարը Երվանդ Սահարունին էր. նա դեռ Թաթուլ Ալթունյանից առաջ էր ղեկավարում: Սակայն այն ժամանակ նորմալ գործիք չկար. երկու հոգի կային Հայաստանում, որոնք պատրաստում էին կիսասարք գործիքներ՝ մեկը Լենինականի Թաթոսն էր, մյուսը՝ Երևանում Կոնդի Հարութը: Կոնդի Հարութը նվագում էր Ալթունյանի խմբում, ընդ որում, բացարձակ լսողություն ուներ և իր լսողության շնորհիվ շատ մաքուր էր նվագում, չնայած, որ գործիքները այն ժամանակ դեռ հստակ, կայուն լարվածք չունեին: Մատների, կիսամատների շնորհիվ էր ստացվում մաքուր նվագը: Նրանց գործիքները կիսասարք էին, և նվագողը ինքը պետք է հարմարեցներ, մաքրեր հնչյունաշարը: Հետագայում, ես միաժամանակ աշխատում էի Սերգեյանի ինստիտուտում, վարպետ էի, շտամպ էի պատրաստում և մտածեցի մի շվի պատրաստել: Եվ պատրաստեցի, երեք օկտավ ձայնածավալով, սակայն այն մաքուր չէր հնչում՝ օկտավաները մաքուր չէին: Երկար ուսումնասիրություններից, փորձերից հետո գտա գաղտնիքը՝ թե ինչպես կայուն, մաքուր հնչյունաշար ստանալ: Ես ուսուցիչ չեմ ունեցել և ամեն գաղտնիք գտել եմ ինքս՝ իմ ուսումնասիրությունների շնորհիվ: Հիմա շատ տարբեր գործիքներ եմ պատրաստում՝ շվիներ, դուդուկներ, պկու, զուռնա, նոր գործիքներ եմ ստեղծում: Արդեն քառասուն տարի է, ինչ զբաղվում եմ այս գործով:*

*Դուդուկը ավելի պարզ գործիք է պատրաստողի համար, նրա ձայնածավալը փոքր է, և հիմնական գաղտնիքը՝ ճիշտ նյութ ընտրելն է, ինչպես ղամիշի, այնպես էլ նայի՝ այսինքն դուդուկի համար, և իհարկե, ճիշտ լարվածք ստանալը: Մեր դուդուկը հնչում է բվվոցով: Այն տարբեր է վրացական, աղվանական, եգիպտական, պարսկական, թուրքական, մոլդովական նմանատիպ գործիքներից, դուդուկներից: Եթե մեր դուդուկի վրա նվագի ոչ հայ կատարող, ապա հնչողությունը լրիվ այլ կլինի, այնպես որ կատարողի անհատականությունը ամենակարևորն է այստեղ: Պատ-*





րաստողի վարպետությունը նրանում է կայանում, որ իր սարքած գործիքը առավել հարմար լինի դուդուկահարին՝ իր զգացմունքները արտահայտելու համար: Շատ կարևոր է ղամիշի դերը. նրա շնորհիվ է ստացվում դուդուկի ձայնի քաղցրությունը: Շատ ուրիշ նյութեր կան, որոնցից հնարավոր է պատրաստել ղամիշ, բայց միայն եղեգն է տալիս նման գեղեցիկ ձայնի որակ: Ես պետք է նշեմ, որ գործիք և ղամիշ պատրաստելու բոլոր փուլերը ինքս եմ անում, սկսած նյութը ընտրելուց մինչև վերջ: Եղեգի տարբեր տեսակներ կան՝ կա այսպես կոչված ղռի տեղի ղամիշ, ջրին մոտիկ աճող, ջրից հեռու աճող, կա էգ ու որձ ղամիշ, կողքերից ճյուղավորվող, ուղիղ: Ինչքան որ ջրին մոտ է աճում ղամիշը, այնքան ավելի փափուկ ու թույլ է լինում և, հակառակը, որքան ջրից հեռու է աճում, այնքան ավելի կարծր, պինդ է լինում: Եթե ղամիշը աճում է մի տեղ, ուր արևելքի կողմում բլուր կա և ջուր կա մոտակայքում, ապա ղամիշի ոստերը երկար են լինում, քանի որ ղամիշը արևասեր բույս է և արևածաղկի պես ձգտում է դեպի արևը, հետևաբար, ոստերը երկարում են: Երկար ոստերով ղամիշը շվի պատրաստելու համար է լավ: Եթե ղամիշը աճում է հարթավայրում, ապա ոստերը կարճ են լինում: Դուդուկի ղամիշը կարճ ոստեր պետք է ունենա: Այն դաշտային ղամիշն է, որը վաղ առավոտից տեսնում է արևը, արևածագը և կարիք չի զգում երկարացնել իր ոստերը արևը տեսնելու համար: Շատ նրբություններ կան, և ամեն մի վարպետ ինքն է որոշում, թե ինչպես պատրաստի ղամիշը, գործիքը, որ այն հայկական կոկորդին, ձայնի ճաշակին համապատասխան լինի: Վարպետը պետք է իմանա, տարբերի ղամիշի արմատի մասը և վերնամասը, որպեսզի ճիշտ այն պատրաստի: Եթե ներքևի մասում փչելու տեղը սարքվի, ապա նվագելուց այն կփակվի: Պետք է ղամիշը այնպես պատրաստվի, որ նվագելուց այն բացվի, որպեսզի հետո զսպիչով նրան ձգեն: Այսինքն՝ փչելու մասը պետք է ղամիշի վերին մասում արվի: Ղամիշը պատրաստելու ևս մի կարևոր պայման կա՝ այն պետք է սկսել ոչ թե տափակեցվող մասից սարքել, այլ սկզբից պետք է հակառակ կողմը Ֆիքսել: Փոքր երկաթե խողովակ է դրվում այս մասում, ներսի կողմից: Եթե այն չդրվի սկզբից, ապա այս անցքը կարող է փոքրանալ սեղմվելուց, իսկ սրանից ձայնի որակը կսրվի, և դուդուկի հնչողության որակը կվատանա: Որքան որ փոքր լինի անցքը, այնքան ավելի սուր կլինի ձայնի որակը:

Ամեն մի ժողովուրդ իր ականջին, իր լեզվին համապատասխան է գործիք պատրաստում, նաև մշակում է իրեն բնորոշ կատարողական ոճը, արվեստը:

***Աշակերտ ունե՞ք:***

Ոչ: Աշակերտը բարդ հարց է: Այս գործում շատ բան կա սովորելու, բայց և ինքը՝ վարպետը, պետք է ունենա ունակություն՝ գտնել գործի պատրաստման գաղտնիքները: Այլապես, աշակերտը վարպետ չի դառնա: Ես ինքնուս եմ, ուսուցիչ չեմ ունեցել, ամեն ինչ ինքս եմ գտել: Ինքս եմ մշակել ու ձևավորել գործիքի պատրաստման օրինաչափությունները, գործողությունների հերթականությունը: Եթե մի սխալ անես, այլևս հետ չես կարող վերադառնալ և ուղղել:

Այսօր զգում եմ պահանջ՝ փոխանցել իմ գիտելիքները նոր սերունդներին:

***Ո՞ր դուդուկն եք ավելի կատարյալ համարում: Ի նկատի ունեմ, թե ո՞ր տեսակի, ո՞ր լարվածքի:***

Եթե մի քանի կատարող դուդուկահար նվագեն միևնույն դուդուկով, միևնույն է՝ տարբեր հնչողություն կունենա: Սա գալիս է կատարողի վարպետությունից, զգացմունքներից: Ինչ վերաբերում է գործիքին. կա երկու հիմնական տեսակի դուդուկ՝ մեծ և փոքր: Սրանք ունեն տարատեսակներ, ասենք՝ մեկ, կամ կես, կամ մեկ ու կես տոն ցածր: Սրանք են հիմնական





դուդուկները, որոնց ձայնը լիարժեք դուդուկի հնչողություն ունի: Ձայնակցելու համար ավելի հարմար եմ համարում կարճ դուդուկի օկտավ ցածր տեսակը:

Ես, իհարկե, պատրաստել եմ և ավելի փոքր դուդուկներ, բայց սրանց ձայնը արդեն կապ չունի դուդուկի հետ: Որպեսզի ճշգրիտ դուդուկի ձայն ստացվի, կարելի է պատրաստել կարճ «Ռե» դուդուկի ևս երկու տարատեսակ՝ մեկ տոն ցածր և մեկ ու կես տոն ցածր: Ավելի բարձր լարվածքի գործիքը արդեն չի հնչի լիարժեք: Մեծ դուդուկը կարող է ունենալ մեկ տոն, մեկ ու կես տոն ցածր տարբերակներ, նաև երկու տոն: Ավելի ցածր տարբերակները արդեն դուդուկ չեն, նման գործիքը հանգիստ կարելի է փոխարինել, օրինակ՝ Ֆագոտով:

***Ի՞նչ լարվածք ունի ձեր դուդուկը: Նո՞ւյնն է սկզբունքը հնչյունաշարի լարվածքի, թե՞ տարբեր է ուրիշ վարպետների դուդուկներից: Օրինակ՝ վարպետ Կառլենի դուդուկի լարվածքի մասին դուք ի՞նչ կասեք:***

Նախ, ինքը՝ ղամիշը, պետք է հստակ լարվածք ունենա: Օրինակ, մեծ դուդուկի ղամիշի լարվածքը «դո» է, որպեսզի այն ճիշտ հնչի դուդուկի հետ, իսկ կարճ դուդուկի համար պետք է «ռե» ղամիշ: Եթե նույնիսկ մի փոքր շեղում լինի ղամիշի լարվածքում, ապա դուդուկի ձայնաշարը չի ստացվի, այն լրիվ կխախտվի: Իմ դուդուկի հնչյունաշարի լարվածքը մաժոր գամմա է, այսինքն՝ տոն, տոն կիսատոն, տոն, տոն, տոն, կիսատոն: Դուդուկի լարվածքը ստանալու համար, նախ, մոտավորապես եմ անում անցքերը, մի փոքր ցածր, որպեսզի հետո բարձրացնելու տեղ լինի՝ ճիշտ լարվածք ստանալու համար: Վերջինիս համար գործիքի անցքերը տաշվում են ներսի կողմից: Նույնիսկ վարպետ Կառլենը, դեռ առաջներում, պատրաստում էր մոտավորապես լարվածքով դուդուկ: Վերևում հնչում էր մաքուր, իսկ հինգերորդ մատի համար վեցերորդը պետք է հով աներ, վեցի համար էլ յոթերորդը, որպեսզի մաքուր հնչեին: Այսինքն՝ մեծ վարպետություն էր պահանջվում կատարողից՝ մաքուր հնչյուններ ստանալու համար: Իմ պատրաստած դուդուկի վրա նույնիսկ երեխան կարող է մաքուր հնչյունաշար նվագել: Իմ պատրաստած շվիները հանրահայտ են դարձել աշխարհով մեկ, քանի որ երեք օկտավ հնչյունաշար ունեն և կատարյալ մաքուր լարվածք:

***Բայց արդյո՞ք ճիշտ է կիսատոն ունեցող հնչյունաշարը դուդուկի, շվիի համար: Չէ՞ որ բնական լարվածքը այլ է՝ կիսատոնային տեմպերացիայից:***

Այո, բայց կատարող երաժիշտը պետք է քառորդ տոն բարձր ու ցածր հնչյունները ստանա կիսամատների և շրթունքների օգնությամբ, այսինքն՝ իր հոգին, զգացմունքները արտահայտի իր վարպետության շնորհիվ:

***Այսինքն՝ դուք քառորդ տոներ ստանալը թողնում եք կատարողի վարպետության վրա, իսկ գործիքի հիմքում պահպանում եք ավելի եվրոպական լարվածք:***

Այո, օրինակ, մեր քանոնը ունի երկու մանդալ՝ կիսատոն և տոն, իսկ արաբական քանոնը ունի վեց մանդալ: Բայց և մեր կատարողը կարող է, լարը սեղմելով, ստանալ իր քանոնի վրա քառորդ տոներ, բայց հիմքում տոն-կիսատոնային լարվածք է:

***Դուք պատմեցիք ղամիշի ընտրության նրբությունների մասին, իսկ*** *ինչպե՞ս* ***եք ընտրում դուդուկի փայտը:***

Դուդուկի փայտը ճիշտ ընտրելը մեծ տեմբրային նշանակություն ունի: Ընտրվում է ղըռ տեղի ծիրանի փայտը, այնպիսի ծառի, որը աճում է վայրի միջավայրում և բնական է ջրվում: Այսինքն՝ արհեստական ջուր չի ստանում: Այս պայմաններում աճող ծառը ունենում է տարեկանների



*շատ արտահայտված խտություն: Տարեկանների, այսինքն՝ օղակների խտությունը, արևի շատությունը, ջրի պակասությունը տալիս են փայտին յուրատիպ որակ, կարծրություն: Նման փայտի վրա երբ աշխատում ես, նրա վրայից շերտը դուրս է գալիս ինչպես երկաթից, թիթեղաձև տաշեղներով, իսկ երբ շիկացած երկաթի ես մոտեցնում, ապա ծայրերից յուղ է դուրս տալիս: Այսինքն՝ նման պայմաններում աճող ծառը նաև բարձր յուղայնություն ունի: Նման փայտից պատրաստած դուդուկը երբեք չի դեֆորմացվում ո՛չ գոլորշուց, ո՛չ էլ ցրտից կամ խոնավությունից: Իսկ օգտագործումից, նվագելուց նրա մեջ մարդու կենսական աղերից մի նոր յուրատիպ նյութ է առաջանում, որի շնորհիվ գործիքը էլ ավելի գեղեցիկ է հնչում: Օրինակ, ջութակը պատրաստում են եղևնուց ու թխկենուց, իսկ մեջը քսում են մեղվածերտ, որպեսզի կարգավորեն ձայնի լավ որակը ռեզերվուարում: Դուդուկի մոտ, ժամանակի ընթացքում, նվագելուց գոյանում է նմանատիպ օրգանական նյութ խողովակի ներսում, և այն շատ է նպաստում ձայնի առավել գեղեցիկ տեմբրին: Փայտը, իհարկե, նախ չորացվում է և, կարևոր է, որ այն ստատիկ վիճակում, առանց քամու, դանդաղ չորանա: Ես կտրում եմ փայտը, հետո երկու ծայրերը փակում եմ, որովհետև փայտը շնչում է ծայրերից, հետո պահում եմ 18 աստիճան ջերմության տակ, ստատիկ վիճակում, ամենաքիչը 2 տարի: Եթե փայտը արագ չորացնես, ապա այն կճաքի կամ կդեֆորմացվի:*
*Գործիքի փայտի պատերի հաստությունը ավելի կարևոր դեր ունի սուր հնչողություն ունեցող գործիքների համար: Օրինակ՝ զուռնայի փայտը որքան ավելի բարակ տաշված լինի, այնքան ավելի զրնգուն կհնչի գործիքը:*



**Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն է եղել առաջին դուդուկը***:*
*Անպայման՝ նախ եղել է պատրաստված միայն եղեգի մեկ ամբողջական հատվածից, այսինքն՝ այն եղել է երկար ղամիշ, որի վրա անցքեր են արված եղել, ինչպես հիմա դուդուկի կամ շվիի վրա: Ես ունեմ պատրաստած այդպիսի գործիք:*

***Ո՞ւմ նվագն եք չափանիշ վերցնում ձեր գործիքները ստուգելու համար:***
*Ուրախությամբ ուզում եմ նշել նոր սերնդի երիտասարդ կատարողներին: Շատ բարձր եմ գնահատում նրանց նվագը:*

զրույց
վարպետ Աբելի
հետ (1960)





*****

**Ինչպե՞ս ստացվեց, որ սկսեցիք դուդուկ պատրաստել**
*Փոքր հասակից ինձ շատ հետաքրքրում էին երաժշտական գործիքները և, հատկապես, ինձ հետաքրքիր էր, թե ինչպես է ստացվում դուդուկի գեղեցիկ, թավ ձայնը: Բախտի բերմամբ, հանդիպեցի վարպետ Հակոբին: Նա գործիքներ ու ղամիշներ էր պատրաստում Վաչե Հովսեփյանի, Ջիվան Գասպարյանի, Վոլոդյա Հարությունյանի համար: Վարպետ Հակոբը նախ երաժիշտ էր. նա նվագել էր Ա. Մերանգուլյանի անվան ժող.գործիքների անսամբլում, իսկ հետո սկսել էր դուդուկ ու ղամիշ պատրաստել: Օգնում էի իրեն և, միաժամանակ, սովորում: Հետո, քանի որ ես այն ժամանակ կլարնետ էի նվագում, սկսեցի ուսումնասիրել կլարնետի կառուցվածքը, օրինաչափությունները: Այդպես սկսեցի կլարնետ վերանորոգել: Հետո հրավեր ստացա Չեխոսլովակիայից՝ «Ամատի» Ֆիրմայից, և վեց տարի աշխատեցի այնտեղ: Կինս էլ էր աշխատում ինձ հետ: Իհարկե, շատ կարևոր էր այդ տարիներին ձեռք բերած փորձը: Հետո վերադարձա Հայաստան և սկսեցի իմ ուսումնասիրությունները և գիտելիքները օգտագործել դուդուկ պատրաստելով: Սա իմ տարիների երազանքն էր, և հիմա արդեն լիովին պատրաստ էի այն իրականացնելու:*

**Ի՞նչն է ամենակարևորը լավ դուդուկ պատրաստելու համար:**
*Ամենակարևորը լավ փայտանյութն է՝ փայտի որակը: Ես իմ լավագույն գործիքները պատրաստում եմ վայրի ծիրանի կարծր բնից, միջուկից: Նախապես միշտ ստուգում եմ, որ ոչ մի ծալքեր, էրոզիաներ փայտը չունենա, այլ լինի բացարձակ ուղիղ, որակյալ: Ես փայտը միայն կացինով եմ կտրում: Եթե սղոց օգտագործեմ, ապա փայտի ծալքերը կարող եմ չնկատել, իսկ նրանք հետագայում անպայման ի հայտ կգան՝ վատ ազդեցություն կունենան գործիքի ձայնի որակի և, հատկապես, լարվածքի վրա: Կան վարպետներ, որոնք մշակում են փայտը էլեկտրական սղոցով, ռանդայով, սակայն լավ գործիք այդպես չես պատրաստի:*
*Փայտը նախապես բաժանում եմ մասերի՝ տապակների, հետո մասերը կացնով կլորացնում եմ մի փոքր, ապա թողնում եմ չորանան: Այս փուլը տևում է տարիներ՝ տասը, կամ ավելի: Եթե փայտը վերջնականորեն չչորանա, ապա հետագայում շարունակվող չորացման պրոցեսը անպայման ի հայտ կբերի գործիքի լարվածքի խախտում:*
*Երբ փայտը մշակված է, այսինքն՝ արդեն անցել է բոլոր վերը նշված փուլերով, սկսվում են գործիք պատրաստելու իրար հաջորդող փուլերը. փայտը կլորացվում է հաստոցի օգնությամբ, հետո արվում է ներսի անցքը, ապա նորից կլորացվում է արտաքին մասը, հասցնելով համապատասխան տրամագծի, հետո լայնացվում է ղամիշի բնիկը և արվում են մատների համար նախատեսվող անցքերը: Այս գործողություններից հետո դուդուկը պատվում է կրով, որպեսզի ստացվի նրան բնորոշ ավանդական, յուրահատուկ գույնը: Ոչ մի ուրիշ գործիք նման ճանապարհով չի ստանում իր գույնը: Հետո կիրը վրայից հանվում է, փայտը փայլեցվում է և, ապա, փայտի արտաքին կողմին որակյալ ձեթ, կամ ճզմած ընկույզ է քսվում: Այսպես ստացվում է գործիքի արտաքին, կոսմետիկ տեսքը: Այնուհետև սկսվում է գործիքը լարելու փուլը. անցքերը հերթով լարվում են՝ տաշվելով ներսի կողմից, մինչև որ ստացվեն համապատասխան բարձրության հստակ հնչյուններ, մաքուր հնչյունաշար:*



**Կա՞ն արդեն ընդունված չափեր, թե ամեն վարպետ իր մոտեցումը ունի, և, արդյոք, բոլո՞ր վարպետներն են նույն հերթականությամբ կատարում գործիքի պատրաստման բոլոր փուլերը:**
*Հիմնականում այսօր բոլոր դուդուկ պատրաստողներս օգտագործում ենք միևնույն չափեր, օրինակ, անցքերի միջև ընկած տարածությունները գրեթե միևնույն չափի են, անցքերը արվում են 9.5 կամ 10 միլիմետր տրամագծով: Այս լարվածքի սկզբունքը մենք ժառանգեցինք վարպետ Կառլենից: Նա, կարելի է ասել, դպրոցի հիմքեր ստեղծեց այսօրվա դուդուկ պատրաստողներիս համար: Մենք իրապես նրա հետևորդներն ենք: Վարպետ Կառլենը հիմա ապրում է Միացյալ Նահանգներում:*
*Առաջներում, որպեսզի ստանային միևնույն լարվածքի գործիքներ, վարպետները միաժամանակ պատրաստում էին երկու միանման գործիքներ: Սա անհրաժեշտ էր, որպեսզի դամը և մեղեդին միևնույն լարվածք ունենային, այլապես հնարավոր չէր լինի նվագել միասին:*





**Իսկ ի՞նչ կասեք Վարդան Բունու մասին, ինչպիսի՞ն էր նրա դուդուկը:**
*Վարդան Բունին, իհարկե, մեծ վարպետ է եղել, և շատ մեծ ավանդ ունի դուդուկի ստեղծման գործում: Նա է հիմնել in A տեսակի դուդուկը՝ այսպես կոչված՝ «ԲունիՖոնը»: Սակայն ես լսել եմ, որ դեռ նրա ժամանակներում Լևոն Մադոյանը չի ունեցել կայուն լարվածք ունեցող գործիք: Վաչե Հովսեփյանը, ի նկատի ունենալով վարպետ Կառլենի դուդուկը, ասում էր. վերջապես մենք ունեցանք կատարյալ գործիք: Շատերը հիշում են նաև վարպետ Կառլենից առաջ վարպետ Ցոլակի դուդուկները: Նա ոչ միայն դուդուկ էր պատրաստում, այլ նաև զուռնա, բլուլ:*
*Շատ կարևոր է, որ պատրաստող վարպետը նաև երաժիշտ լինի, որպեսզի ճիշտ զգա և հասկանա պահանջները:*



**Ո՞վ է եղել առաջին դուդուկ պատրաստողը: Կա՞ արդյոք նման տեղեկություն: Եվ ո՞րն է ավելի հին՝ ղամի՞շը, թե՞ դուդուկը:**
*Ես չգիտեմ, թե ով է ստեղծել առաջին դուդուկը, բայց մի բանում համոզված եմ, որ նա անպայման նախ երաժիշտ է եղել: Հավանաբար, առաջներում ամեն մի երաժիշտ ինքն էր իր գործիքը պատրաստում:*
*Իհարկե, ղամիշը ավելի հին պետք է լինի, քանի որ նա է ձայնարտադրիչը, իսկ հետագայում, հավանաբար, նրան ավելացվել է փայտե մասը:*

**Քանի՞ դուդուկ եք պատրաստում մեկ տարում:**

*Հարյուրից մինչ հարյուր հիսուն գործիք պատրաստում եմ մեկ տարում, բայց, իհարկե, ոչ բոլորն են նույն որակի:*

**Ինչո՞ւմ է դուդուկի տեմբրի գաղտնիքը:**
*Դուդուկի ձայնի թավշյա տեմբրի որակը գալիս է նախ լավ կատարողից, նրա վարպետությունից, հետո ղամիշի որակից: Ղամիշ պատրաստելը դա մի ուրիշ հետաքրքիր արհեստ է, որը հմտություն, մեծ վարպետություն և շատ բծախնդիր մոտեցում է պահանջում պատրաստողից: Նորից այստեղ էլ կարևորագույն դեր է խաղում նյութի՝ տվյալ դեպքում եղեգի որակը: Եղեգը պետք է լինի համապատասխան լայնության, պետք է կտրվի համապատասխան երկարությամբ և պետք է լինի համապատասխան ձգության՝ ոչ շատ ձիգ և ոչ շատ թույլ: Նաև պատերը պետք է լինեն որոշակի հաստության: Ժամանակի ընթացքում յուրաքանչյուր վարպետ փորձ ու հմտություն է ձեռք բերում եղեգի ընտրության գործում: Իրականում հարյուր պատրաստած ղամիշներից, լավագույն դեպքում, մեկ-երկուսն են ստացվում լիարժեք բարձր որակի: Նման բարձրորակ ղամիշը կարող է ծառայել տասից ավելի տարի: Ղամիշ կա, որ մի քանի ամիս կարող է ծառայել, իսկ կա, որ մի քանի օրից արդեն պիտանի չի լինի, այսինքն՝ կկորցնի իր հնչողության առանձնահատկությունները, ձայնի որակը:*
*Մի հետաքրքիր դեպք եմ հիշում. վերը հիշված իմ առաջին ուսուցիչ՝ վարպետ Հակոբի պատրաստած ղամիշներից մեկով Վաչե Հովսեփյանը նվագել էր տասնութ տարի, և այն տարուց տարի ավելի ու ավելի լավ էր հնչում: Պատմում են, որ մեծ դուդուկահարը արտասվել էր, երբ այդ ղամիշը կոտրվել էր, և երկար ժամանակ չէր գտնում համապատասխան ղամիշ:*
*Դամ պահող դուդուկահարի ղամիշը տարբերվում է մենակատարի ղամիշից: Այն ավելի թույլ, փափուկ է պատրաստվում, որպեսզի ավելի հեշտ լինի դուդուկահարին քթով օդ վերցնելու պահին շարունակել նվագել դամը՝ առանց ընդհատումի:*

**Ինչպե՞ս եք վերաբերվում դուդուկ գործիքի նորարարություններին:**
*Մի կողմից ուզում եմ, որ դուդուկը զարգանա և ավելի կատարելագործվի, սակայն, մյուս կողմից, միշտ զգում եմ, որ գործիքի նորարարությունները շատ բացասական են ազդում դուդուկի ձայնի, տեմբրի որակի վրա: Դուդուկը կարծես կորցնում է իր ազգային նկարագիրը, կոլորիտը, համը: Ես արել եմ որոշ նորարարական փորձեր, հիմնականում՝ ինքս ինձ համար, իմ ուսումնասիրությունների համար, կամ, եթե նման պատվեր եմ ստացել:*
*Դուդուկը հնչում է իբրև դուդուկ, եթե այն ունի համապատասխան ձայնածավալ: Իմ փորձից ելնելով համոզվել եմ, որ երբ դուրս ես գալիս այդ ձայնաշարի սահմանափակումից, ապա գործիքը արդեն կորցնում է իր գրեթե բոլոր կարևորագույն հատկությունները: Նման գործիքը դուդուկ անվանելն, իմ կարծիքով, ճիշտ չէ: Սա մի այլ նվագարան է դառնում:*

**Քանի՞ լարվածքի դուդուկներ եք պատրաստում, և ո՞ր տեսակն եք համարում ամենակատարյալը, «ամենադուդուկը»:**
*Ես պատրաստել եմ տասներեք լարվածքի դուդուկ՝ բասից մինչև սոպրանո, պիկոլո դուդուկներ, բայց միայն մի քանի տեսակն եմ համարում իսկական դուդուկ: Դրանք են՝ Լա, Սի-բեմոլ, Սի, Դո, Ռե և, գուցե, նաև՝ Սոլ լարվածքի գործիքները: Այսինքն՝ վեց տեսակի դուդուկներ: «Ամենադուդուկը» Լա դուդուկն է՝ «բունիՖոնը»: Այն իր հնչողության երանգներով ամենահարուստն է:*



**Աշակերտներ ունե՞ք:**
*Այո, մի քանի աշակերտ ունեմ: Նաև տղաս է ինձ օգնում և սովորում:*
*Աշակերտներիցս ոմանք ավելի տարված են ղամիշ պատրաստելով: Մեծ հույսեր եմ կապում աշակերտներիս հետ, և գոհունակությամբ պետք է նշեմ, որ արդեն վստահություն ունեմ, որ նրանցից գոնե մեկը անպայման կշարունակի գործը և լավ վարպետ կդառնա:*

**Իսկ ո՞ր գործիքն եք ավելի մոտ համարում դուդուկին:**
*Փայտյա-փողային գործիք պատրաստելու սկզբունքները նույնն են, սակայն դուդուկը ես եզակի գործիք եմ համարում: Կան նմանություններ, ասենք, հոբոյի կամ կլարնետի հետ, բայց ինքնատիպ հատկությունները շատ գերիշխող են:*
*Ինչ վերաբերում է նմանությանը պարսկական բալաբան-ի, թուրքական մեյ-ի, վրացական դուդուկի-ի հետ, ապա, պետք է ասեմ, որ այս նշված գործիքները բոլորն էլ դուդուկներ են, սակայն ունեն նկատելի տարբերություններ մեր դուդուկի համեմատությամբ՝ հիմնականում ղամիշի երկարության, անցքի լայնության տարբերություններն են, իսկ սրանք սերտ կապի մեջ են կատարողական սկզբունքների տարբերությունների հետ: Օրինակ՝ վրացական դուդուկի-ի հնչողության մեջ «Զ» հնչյունն է գերիշխում: Լրիվ այլ տեմբր է մեր դուդուկի համեմատությամբ: Իսկ այսպիսի հնչողությունը պահանջում է պատրաստող վարպետից ավելի հարմար դարձնել գործիքը, ղամիշը՝ հենց այս տեմբրը ստանալու համար:*

**Ո՞ւմ նվագն եք չափանիշ վերցնում ձեր գործիքները ստուգելու համար:**
*Այսօր Գևորգ Դաբաղյանի, Ջիվան Գասպարյանի նվագն եմ ինձ համար դուդուկի ձայնի չափանիշ վերցնում: Իհարկե, միշտ հիշում եմ Վաչե Հովսեփյանի, Լևոն Մադոյանի դուդուկի ձայնը: Նաև ուրախությամբ ուզում եմ նշել ավելի երիտասարդ սերնդի դուդուկահարներին՝ Էմմանուել Հովհաննիսյանին, Վարազդատ Հովհաննիսյանին և շատ ուրիշներին:*



**զրույց վարպետ Կարեն Մուքայելյանի հետ** (1972)

*****

=

**Ինչպե՞ս եղավ, որ դուդուկ պատրաստեցիք:**
*Պապիկս լավ նվագում ու երգում էր: Ես վաղ հասակից միշտ լսել եմ գուսանական, ժողովրդական երգեր և շատ սիրել դրանք: Երբ իմացա Նոր Նորքի «Հայորդաց տան»- ը գործող ժող. գործիքների խմբակի մասին, որոշեցի ընդունվել այդ խմբակը: Քանի որ ուսուցիչս՝ վարպետ Արմանդ Ղազարյանը, միևնույն ժամանակ երաժշտական գործիքներ էր պատրաստում, ինձ մոտ էլ մեծ հետաքրքրություն առաջացավ գործիքաշինության նկատմամբ և, այդպիսով, սկսեցի սովորել այդ արվեստը: Պետք է ասեմ, որ վարպետ Արմանդը հոյակապ թառահար էր՝ շատ բարձրաճաշակ երաժիշտ: Ճիշտ է, ավելի շատ զբաղվում էր գործիքաշինությամբ, բայց, եթե այդքան նրբաճաշակ երաժիշտ չլիներ, նման գերազանց գործիքներ չէր կարողանա պատրաստել: Նա պատրաստում էր քանոն՝ իր տեսականիով, ջութ, որ նաև ասում են քյամանի, ջութի տեսակներ, քամանչա և շվի:*

**Իսկ նա դուդուկ պատրաստո՞ւմ էր:**
*Ոչ, նա դուդուկ չէր պատրաստում, այլ շվի էր պատրաստում:*

*Ես շատ սիրեցի շվին և սկսեցի նվագել սովորել, որին համատեղ՝ նաև պատրաստել: Վարպետ Արմանդից գործիքաշինության շատ կարևոր նրբություններ սովորեցի, թե ինչպես են փայտն ընտրում, այն մշակում և գործիք պատրաստում: Իրենից բացի ուրիշ ուսուցիչ չեմ ունեցել: Հետագայում, բացի շվիից, սկսել եմ դուդուկ պատրաստել: Տարիների ընթացքում ձեռք բերած փորձը, օրըստօրե, բարձրացրել է գործիքների որակը: Ես ունեմ վարպետ Կառլենի գործիքը, որն ինձ համար չափանիշ է, և համեմատում եմ իմ գործիքները նրա գործիքի հետ:*

**Ի՞նչ գործիքներ եք պատրաստում:**
*Ես այսօր պատրաստում եմ ութ լարվածքի դուդուկ, յոթ լարվածքի շվի և երեք լարվածքի բլուլ:*
*Իր լարվածքով դուդուկը մաժոր է՝ հիմքում մաժոր գամմա է՝ տոն, տոն, կիսատոն, տոն, տոն, տոն, կիսատոն: Օրինակ, եթե «Լա» դուդուկ է, ապա անցքերը բաց վիճակում հնչում է «Լա» նոտան, իսկ բնական ձայնաշարը «Լա» մաժորն է: Դուդուկի տեսակը որոշվում է ըստ անցքերը բաց վիճակում հնչող ձայնի բարձրության:*
*Շվիի ձայնաշարը նույնպես որոշում են  ըստ անցքերը բաց վիճակում հնչող ձայնի բարձրության: Շվիի կառուցվածքը լինում է մաժոր և, ըստ երաժշտի ցանկության, կարելի է պատրաստել նաև մինոր լարվածքի:*
*Բլուլի լարվածքը ևս մաժոր գամմա է: Այս դեպքում բլուլի լարվածքը որոշում են ըստ մատերը փակ վիճակում հնչող նոտայի բարձրության: Բլուլը լինում է դիատոնիկ և խրոմատիկ լարվածքի:*



Վարդես Աշոտ

**Ո՞ր կարևոր խորհուրդներով և ինչպիսի՞ օրինաչափություններով եք առաջնորդվում գործիք պատրաստելիս:**
*- Ես գործիքը պատրաստում եմ սկզբից մինչև վերջ, այսինքն՝ ինքս եմ ընտրում ծառը, փայտը: Այնպիսի ծիրանենի եմ ընտրում, որն արդեն բերք չի տալիս, և փորձում եմ գործիք պատրաստելով՝ նրա կյանքը երկարացնել: Ես ընտրում եմ մոտ վաթսուն-յոթանասուն տարեկան ծիրանենի: Նախընտրելի է հյուսիսում աճող, քիչ ջրվող ծառ, քանի որ նրա տարեկանները շատ խիտ են լինում, իսկ դա շատ կարևոր է, որպեսզի գործիքը գունեղ հնչողություն ունենա: Նաև մի ուրիշ հետաքրքիր օրինաչափություն կա. ծառի բունը չորս հիմնական շերտեր ունի՝ կեղև, սպիտակ մաս, կարմիր մաս և կենտրոնում՝ միջուկ: Դուդուկ պատրաստելու համար օգտագործվում է միայն կարմիր մասը: Սպիտակ մասը հայտնվում է ավելի հաստ շերտով ծառի արևկող մասում: Արևի շատության շնորհիվ, այս շերտը չափազանց լայն է լինում և, հետևաբար, շատ քիչ տեղ է մնում՝ դուդուկի պատրաստման համար պիտանի հատվածին: Իսկ, եթե ծառը հյուսիսային վայրում է աճում, ապա սպիտակ շերտը քիչ է արտահայտված լինում և, հակառակը, կարմիր մասը գերիշխում է:*
*Դուդուկ պատրաստելիս շատ կարևոր է պահպանել բոլոր չափերը՝ արտաքին, ներքին չափերը, երկարությունը և մատերի անցքերի չափերը: Մատերի անցքերը տասը միլիմետր անելու դեպքում ձայնն անկայուն կլինի,  ինը միլիմետր անելու դեպքում՝ ձայնը կխեղդվի, կխլանա: Ես «Լա» դուդուկի մատերի անցքերը անում եմ 9,5 միլիմետր, իսկ ավելի բարձր լարվածքի՝ օրինակ «Ռե» դուդուկի համար՝ 9,3 միլիմետր տրամագծով: Տարբերությունը շատ չնչին է թվում, սակայն գործիքի ձայնի համար այն իրապես շատ մեծ նշանակություն ունի:*
*Անցքերի միջև ընկած տարածությունը տարբեր լարվածք ունեցող դուդուկների համար տարբեր է: Դուդուկի անցքերի հեռավորությունը պետք է հնարավորին չափ հավասար լինի, անկախ նրանից՝ տոն է, թե կիսատոն: Նման լարվածք ստանալու համար անցքերը տաշվում են գործիքի ներսի կողմից: Եթե այդպես չարվի, այլ կիսատոների անցքերը ավելի մոտ լինեն, ապա նման դուդուկի վրա նվագելը շատ անհարմար կլինի:*
*Նաև շատ կարևոր է դուդուկի ներսի անցքի տրամագծի չափը, պատերի հաստությունը, ղամիշի բնիկի մասի թեքությունը: Այս վերջինը դուդուկի լավ հնչողություն ստանալու հիմնական գաղտնիքներից մեկն է:*





**Փորձե՞լ եք որևէ այլ փայտից դուդուկ պատրաստել:**
*Ժամանակին նման փորձեր արել են վարպետները: Ես էլ, նրանց պես, փորձել եմ գործիք պատրաստել էբենոսի, ընկուզենու փայտից, սակայն ոչ մի ուրիշ փայտ ձայնի այնպիսի արտահայտիչ քաղցրություն չի տալիս, ինչպես ծիրանենին: Հետո, փայտն ինքը լինում է հնչեղ և ոչ հնչեղ: Նախքան գործիք պատրաստելը, փայտի որակից վարպետն զգում է, թե ինչ գործիք կստացվի: Պետք է ասեմ նաև, որ ծիրանի փայտը ևս մի հատկություն ունի՝ եթե նույնիսկ այն կրով չպատվի, ժամանակի ընթացքում, միևնույն է, փայտը մգանում է՝ ստանալով դուդուկին բնորոշ գույնը:*

**Նորարարություններ անո՞ւմ եք:**
*Ոչ: Դրա իմաստը չեմ տեսնում և ավելորդ ժամանակ էլ չունեմ: Ես արդեն դուդուկ եմ պատրաստում և, վարպետությունս հղկելով, կատարելագործում եմ գործիքները: Սա է կարևորը: Նոր դուդուկ ստեղծելու իմաստը չեմ տեսնում: Փականները կամ այլ միջոցները դուդուկի համար չեն: Դուդուկը դյութիչ է հնչում, եթե այն ունի իրեն սահմանված, տրված ձայնածավալը: Ես պատրաստում եմ «Սոլ», «Լա», «Սի բեմոլ», «Սի», «Դո», «Ռե», «Մի բեմոլ» և «թավ Լա» օկտավ ներքև տեսակը, նախատեսված դամի համար:*

**Բայց այս վերջինը իր հնչողությամբ արդեն դուդուկ չէ:**
*Այո, բայց, ըստ ինձ, այն մերվում է դուդուկի ձայնի հետ և հարմար է դամի համար:*

**Ինչպիսի՞ն է եղել առաջին դուդուկը:**
*Վստահորեն կարող եմ ասել, որ առաջին դուդուկը պատրաստվել է միայն ղամիշից: Ես պատրաստել եմ նման գործիք, ղամիշի երկար հանգույցից, մի կողմը տափակեցված, երկլեզվանի, ինչպես դուդուկի ղամիշը: Սակայն այս գործիքի ձայնի որակը, տեմբրը շատ տարբեր է մեր այսօրվա դուդուկից, քանի որ ղամիշի պատերը բարակ են ու թեթև, և, հետևաբար, նման գործիքը չի կարող տալ դուդուկի թավ հնչողությունը, խորությունը: Նա հնչում է մոտավորապես, ինչպես դուդուկը: Ղամիշը հարմար է շվի պատրաստելու համար, բայց ոչ ամբողջ մարմնով դուդուկ:*

**Իսկ ղամիշ պատրաստո՞ւմ եք:**
*Ոչ, երբեք չեմ փորձել ղամիշ պատրաստել: Ղամիշ պատրաստելը մի այլ ճյուղ է գործիքաշինության մեջ: Ես պատրաստում եմ դուդուկ, շվի, բլուլ: Մի վարպետի մոտ ղամիշ պատրաստելն է լավ ստացվում, մյուսի մոտ շվին է լավ ստացվում, իսկ մյուսի մոտ՝ դուդուկը: Ամեն մի վարպետի մոտ ինչ-որ մի բան հատկապես լավ է ստացվում, ինչ-որ բան այդքան էլ չի հաջողվում: Ես, իհարկե, համագործակցում եմ ղամիշ պատրաստող վարպետների հետ, հատկապես վարպետ Արմանի հետ: Ղամիշն ու դուդուկը պետք է միասին ամբողջականություն կազմեն, պետք է ձուլվեն, իրար հետ մերվեն: Սա շատ կարևոր է: Իսկ երբ այս պայմանները արդեն ապահովված են, մնում է, որ դուդուկը հայտնվի վարպետ-կատարողի ձեռքում:*

**Համագործակցո՞ւմ եք դուդուկահարների հետ:**
*Իհարկե, համագործակցում եմ շատ դուդուկահարների հետ, բայց կուզեմ նշել Գևորգ Դաբաղյանին, Արայիկ Բախտիկյանին, Վարազդատ Հովհաննիսյանին, Վահան Հարությունյանին և Էմմանուել Հովհաննիսյանին:*



*դուդուկը պետք է խոսի մարդու սրտի հետ,*
*հոգու հետ... Էս մեկը լավ հիշիր...*
*ՄԱՐԳԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ*

*նվագելու ժամանակ դուդուկը պիտի*
*«փախենա» կատարողից: Մարգարյանի*
*դուդուկը պարզապես «դողում էր» նրանից:*
*ՎԱՉԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ*





# վարպետության խորհուրդներ



## Գործիքի խնամք

Առանձնահատուկ տեղ է գրավում ղամիշի խնամքը: Այն պետք է պահել փականը փակ վիճակում, իսկ զսպանակը բարձրացնել վեր: Նվագելուց առաջ ղամիշի մեջ մի քանի րոպեով պետք է ջուր լցնել հետևի կողմից, փականը փակ վիճակում: Հետո ջուրը թափել, և ղամիշը թողնել մոտ տասը րոպե, որպեսզի այն բացվի:
Փայտյա մասը պետք է պահել չոր տեղում: Խոնավությունից փայտը կարող է ճաքել:

## Կեցվածք

Դուդուկ նվագելիս պետք է պահպանել իրանի բնական, անկաշկանդ վիճակ, այսինքն` դուդուկը պետք է գտնվի իրանի նկատմամբ 40-50 աստիճան անկյան տակ: Արմունկները պետք է թեթևակի բարձր պահել, գլուխը և մեջքը ուղիղ: Կարելի է պարապել ինչպես կանգնած, այնպես էլ նստած վիճակում, սակայն պետք է հետևողականորեն պահպանել հետևյալ պայմանները` կանգնած վիճակում նվագելիս աջ ոտքը պետք է լինի մի փոքր առաջ, իսկ նստած վիճակում չի կարելի ոտքը ոտքի վրա դնել: Բոլոր վերը նշված պայմանները անհրաժեշտ են ճիշտ շնչառություն ապահովելու համար:



## Շնչառություն

Ճիշտ շնչառությունը յուրաքանչյուր փողային նվագարան կատարողի համար հիմնական հարցերից մեկն է: Շատ կարևոր է հենց սկզբից ճիշտ հիմքեր ձևավորել և զարգացնել աշակերտի մոտ այս խնդրի վերաբերյալ: Դուդուկահարների համար առավել հարմար է խառը կամ կրծքաորովայնային շնչառությունը: Այս շնչառական ձևը թույլ է տալիս վերցնել օդի առավել մեծ պաշար, ինչը հնարավորություն է տալիս հասնելու նվագի ազատության և լավագույն հնչողության:



Խորը ներշնչման ժամանակ լայնանում է կրծքավանդակը, իսկ ստոծանին իջնում է ցած: Հանգիստ արտաշնչման ժամանակ կրծքավանդակի կողերը և ստոծանին սահուն կերպով վերադառնում են սկզբնական վիճակին: Պետք է հետևել, որպեսզի ներշնչման խորությունը համապատասխանի երաժշտական դարձվածքի երկարությանը: Այսինքն` պետք է ձգտել հնարավորինս քիչ չափով ուժ ծախսել, որպեսզի հնարավոր մաքսիմալ չափով ուշադրությունը բևեռվի երաժշտական նյութի վերարտադրման կատարելությանը և հնչողության ազդեցիկությանը:
Հաճախակի շունչ վերցնելը կատարողական





մեծ խոտան է, քանի որ այն հանգեցնում է շնչառական մկանների գերհոգնածության, և վատ է անդրադառնում ինչպես նվագի կատարելության, ազատության, այնպես էլ առողջության վրա:
***Գեորգի Մինասյան «դուդուկի ձեռնարկ» /1988/***



**Ձեռքերի, մատների դրվածք**

Մատներն ունեն երեք բարձիկ: Դուդուկի վրա նվագելիս՝ օգտագործվում են մատների երկու բարձիկները:
Դուդուկն ունի երկու պոզիցիա: Առաջինի դեպքում օգտագործվում են առաջի ձեռքի երեք մատները: Այս դեպքում նվագում են առաջին ձեռքի մատների առաջին բարձիկները և երկրորդ ձեռքի մատների երկրորդ բարձիկները: Երկրորդ պոզիցիայի դեպքում օգտագործվում են առաջին ձեռքի չորս մատների երկրորդ բարձիկները և երկրորդ ձեռքի չորս մատների երկրորդ բարձիկները:
Սովորաբար, դուդուկահարները առաջին ձեռքը (վերևում) ձախն են դնում, սակայն, շատերը, առաջին ձեռքը աջն են դնում:

**Շրթունքի դրվածք**

Ղամիշի միայն վերին հատվածն է դրվում շրթունքի եզրի վրա, որպեսզի հնարավոր լինի ստանալ դուդուկին բնորոշ գեղեցիկ ձայնը: Շատ կարևոր է այտերի ուռեցրած վիճակը: Առանց այտերը ուռեցնելու, դուդուկի ձայնը գեղեցիկ չի ստացվի: Նման դրվածքի շնորհիվ դուդուկահարի հնարավորությունները շատ ճկուն են դառնում:

**Վիբրատո**

Վիբրատոն ստացվում է շրթունքների և այտերի համատեղ աշխատանքի շնորհիվ: Վիբրատոն լինում է դանդաղ և արագ:







ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ (Մելիզմներ)





Նման զարդարանքները, խաղերը նվագելը դուդուկահարի համար բավական բարդ է և տևական աշխատանք է պահանջում, քանի որ միայն մատների օգնությամբ չեն ստացվի դուդուկին բնորոշ խաղերը: Այստեղ պետք է աշխատեն նաև կոկորդը և շրթունքները: Ուրեմն մատների, կոկորդի, շրթունքների համատեղ աշխատանքի շնորհիվ միայն կարելի է ստանալ գործիքին բընորոշ գեղեցիկ, խաղեր:
Որոշ զարդարանքներ /մորդենտներ, տրելներ/ կարելի է ստանալ առանց մատները շարժելու՝ միայն կոկորդի և շրթունքների օգնությամբ:

Ժողովրդական երգերը կատարելիս դուդուկահարը պետք է ձգտի հետևել մեղեդու հիմնական գծերին, տեքստի շեշտադրությանը, առոգանությանը, իմաստին: Միաժամանակ կատարողը պետք է ազատորեն օգտագործի խաղերը, զարդարանքները, հետևելով իր տեխնիկական հնարավորություններին և ներքին զգացմունքներին:
Այսինքն պետք է ձգտել միշտ յուրովի մեկնաբանել երգերը:
**Խաչիկ Խաչատրյանի գրառումներից**

**Ստակատոներ օդով (կոկորդով)**

Ստակատոները, կտրուկ հնչյունները ստացվում են կոկորդի օգնությամբ: Այս տեխնիկական հնարքը հատկապես շատ է օգտագործվում արագ, պարային եղանակներ նվագելու ժամանակ:







# ԴՈՒԴՈՒԿԻ ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱՅԻ ԱՂՅՈՒՍԱԿ

## ԱՌԱՋԻՆ ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱ






● - շրթունքը սեղմած ◐ - շրթունքը կիսասեղմ վիճակում ○ - շրթունքը թույլ վիճակում

○ - բաց ծակ ◐ - կիսափակ ծակ ● - փակ ծակ

(ԴՈՒԴՈՒԿԻ ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱՅԻ ԱՂՅՈՒՍԱԿ)

## ԵՐԿՐՈՐԴ ԱՊԼԻԿԱՏՈՒՐԱ












# Երաժշտական նմուշներ

## ՆՄՈՒՇՆԵՐԻ ՑԱՆԿ


Շախկր ա շուխկր
80
Անձրևն եկավ
80
Առնեմ էրթամ
81
Էս գիշեր
81
Էն դիզան
82
Դլե յաման
82
Ալագյազ և խնկի ծառ
83
Ես քեզ տեսա
83
Յարս ա յարս
84
Ախ, Նարե - Նարե
85
Գալիս եմ դուռդ
85
Գարուն ա
86
Ջուր կուգա վերին սարեն
86
Ծիրանի ծառ
87
Մաղիկ, մաղիկ
88
Երազ
88
Յար քելե նազով
89
Սարեր կաղաչեմ
90
Օտար ամայի ճամփեքի վրա
90
Հովերն ելան
91
Վարդանի մոր ողբը
92
Հաւուն, Հաւուն
93
Ով, զարմանալի
93
Չաչանե
94
Որսկան ախպեր
95
Քանի վուր ջան իմ
96
Աշխարհումս ախ չիմ քաշի
*մշակում հինգ դուդուկների համար*
98




# ՇԱԽԿՐ - ՇՈՒԽԿՐ

աշխույժ

Կոմիտաս




# ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ

առանց շտապելու

Կոմիտաս







# ԱՌՆԵՄ ԷՐԹԱՄ ԷՆ ՍԱՐԸ

աշխույժ

Կոմիտաս



# ԷՍ ԳԻՇԵՐ

հանդարտ

Կոմիտաս





## ԷՆ ԴԻՉԱՆ

առանց շտապելու

Կոմիտաս



## ԴԼԵ ՅԱՄԱՆ

զգացմունքով

ժողովրդական







## ԱԼԱԳՅԱԶ
## ԽՆԿԻ ԾԱՌ

Կոմիտաս




## ԵՍ ՔԵԶ ՏԵՍԱ

ոչ շատ արագ

Կոմիտաս







## ՅԱՐՍ, ՅԱՐՍ

Ժողովրդական





## ԱԽ, ՆԱՐԵ - ՆԱՐԵ

Ժողովրդական



## ԳԱԼԻՍ ԵՄ ԴՈՒՌԴ

Շերամ





## ԳԱՐՈՒՆ Ա

դանդաղ

Կոմիտաս



## ՋՈՒՐ ԿՈՒԳԱ ՎԵՐԻՆ ՍԱՐԵՆ

ոչ շատ արագ

Կոմիտաս





## ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Կոմիտաս





## ՄԱՂԻԿ, ՄԱՂԻԿ

պարային

ժողովրդական




## ԵՐԱԶ

առանց շտապելու

ժողովրդական








## ՅԱՐ, ՔԵԼԵ ՆԱԶՈՎ

ժողովրդական

հանդարտ






## ՍԱՐԵՐ ԿԱՂԱՉԵՄ

ազատ

Շերամ



## ՕՏԱՐ ԱՄԱՅԻ ՃԱՄՓԵՔԻ ՎՐԱ

քաղաքային երգ
ըստ Ա. Իսահակյանի







## ՀՈՎԵՐՆ ԸՆԿԱՆ

ազատ

Ժողովրդական





## ՎԱՐԴԱՆԻ ՄՈՐ ՈՂԲԸ

Միջնադարյան տաղ

հանդարտ








## Հաւուն Հաւուն

Գ. Նարեկացի
X-րդ. դ.

հանդարտ




## Ով Զարմանալի

Գ. Պահլաւունի
մշ. Կոմիտաս վրդ.

առանց շտապելու








## ՋԱՋԱՆԵ

ժողովրդական պար







## ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵՐ

քաղաքային երգ
ըստ Ա. Իսահակյանի





# ՔԱՆԻ ՎՈՒՐ ՋԱՆ ԻՄ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ
XIII Դ.






# ԱՇԽԱՐՀՈՒՄՍ ԱԽ ՉԻՄ ՔԱՇԻ

մշակում հինգ դուդուկների համար

դուդուկ 1,2,3,4, Սի /in H/
դուդուկ 5 Սոլ /inG/

Սայաթ -Նովա

























# summary

*Ինձ թվում է, որ դուդուկի հնչյուններում Հայ ժողովրդի պատմությունն ու երկրի բնությունն են արտացոլված: Կարծես թե, նախնիների կտակն ու խոսքն է փոխանցվում մեզ այս երաժշտության շնորհիվ:*

*Յո-Յո Մա*



**IN** 2005 the Armenian Duduk music was proclaimed a Masterpiece of the Oral and Intangible Heritage of Humanity by
**IN** 2005 the Armenian Duduk music was proclaimed a Masterpiece of the Oral and Intangible Heritage of Humanity by UNESCO.

Current Manual was prepared by the "Society on Safeguarding of the Armenian Folk Music" and it's steering committee under the patronage of Ministry of Culture of Armenian. It was produced with the support of UNESCO and the Japanese Funds-in-Trust for the Preservation and Promotion of Intangible Cultural Heritage in the frame of the project "Armenian Duduk Music". The aim of this book is to secure a basis for future duduk players, duduk makers.

Manual has the following main chapters:
**Duduk today**
**Historical overview**
**Duduk players**
**Description of the instrument**
**Interviews with duduk makers** (varpet Ruben, varpet Abel, varpet Karen)
**Master advises**
**Brief summary in English**
**Duduk music sheets**

**Duduk today** is a brief essay by composer Vache Sharafyan focused on the recent esthetical approaches to the duduk music and its future developments.
**Historical overview** is based on musicologist Hripsime Pikichyan's investigations concerning the duduk players and makers starting from 19th century. This part contains description of the 19th century duduk structure, as well as description of duduk music and the musical groups of the time.
The duduk players at that period were divided into two main groups: those who used to play at weddings and those who played at funerals. It was forbidden for any of them to play in a contrary occasion. Wedding musicians as a rule were supposed to play *zurna* as well.
The text includes the names of the 19th century duduk makers and duduk players and the description of the musical bands from all over Armenia.
**Duduk Players** contains biographical information about duduk players of different generations starting from the second half of the 19th century. This chapter includes biographical information about the most famous Armenian duduk players, such as Margar Margaryan, Karo Charchoghlyan, Vache Hovsepian, Levon Madoyan, Jivan Gasparyan, Gevorg Dabaghyan and others, as well as about the younger generation of musicians.
**Description of the instrument** is a rigorous account of the nowadays duduk instrument, based on master Karlen's instructions, who is the founder of the current duduk makers' school.
**Interviews with duduk makers** includes conversations with three masters from three different generations: Master Ruben Rushanyan, Master Abel and Master Karen. It contains more detailed overview of the specificity of the duduk preparation processes. This chapter indicates the differences and similarities of different generations' views upon the instrument, its improvement and future. (Prepared by V. Sharafyan)
**Master advises** contains 9 lessons delivered by the world wide famous dudukist Gevorg Dabaghyan focused on the principles of the duduk playing techniques improvement as well as the advises of the duduk old maestros. Based as well on the information from Kh. Khachatryans' notepad and G. Minassyans' "duduk book" (1988).
**Duduk music sheets** contains the 27 examples of the traditional duduk music to be used by beginners as well as advanced students, dudukists. (Prepared by V. Sharafyan based on various recordings as well as on the notepad of dudukist Khachatur Khachatryan)
**Summary in English** is a brief overview of the content of the Manual in general.

**The accompanying manual DVD has the following menu:**
Duduk lessons, (Teacher Gevorg Dabaghyan) in eight chapters.

Examples of the great dudukists' play (such as Vache Hovsepian, Levon Madoyan, Jivan Gasparyan, Vladimir Harutunyan, Mekertich Malkhasyan, Gevorg Dabaghyan).

Examples of the use of duduk in the modern classical music (extracts from compositions by Avet Terteryan, Vache Sharafyan)

**"SSAFM" thanks the directors of National TV of Armenia for providing the manual with precious materials from the TV archive.**





***

Duduk instrument and the duduk music as we know them today were formed throughout many centuries. Throughout history, duduk music has accumulated the wisdom and the feelings of the people who have created it, while the instrument has been improved to express all that.
The Duduk music, and the instrument itself, were traditionally inseparable from the social life and the cultural identity of Armenians. The duduk music accompanies community life events, such as celebrations, weddings, funerals, baptizing, etc.
Duduk is a double-reed woodwind with a cylindrical bore. It's a folk instrument made of apricot tree, which is very popular in many Eastern countries. This instrument has different prototypes, for example in Iran and Azerbaijan it is called *balaban* or *balaman*, in Georgia- *duduki* in Turkey-*mey*. There are similarities as well as differences between Armenian duduk and its analogs. Armenian name of the instrument is *duduk* or *tsiranapokh* –"apricot tree pipe" (it is important also to notice that apricot in Latin is "ARMENIACA" - "Armenian Fruit").
Not only the name, but also the sound of ***duduk*** differs greatly when played by musicians from different countries. The main differences stem from the technical specificities of playing, particularly from the lip control.
Armenian musicians use special technique to make duduk sound as a human voice. Sound of duduk is promptly reflecting the feelings of Armenians, the soul of the land, Armenian History. It seams like this instrument has come forth and has evolved together with Armenians. And it is very common saying that duduk is "The most Armenian of all instruments".
**Sound of duduk as well as the shape of the instrument has been formed throughout centuries inheriting the collective memory and the character of the people**.
Entirely in compliance with Armenian folk songs and dances duduk music reflects the dialects of all Armenian regions. It is as well in compliance with the *ashugh* (troubadour) music and Armenian classical poetry.
**Like cultural treasures that constitute identities of other nations such as Georgian polyphony, or Persian or Turkish, or Azerbaijani mugham, or Chinese ancient opera the Duduk has really an iconic value for Armenians.**
The roots of *duduk* date back to the times of the Armenian king Tigran the Great (95-55BC.). Some archaeologists attribute few examples even to the 1000 B.C. The ancestor of *duduk* is the *ancient flute (aulos)* made from the reed. It is depicted in various ancient Armenian manuscripts.





*In Armenian medieval miniatures the following flute-family instruments are encountered: the transverse shepherd's pipes **sring** and **blul**. They were made out of bone, cane, or wood.*
*Shepherds used them to give signals to their frocks as well as to play tunes.*
*During the archeological dig in Garni (Armenia) in 1962, a pipe made from a stork's shin and dating from 1000 B.C. was found; in 1993, the archeologist F. Ter Martirosov found double-barreled pipe during a dig at Benjamin-this too dated from 1000B.C.*

Great Armenian composer Aram Khachaturyan says, *" duduk is the only instrument that can make me cry"*.
Famous duduk player Jivan Gasparyan says, "*In its tiny holes (the duduk) bears the cry of Armenia's bitter past"*.
In the same time those are not the tears of sadness, but of encountering profound beauty.
The most common ensembles of duduk music are **duduk duo**: principal duduk and *dam* (drone) keeping duduk, and **duduk trio** that is used mostly for the dance music: principal duduk, dam keeping duduk and *dhol* (drum).
The role of *dam* is particularly important especially when a melody is played on duduk with the *dam* without *dhol* (drum). In such music the sound of *dam* (continuous drone) is creating a specific feeling of timelessness. This is some special kind of meditative music that makes listeners to come very close to the sense of eternity.
<u>*Duduk* as we knew it in our days</u> was formed in the first half of the 20th Century.
In 1920-30th duduk was improved by Vardan Bouni. Three more principal types of the instrument were created: in A (f#-b'), in Bb (g-c'), in D/piccolo/ (h-e flat'). Each duduk has a range of an octave and a fourth or third. The first (in A) was named Bounifon after the name of the constructor.
As it was mentioned above the body of the instrument is carved from the wood of an apricot tree, while the mouthpiece, called "ghamish" or "yegheg", is traditionally sliced from reed growing abundantly along the Arax River.
The length of the instrument varies from 28 to 40 cm. The most common "A-duduk" is 35.5 cm long, with an external diameter of 2.2 cm. The internal diameter is constant: 1.2 cm, only slightly expanding at the end in order to accommodate the reed. The proper profile of this section is essential for achieving desired sound quality. The reed known as the *ghamish* is 10.5 cm long, flattened at the proximal end.
Nowadays there are seven common types of duduk: G, A, B, H, C, D, Es and E. Each of these being the German name for the note that sounds when all the finger-holes are opened. A-duduk can be made to



play any pitch from F-sharp to the B-natural.

The sound of each type has certain differences: for example (in A) is more appropriate for love songs, while (in D) for dances.

Some duduk makers continue experimenting and creating other versions of duduk, however practically the real range of the duduk sound is limited and only the above mentioned seven types has the real beauty and specificity of duduk's sound.

It is not by chance that Armenian duduk sound became so popular throughout the world. The voice of Armenian spirit - *duduk* communicates with the souls of other people and touches their hearts as a memory ***of "common ancestors".***

Composer Peter Gabriele used the sound track of great Armenian dudukist Vache Hovsepian's play in music of the movie "The last temptation of Christ" (1988). Later many other composers, especially movie composers and producers have used the sound of Armenian duduk. The list of movies where duduk is used has grown especially during the last few years with such movies as "Gladiator", "Troy", "Yevgeny Onegin", "Ararat" and many others…

Duduk's sound was also used in the movies of one of the greatest movie makers of 20th century Sergey Paradjanov *The color of pomegranate*. This movie is about great poet, *ashugh* (troubadour), composer Sayat-Nova (1712-1795).

The first professional attempt of using **duduk in classical modern music** was made in 1975 by Armenian composer Avet Terteryan (1929-1995) in his 3rd Symphony together with zurna, and symphonic orchestra. This composition is very popular also in our days and is frequently performed by many orchestras (publisher Sikorsky). Later Avet Terteryan used another folk instrument kyamancha in his 5th Symphony. Duduk was also choused by the great cellist of our days Yo-Yo Ma and Silk Road Project to convey the sound of Armenia. Dudukist Gevorg Dabaghyan and composer Vache Sharafyan were elected by him to be official representatives from Armenia to present the sound and the spirit of Armenian duduk throughout the world. Since 2001 several compositions by Vache Sharafyan, such as "The Sun, the Wine and the Wind of Time" for duduk, violin, cello and piano, "The Morning Scent of the Acacia's Song" for duduk and string quartet, also the version for duduk, soprano and string orchestra (published by G. Schirmer), and "Ascending Kyamancha" for duduk (zurna), cello and piano were performed by dudukist Gevorg Dabaghyan, cellist Yo-Yo Ma and the Silk Road Ensemble in Cologne philharmonie, Brussels philharmonie, Amsterdam's Concertgebouw, in USA: Carnegie Hall, Berkeley University, Stanford University, Seattle Benaroya Hall, Washington National Mall, Chicago Symphony Orchestra Hall, in Italy: Rome,





Florence, Milan., and other venues in USA and Europe were received with great success.

***Music review, The Silk Road Ensemble at Chicago Orchestra Hall***

**Wednesday, December 18, 2002, by John von Rhein, Chicago Tribune**

... But the most wonderful piece on the program was The Sun, the Wine, and the Wind of Time (1998) by the Armenian composer Vache Sharafyan. The score derived much of its ineffable sad ness from the duduk, an oboe-like instrument whose quivery, throaty sounds were framed by piano (Joel Fan), violin (Colin Jacobsen) and cello (Ma). The seamless evolution of moods and textures from soft, somber lines made up of pained intervals, to more violent outbursts, back to mournful lines made it entirely absorbing to the ear and mind...

V. Sharafyan has also written "14 arrangements and transcriptions by Komitas" for duduk and string orchestra, as well as Viola Concerto "Surgite Gloriae" were duduk was used (to be premiered by Yuri Bashmet and "Moscow Soloists" in 2007).

In these compositions Sharafyan has introduced a new conception of synthesis of the traditional Armenian sound and western inheritance. The attempt of bringing together eastern and western instruments and cultures produces a musical model of our World where different civilizations, cultures, thoughts coexist in search of mutual understanding, communication and collaboration. It isn't an esthetics of the merging of different traits, but comportment of mutual admiration, each culture preserving its specificity and resonating with others in the harmony of complication.

Certain other Armenian composers as well as not Armenians have used duduk in their compositions. This tendency has widely spread out during the last few years (S. Rostomyan in his third symphony, T. Tagmizyan in a piece for duduk with string quartet, E. Hayrapetyan and R. Altunyan in pieces with chamber orchestra, Joel Bons from Holland in the composition for eastern and western instruments). Compositions with the sound of duduk were performed by such important orchestras and ensembles as London Sinfonietta, Kronos Quartet and others. Gevorg Dabaghyan is frequently invited to play duduk with Atlas Ensemble in Holland in the experimental compositions of Chinese, Italian, Korean, Azerbaijani, Dutch, German composers. In 2007 he successfully premiered with Atlas ensemble Vache Sharafyan's «My Lofty Moon» for Armenian, Chinese, Japanese, Arabic and western instruments in Amsterdam Muziekgebouw.







1 Վերեւի շարքում, մեջտեղում՝ Մարգար Մարգարյան

2 Ռադիոյի եւ հեռուստատեսության ժողգործիքների նվագախումբը: Երրորդ շարքում ձախից երկրորդը՝ Վաչե Հովսեփյան, Լեւոն Մադոյան, Խաչիկ Խաչատրյան













1 մեջտեղում՝ Վաչե Հովսեփյան

2 Ժորա Սիմոնյան  Կարո Չարչօղլյան, Սերգեյ Սիմոնյան

3 ձախից չորրորդը՝ Վաչե Հովսեփյան, հինգերորդը՝ Կարո Չարչօղլյան









4 նստած մեջտեղում՝ Կարո Չարչօղլյան, կանգնած ձախից՝ Հարության Վարդանյան, երրորդը Ժորա Սիմոնյան

5 մեջտեղում՝ Լևոն Մադոյան

6 կանգնած՝ Սերգեյ Սիմոնյան, Վաչե Հովսեփյան, նստած մեջտեղում Կարո Չարչօղլյան



1



2








3

1 Ձերգեւում ձախից աջ՝ Վաչե Հովսեփյան, Կարո Չարչօղլյան

2 Երեւան քաղաքի գործիքային երաժիշտների բյուրո: Նստած են ձախից աջ երրորդը՝ Ժորա Սիմոնյան, Վաչե Հովսեփյան, Լեւոն Ավետիսյան, Վոլոդյա Հարությունյան; Կանգնած աջից երկրորդը Խաչիկ Ավագյան:

3 Լենինականի երկատուղայինների մշակույթի պալատի պարի անսամբլի գործիքային խումբը. Նստած են՝ ձախից չորրորդը Մկրտիչ Մալխասյան

4 Վահե Հովսեփյանը ցուցադրում է հոր դուդուկները եւ շքանշանը

5 Նստած՝ Սողոմոն Սեյրանյան, Վաչե Հովսեփյան, կանգնած՝ վարպետ Գարուշ

6 Վաչե Հովսեփյան, Սերգեյ Կարապետյան, Խաչիկ Խաչատրյան



4





5



6



1



2



3



4




5



1
2
3 Ջիվան Գասպարյանը
4 Գեւորգ Դաբաղյանը Յուրի Բաշմետի հետ
5 Վաչե Շարաֆյանի Ալտի Կոնցերտի աֆիշը /Գեւորգ Դաբաղյանի մասնակցությամբ/






























1 Ատոմ Էգոյան եւ Գեւորգ Դաբաղյան

2 Յո-Յո Մա եւ Գեւորգ Դաբաղյան

3

4 Հայաստանի Ազգային Կամերային Նվագախումբ, դիրիժոր Ա. Ղարաբեկյան

5 Գեւորգ Դաբաղյան, Շարլ Ազնավուր

6 Գարբարեկ եւ Դաբաղյան

7 Գեւորգ Դաբաղյան, Յո-Յո Մա, Վաչե Շարաֆյան

8 Գիդոն Կրեմեր եւ Գեւորգ Դաբաղյան

**ISBN 978-99941-831-1-1**

ՀՏԴ 78.02: 681.81/.82
ԳՄԴ 85.315.3 + 37.27
Մ 918

Դ 918 Դուդուկը.- Եր.: Ակտուալ Արվեստ, 2007, 118 էջ:

Դ $\frac{4905000000}{0096(01)2007}$ 2007 ԳՄԴ 85.315.3 + 37.27

© ................................ / 2007

**խմբագիր**
վաչե շարաֆյան

**մասնագիտական խորհրդատու**
գեւորգ դաբաղյան

**գեղարվեստական խմբագիր**
մկրտիչ մաթեւոսյան

**ակտուալ արվեստ**
մշակութային միություն
**actual art**
culture union
հեռ./tel. 54 12 85; (093) 59 77 25
www.artactual.org
artactual@artactual.org
mmkrtich@yandex.ru

**printed in armenia** at
**gasprint** publishing house

տպագրված է հայաստանում
**իվոլյուքս** սպը տպարանում
093 21 85 63





